

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«----» դեկտեմբերի 2012թ.

N_____Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի զարգացման 2013 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի զարգացման 2013 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Համաձայն Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները: Համաձայն նույն օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Երևանի քաղաքապետը կազմում և ավագանուն է ներկայացնում Երևանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերը:

Հիմք ընդունելով վերը շարադրածը և այն, որ Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները, որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացված «Երևան քաղաքի զարգացման 2013 թվականի ծրագիրը»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

«Երևանի զարգացման 2013 թվականի ծրագիրը» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ
ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևանի զարգացման 2012 թվականի ծրագիրը» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ
ԾՐԱԳԻՐ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Քաղաքաշինություն և ճարտարապետություն	3
Արտաքին ձևավորում և գովազդ	7
Շինարարության և բարեկարգման, ճանապարհաշինության ոլորտ	13
Անշարժ գույքի կառավարում	17
Կոմունալ ոլորտ	19
Առևտրի և սպասարկումների ոլորտ	27
Տրանսպորտ	30
Բնապահպանություն	36
Հանրակրթություն	40
Առողջապահություն	44
Սոցիալական ապահովություն	47
Երեխաների իրավունքների պաշտպանություն	50
Մշակույթ	53
Տուրիզմ	56
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	62
Մասնավոր հատվածի հետ համագործակցություն	66
Միջազգային համագործակցություն	69
Աջափնյակ վարչական շրջան	75
Ավան վարչական շրջան	80
Արաբկիր վարչական շրջան	84
Դավթաշեն վարչական շրջան	88
Էրեբունի վարչական շրջան	92
Կենտրոն վարչական շրջան	97
Մալաթիա-Մեֆաստիա վարչական շրջան	101
Նոր Նորք վարչական շրջան	105
Նորք-Մարաշ վարչական շրջան	109
Նուբարաշեն վարչական շրջան	112
Շենգավիթ վարչական շրջան	115
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	119

Նախաբան

Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից է: Այն հիմնադրել է Արգիշտի Առաջին թագավորը մ.թ.ա. 782թ.: Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, զբաղեցնում շուրջ 227.0 քառ.կմ տարածք: Մահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: Մայրաքաղաքի բնակչությունը կազմում է 1127.3 հազ. մարդ, որը ՀՀ բնակչության 34.0 %-ն է:

Երևանը նաև խոշոր արդյունաբերական, գիտական և մշակութային կենտրոն է: Այն ՀՀ գլխավոր օդային դարպասն է իր երկու՝ «Զվարթնոց» և «Էրեբունի» օդանավակայաններով: Մայրաքաղաքում են գործում Գիտությունների ազգային ակադեմիան և իր էությամբ եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, տասնյակ գիտական հաստատություններ, շուրջ 70 համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոններ և մոտ 60 թանգարան, համերգասրահներ, մարզական կենտրոններ: Այստեղ են գտնվում օտարերկրյա պետությունների դեսպանատները և հյուպատոսությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերը, ֆինանսական հաստատությունները:

Երևանի զարգացման 2013 թվականի ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը, բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ որպես հետևանք երաշխավորելով երևանցիների կյանքի որակի էական բարելավումը:

Երևանը պետք է դառնա էլ ավելի մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի, հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաք:

Հաշվի առնելով Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող ոլորտների հիմնախնդիրներն ու գերակայությունները՝ Երևանի զարգացման 2013 թվականի ծրագիրը նախանշում է այդ ոլորտների և վարչական շրջանների առանձին միջոցառումների պլանավորումը:

2012 թվականին քաղաքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու մայրաքաղաքի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության կենսապայմանների բարելավմանը, բարեկեցիկ ու հարմարավետ միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև Գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով 2010-2013թթ. ծրագրի հիմնադրույթները, բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը և զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կարճաժամկետ կանխատեսումները, Երևանի վարչական շրջանների զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները:

Ծրագիրը ներկայացնում է Երևան քաղաքի ընդհանուր վիճակի բնութագիրը, քաղաքային տնտեսության առանձին բնագավառներում և վարչական շրջաններում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև 2012 թվականին նախատեսված միջոցառումները:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի փողոցաճանապարհային ցանցի կատարելագործման նպատակով 2012թ. վերակառուցվել և շահագործման են հանձնվել

- Դավիթ Բեկ փողոցը
- Բագրևանդ և Երիտասարդական փողոցները
- Գլխավոր պողոտայի վերակառուցում՝ Մարյան-Եզ. Կողբացի, Արամ-Բուզանդ փող. հատվածները
- Հյուսիսային պողոտա-Տերյան-Պուշկին-Լալայանց փողոցների հատվածը
- «Հյուսիսային ճառագայթ» թաղամասի առանցքով՝ «Հայաստան» հուշահամալիրից դեպի Բաբայան փողոց ճանապարհի մասնակի կարգավորում

Հետիոտնային անցումներ

Հետիոտնի անվտանգ տեղաշարժման և տրանսպորտի անարգել աշխատանքի ապահովման նպատակով համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում 2012թ. կառուցվել են թվով 7 վերգետնյա հետիոտն.

1. Խանջան փողոցում՝ Չայկովսկու փողոցի հետ հատման մասում (դպրոցի մոտ)
2. Հալաբյան փողոցում՝ Արզումանյան փողոցի խաչմերուկ
3. Ազատության պողոտայում
4. Մյասնիկյան պողոտայի և Աճառյան փողոցի հատման մասում
5. Իսակովի պողոտայում (նոր կառուցված հեծանվահրապարակի մոտ)
6. Լենինգրադյան փողոցում՝ («Մեքաստիա» մանկապարտեզի մոտ)
7. Արշակունյաց պողոտայում՝ «Սուրմալու» առևտրի կենտրոնի մոտ

2013թ. նախատեսվում է վերգետնյա հետիոտն անցումների իրականացման համար նախագծային փաթեթների կազմում և դրանց հիման վրա շինարարության իրականացում (թվով 8 հատ):

2012թ. Երևանի քաղաքապետի կողմից արձանների համար հայտարարված մրցույթներ և քաղաքում տեղադրված արձաններ

1. Ալեքսանդր Մանթաշյանցի (հայ մեծանուն բարերար) հուշարձանը տեղադրվել է Աբովյան փողոցի հ.17 շենքի դիմաց (03.04.2012թ. հ.3001-Ա Երևանի քաղաքապետի որոշում):

2. Հայ գրատպության 500-ամյակին նվիրված «Վարք հավերժության» քանդակը տեղադրվել է Մոսկովյան-Տերյան փողոցների խաչմերուկին հարակից տարածքում (25.04.2012թ. հ.3498-Ա Երևանի քաղաքապետի որոշում տեղադրման մասին): Հեղինակն է ֆրանսաբնակ քանդակագործ Դավիթ Երևանցին: Քանդակը խորհրդանշում է Մատենադարանի ամենամեծ ձեռագիրը՝ «Մշո ճառընտիրը» փրկելու պատմությունը: Նզի նվիրատվություն է արվել Երևան քաղաքին:

3. Թերեզա Միրզոյանի «Միրում է, չի սիրում» քանդակի վերաբացում:

Քանդակի բնօրինակը ձուլված է եղել դրվագման եղանակով, 21 տարի առաջ այն ջարդվել է և 2012թ. Երևանի քաղաքապետարանի և հեղինակի ընտանիքի կողմից վերականգնվել է բրոնզաձուլ տարբերակը ու վերատեղադրվել Աբովյան փողոցում: Թերեզա Միրզոյանի դուստրը և քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը քանդակը վերականգնել են բնօրինակի էսքիզներով:

4. Գարեգին Նժդեհի հուշարձանի վերաբերյալ 2012թ. կայացել է նոր մրցույթ (Երևանի քաղաքապետի կարգադրություն N609-Ա 01.12.2011թ. մրցութային հանձնաժողովի ստեղծման մասին):

5. Կարեն Դեմիրճյանի հուշարձանի վերաբերյալ կայացել է մրցույթ (Երևանի քաղաքապետի կարգադրություն N461-Ա.07.09.2011թ. մրցութային հանձնաժողովի ստեղծման մասին, մրցույթը կայացել է 2012թ.):

6. Գրատպության 500-ամյակին նվիրված տեղադրվել է խորհրդանշող հուշաքանդակ Կոբյունի և Մոսկովյան պուրակի հատման մասում (հեղինակ-քանդակագործ Դավիթ Մինասյան):

2012թ. ավարտվել և շահագործման են հանձնվել.

- Սալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում «Դավա Գարդեն մոլ» բազմաֆունկցիոնալ համալիրը, ավելի քան 45.500 քմ տարածքով, որն ունի առևտրային գոտի ինչպես նաև ներառում է ժամանցի գոտի, կինոթատրոններ, մանկական խաղահրապարակ, սրճարաններ և հիպերմարկետ:

- Նոր Նորք վարչական շրջանի Ֆրիտյոֆ Նանսենի անվան զբոսայգում Նանսենի թանգարանը, որը հանձնվելու է Երևանի քաղաքապետարանին, որպես մշակութային օջախ և շահագործվելու է Ֆ. Նանսենի անվան հիմնադրամի կողմից: Զբոսայգում կկառուցվի նաև եկեղեցի:

2012թ. շարունակվել են շինարարական աշխատանքները.

- Աբովյան փող. հ.15 հասցեում գտնվող Կաթողիկե եկեղեցու համալիրի շինարարություն (Համագործակցություն)
- Մելիք Ադամյան փողոցի և դրա շարունակությամբ Բուզանդի փողոցի հարակից տարածքի կառուցապատում

2012 թվականին մեկնարկել են.

- Հ.Թումանյան և Ա.Պետրոսյան, Նալբանդյան փողոցների հարող հատվածում քաղաքաշինական ներդրումային ծրագիրը (բազմաբնակարան շենքի կառուցմամբ)

- Ծիծեռնակաբերդի զբոսայգում Մեծ Եղեռնի զոհերին նվիրված հուշահամալիրի Հայոց ցեղասպանության թանգարանի վերակառուցման և ընդարձակման աշխատանքները

- Կոմիտասի անվան պանթեոնի տարածքին կից նախկին մշակութային պալատի շենքի վերակառուցմամբ «Կոմիտաս-թանգարան» մշակութային կենտրոնի ստեղծման աշխատանքները

Երևան քաղաքի վարչական շրջաններում հանգստի գոտիների ստեղծում

- Աջափնյակ վարչական շրջանում՝ Հանրապետական հիվանդանոցի լճի և հարակից տարածքում ստեղծվել է հանգստի գոտի և հանձնվել է շահագործման

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Քաղաքաշինական ծրագրային և նախագծային փաստաթղթերի ստեղծում

- Երևանի գլխավոր հատակագծի իրականացման ընթացքի ուսումնասիրություն, հաշվառում, ճշգրտում (18 մլն դրամ՝ 2013թ.)

- Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծում և ներդրում (տեխնիկական նախագիծ - 4.5 մլն դրամ՝ 2013թ.)

Ճանապարհատրանսպորտային ցանցի կատարելագործում

- Երևան քաղաքի համալիր տրանսպորտային սխեմա (սխեմայի մշակման ծրագիր, հետազոտություն, ուրվագծի վերջնական մշակում՝ 2013-2014թթ.)

- Երևան քաղաքի երթևեկության կազմակերպման սխեմա՝ 2013թ.

Կշարունակվեն 2012թ. սկսված Երևան քաղաքի նախագծային ճանապարհների և փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները.

Երևանի կենտրոնը տարանցիկ տրանսպորտի միջոցներից բեռնաթափելու նպատակով *Ասիական զարգացման բանկի և նրա փորձագետների հետ* ձեռնարկվել ու ընթանում են աշխատանքներ Երևանի կենտրոնը շրջանցող մի քանի մայրուղիների և դրանց առանձին հանգույցների շինարարության համար:

1. Շիրակի փողոցից մինչև Արտաշատի խճուղի միջպետական նշանակության մայրուղի (մայրուղու երկարությունը՝ 4340 մետր, անցուղիները՝ 995 մետր, ընդհանուրը՝ 5335 մետր).

2. Արգավանդը Շիրակ փողոցի հետ կապող ճանապարհ (մայրուղու երկարությունը՝ 1300 մետր, անցուղիները՝ 800 մետր, ընդհանուրը՝ 2100 մետր) Այս ճանապարհի հարցի հետ կից ներկայացվել է «Կարմիր բլուր» բնակատեղիի թանգարանացման ուղղությամբ էքսիզատաջարկ, որպես պատմության և մշակույթի հուշարձանների տարածքների պահպանման ուղղությամբ իրականացվող միջոցառում.

Կշարունակվեն 2012թ. սկսված Երևան քաղաքի ճանապարհների շինարարական աշխատանքները

1. «Ալմաստ» գործարանի ե/գ կայարանի հարակից տարածքի ճանապարհ
2. Իսակովի պողոտա-Լենինգրադյան փողոց

Քաղաքաշինական կառուցապատման ծրագրեր

Քաղաքաշինական համալիրների կառուցման նպատակով առանձնացվել են հետևյալ ծրագրերը.

1. «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայր
2. Հանրապետության, Բուզանդ, Խանջյան փողոցներով և Տ.Մեծ պողոտայով պարփակված տարածք (30-րդ թաղամաս)
3. Պուշկին, Տերյան, Եգ. Կողբացի և Հին Երևանցու փող. պարփակված տարածք
4. Նալբանդյան, Պուշկին և Աբովյան փողոցներով և Սախարովի հրապարակով պարփակված տարածք
5. Պողոտյան, Դ.Դեմիրճյան փողոցներով և Սիրահարների զբոսայգուն հարակից տարածք (Կոզեռն)
6. Գլխավոր պողոտայի կառուցապատվող անավարտ հատվածներ
7. «Ռենշին» ՍՊԸ-ի միջոցների հաշվին կֆինանսավորի պետության կարիքների համար ձեռք բերվող Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի «Չարենց» N 2 շրջանային ջերմային հանգույցի հարևանությամբ գտնվող՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի համար ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության նախագծով կառուցված անավարտ շենքի շինմոնտաժային աշխատանքների իրականացումը:

Քաղաքաշինական կառուցապատման ծրագրերի շարունակություն

- Հյուսիսային պողոտայի ամբողջական եզրափակիչ վերակառուցում
- Հյուսիսային ճառագայթի եզրափակիչ կառուցապատումներ (2013-2014թթ.)
- Գլխավոր պողոտայի եզրափակիչ փուլով կառուցապատումներ
- Ազատության պողոտայի և Ն.Զարյան փողոցով պարփակված տարածքի կառուցապատում
- «Կոնդ» թաղամաս

- Կրկեսին հարակից տարածք

Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի ճարտարապետության հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա նախատեսվող կառուցապատման ծրագրերի իրականացում

- Շահումյան հրապարակին հարող՝ Վ.Սարգսյան, Դեղատան և Մ.Խորենացու փողոցների միջև «Ամերիաբանկ»-ի համալիր
- Վ.Սարգսյան հ.3 հասցեում նախկին ՀՀ արդարադատության նախարարության շենքի տեղում նոր վարչական շենքերի համալիր (ԱԳՆ-ի նոր շենքը ներառյալ)
- Մելիք Ադամյան փողոցի կառուցապատման նախագծի իրականացում («Հին Երևան»-ի ճարտարապետական սկզբունքներով)
- Ծ.Բասկովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող նոր կառուցվող ճանապարհի աջակողմյան հատվածի կառուցապատման նախագծի մշակում
- Հանրապետության հրապարակի և կից տարածքների քաղաքաշինական խնդիրների բացահայտման, առաջադրման նպատակով հայեցակարգային մրցույթի կազմակերպման աշխատանքներ 2012-2013թթ.
- Դավթաշեն կամրջի մուտքային հատվածների կառուցապատումներ
- Խ.Աբովյանի պուրակի հանգույցին հարակից տարածքների կառուցապատում
- Գլխավոր պողոտայի Սարյան փողոցին հարող հատվածում մշակութային նշանակության կառույցների շինարարություն

2013թ. քաղաքաշինական խնդիրների վերաբերյալ կազմակերպվող միջոցառումներ

1. Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորման համար օրենքի նախագծի մշակման աշխատանքներ
2. ԱՊՀ-երկրների գլխավոր ճարտարապետների ասոցիացիայի նիստի անցկացում Երևանում
3. 2013թ. Ֆրանսիայում նախատեսվող ցուցահանդեսին Երևան քաղաքի ներդրումային ծրագրերի ներկայացում Փարիզի քաղաքապետարանում

Երևանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկություններով (մրցույթներով և աճուրդներով) տրամադրման և օտարման նպատակով 2012թ. նախապատրաստվել են թվով 378 փաթեթներ (այդ թվում 367 հատ աճուրդ, 11 հատ մրցույթ):

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

2012 թվականին իրականացված ծրագրեր

2012թ. Երևան քաղաքում վարչության նախաձեռնությամբ իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 37-Ն որոշման մեջ մի շարք փոփոխություններ, ինչի արդյունքում հնարավոր է դարձել կանոնակարգել, արդիականացնել գովազդային դաշտը, ինչպես նաև ընդունվել են նոր չափորոշիչներ էլեկտրոնային էկրանների տեղադրման համար:

Իրականացվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ, որի արդյունքում Երևանի քաղաքապետը իրավասու է գովազդատուներին, գովազդ արտադրողներին և գովազդակիրներին ենթարկել վարչական պատասխանատվության «Գովազդի մասին» ՀՀ օրենքի խախտման և Երևան քաղաքի ավագանու 37-Ն որոշման պահանջները չկատարելու դեպքերում:

Արգելվել է Երևան քաղաքի փողոցներում կրկնաձիգ գրաժապավենների միջոցով իրականացվող գովազդը, բացառությամբ համապետական, համաքաղաքային նշանակության միջոցառումների ազդարարման նպատակով կարճաժամկետ տեղադրման դեպքերի: Շենք-շինությունների ճակատային հատվածների վրա թույլատրելի գովազդի տեղադիրը, չափագունային լուծումները կորոշվեն ըստ համապատասխան սխեմայի:

Երևանի 2012 թվականի բարեկարգման ծրագրի շրջանակում, մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում, իրականացվել են 7 վերգետնյա անցումների շինարարություն, իսկ որպես փոխհատուցում՝ ներդրողներին տրամադրվել են գովազդային տարածքներ վերգետնյա անցումների վրա:

Երևան քաղաքի շենքերի արտաքին տեսքի բարելավման նպատակով շենքերի տանիքներից ու պատերից ապամոնտաժվել են հնաճ, ոչ արդիական գովազդային միջոցներ:

Երևան քաղաքի բանուկ հատվածներում ներդրողների միջոցներով տեղադրվել են նորաճ գովազդային կրիչներ, որոնցով ցուցադրվում են մշակութային միջոցառումների մասին ազդարարող նյութեր:

Գովազդային հանրության հետ համատեղ կազմակերպվել է «Պոպոք» միջազգային գովազդի փառատոնը, որին մասնակցեցին գովազդային և դիզայներական կազմակերպություններ ավելի քան 15 պետությունների և Հայաստանի առաջատար գովազդային և դիզայներական կազմակերպությունները: Փառատոնի շրջանակներում հայտարարվեց միջազգային բաց միջույթ 3 անվանակարգերում՝

- Երևան քաղաքի զբոսաշրջային լոգոտիպի պատրաստում
- Երևան քաղաքի արտաքին ձևավորման հայեցակարգի մշակում
- Երևան քաղաքի գովազդային հայեցակարգի մշակում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2013թ.-ի I-ին կիսամյակում, որի հիման վրա կմշակվի վերը նշված անվանակարգերում հետագա քաղաքականությունը:

Մայրաքաղաքում տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների պատշաճ կազմակերպման նպատակով իրականացվել են քաղաքի արտաքին ձևավորման մի շարք աշխատանքներ:

2011-2012թթ. ամանորյա տոնական միջոցառումների հետ կապված վարչական շրջաններում տեղադրվել 9 արհեստական տոնաձառեր և Հանրապետության Հրապարակի Մայր տոնաձառը, ինչպես նաև իրականացվել են 3D շոու-ծրագրեր:

Սուրբ Սարգսի տոնին նվիրված տոնակատարությունների շրջանակում Կարապի լճի շրջակայքում տեղադրվել է սառցե սրտաձև քանդակ:

Ապրիլի 24-ին՝ Եղեռնի հուշահամալիրում իրականացվել են սգո տոմբաներով և լույսերով ձևավորման աշխատանքները:

«Մոսկվայի օրերը Երևանում» և «Սանկտ-Պետերբուրգի օրերը Երևանում» ծրագրերի շրջանակներում իրականացվել են ձևավորման և գովազդային ազդարարման աշխատանքներ:

«Երևանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների շրջանակում Երևան քաղաքում իրականացվել է դրոշակազարդում, գովազդային վահանակների և վարչական շրջանների շենքերի խուլ պատերի վրա իրականացվել են թեմատիկ վահանակների տեղադրման աշխատանքներ, ինչպես նաև մի շարք կամարանցումներում հայտնի գրողների պատկերներով նկարազարդման աշխատանքներ:

Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային տոնի կապակցությամբ իրականացվել են ձևավորման աշխատանքներ, ինչպես նաև «Ամերիաբանկ»-ի հետ համատեղ իրականացվել է «Երազանքների պատ» ծրագիրը:

Երևան հրավիրվեց համաշխարհային վարպետ Նիկոլայ Արնդտը, ով Շ. Ազնավուրի անվան հրապարակում նկարեց առաջին 3D պատկերը, իսկ երկրորդ 3D պատկերը նկարվեց արդեն հայ մասնագետների կողմից՝ Կարապի լճի հարևանությամբ:

Ամռան և աշնան ընթացքում Կարապի լճում տեղադրվեց մեծ էկրան, որի միջոցով ցուցադրվում էին տարբեր համերգային ծրագրեր, ինչպես նաև լուսաբանվում էին տարատեսակ համաքաղաքային և մշակութային միջոցառումներ:

«Մեր հանճարները մեր կողքին են» նախագծի շրջանակում նստարաններին են տեղադրվել հայ մեծանուն արվեստագետների նորաճ քանդակները, որոնք իրենց հերթին հասցրել են դառնալ երևանցիների և քաղաքի հյուրերի սիրելի լուսանկարվելու վայրեր, ինչպես նաև համարվել են արտաքին ձևավորման նորարարական միջոց:

ՀՀ Անկախության օրվան նվիրված միջոցառումների շրջանակում Երևան քաղաքի մի շարք փողոցներում, ինչպես նաև վարչական շրջանների կենտրոնական փողոցներում իրականացվել են տոնական ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ:

Հայ շախմատիստների օլիմպիական չեմպիոն դառնալու կապակցությամբ Երևան քաղաքում իրականացվել են տոնական ձևավորման և գովազդային միջոցներով իրազեկման աշխատանքներ:

«Էրեբունի-Երևան» տոնակատարությունների շրջանակներում իրականացվել են Երևանի կենտրոնի, վարչական շրջանների գլխավոր փողոցների, ինչպես նաև թվով 7 կամուրջների դրոշակազարդման աշխատանքներ: Իրականացվել են նաև Երևան քաղաքի կանգառասրահների, քաղաքային տրանսպորտային միջոցների, Երևան քաղաքի մուտքերի ձևավորման աշխատանքներ:

2012թ. Երևան քաղաքում պատրաստվել և տեղադրվել են անվճար հայտարարությունների համար նախատեսված ցուցատախտակներ, որի նպատակն էր Երևանում քաղաքացիներին հնարավորություն տալ տեղադրել անվճար հայտարարություններ, ինչն էլ իր հերթին մի շարք վարչարարական գործողությունների հետ միասին նպաստում է շենքերի պատերն և էլեկտրասյուներին փակցված հայտարարությունների նվազեցմանը, այնուհետև վերացմանը:

Երևան քաղաքում 2012թ. ընթացքում իրականացվել է դրոշների սպասարկման ծրագիրը: Թվով 500 դրոշակահենակների և քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների, դպրոց-մանկապարտեզների մոտ տեղադրված ՀՀ դրոշներ փոխվել են ամսական 2 անգամ:

Իրականացվել են 10 և 20 մ թվով 78 հատ նոր դրոշակահենակների պատրաստման և տեղադրման աշխատանքներ:

2012թ. Հայաստանի Հանրապետություն Բուլղարիայի, Ավստրիայի և Թուրքմենստանի նախագահների այցերի կապակցությամբ իրականացվել են դրոշակազարդման աշխատանքներ:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Երևանի քաղաքապետարանը արտաքին ձևավորման և գովազդի ոլորտում 2013 թվականին իրականացնելու է մի շարք ծրագրեր 2 հիմնական ուղղություններով՝

ա) արտաքին ձևավորում

բ) արտաքին գովազդ

Արտաքին ձևավորման ծրագիր

1. Տոնական ձևավորման հայեցակարգի մշակում

Երևանում տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների նախապատրաստման աշխատանքները կրում են կամայական բնույթ, իսկ ձևավորման ենթակա օբյեկտների ընտրությունը հիմնված չէ որևէ սկզբունքի վրա:

Առկա խնդրի լուծման նպատակով կարևորվում է տոնական ձևավորման հայեցակարգի մշակումը, որով կսահմանվեն վերոնշյալ տոն օրերին արտաքին ձևավորման ընդհանուր կանոնները, կմատնանշվեն այն հիմնական վայրերը, որոնք ենթակա են ձևավորման, ինչպես նաև կորոշվեն արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջները: Հայեցակարգը կսահմանի նաև ընդհանուր դրույթներ՝ տոնական ձևավորման նախագծային և իրականացման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Հայեցակարգի մշակման աշխատանքների իրականացման բաց միջազգային մրցույթը հայտարարվել է 2012թ. նոյեմբերի 15-ին, իսկ արդյունքները կամփոփվեն 2013թ. ապրիլին:

Տոնական ձևավորման աշխատանքները պատշաճ կատարելու համար Երևանի 2013 թվականի բյուջեով նախատեսված է 150.000,0 հազ. դրամ:

2. Պաշտոնական և պետական այցերի ժամանակ ձևավորման հայեցակարգի մշակում

Ինչպես տոնական ձևավորումը, այնպես էլ պաշտոնական և պետական այցերի ժամանակ իրականացվող ձևավորումը ներկա դրությամբ ունի մի շարք խնդիրներ: Մասնավորապես, սովորաբար կիրառվող դրոշակագարդարումն այս պահին համարվում է ձևավորման ոչ արդյունավետ միջոց, քանի որ ծառերի պատճառով դրոշակները գրեթե չեն երևում: Այդ պատճառով անհրաժեշտ է նախագծել նոր կառուցվածքներ և իրականացնել դրանց տեղադրումը համապատասխան երթուղիներում:

3. Մշակութային և տուրիստական ցուցանակների տեղադրում

Արտաքին ձևավորման գործում առանձնահատուկ կարևորություն ունի ոչ թե գեղագիտական, այլ ֆունկցիոնալ ձևավորումը: Մասնավորապես, տուրիստական ներհոսքի ծավալների աճի հետ զուգահեռ մեծանում է նրանց համար համապատասխան միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը, ինչի կարևորագույն մաս են կազմում փողոցներում թանգարանների, թատրոնների, մարզամշակութային այլ օջախների ցուցանակները: Թեպետ Երևանում տեղադրված են բազմաթիվ ցուցանակներ, այնուամենայնիվ հարկ է նշել, որ քաղաքում դրանց տեղաբաշխումը, ցուցանակների վրա նշված վայրերի ընտրությունը համակարգային բնույթ չեն կրում և չեն համապատասխանում տուրիստական զարգացման սկզբունքներին: Այդ պատճառով անհրաժեշտ է վերանայել քաղաքում ցուցանակների տեղաբաշխումը, դրանց դիզայնը, քանակը, չափսերը, բովանդակությունը և այլն՝ դարձնելով դրանք առավել օգտակար և օգտագործելի թե՛ զբոսաշրջիկների, թե՛ Երևանի բնակիչների կողմից: Նշված միջոցառման իրականացման համար անհրաժեշտ կլինի մշակել համապատասխան հայեցակարգ, որի արդյունքները նույնպես կամփոփվեն 2013 թվականի առաջին կիսամյակում:

4. Նոր դրոշների տեղադրում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի յուրաքանչյուր վարչական շրջանում բնակիչների պատշաճ հանգիստն ապահովելու համար նախատեսվում է կազմակերպել հանգստյան համապատասխան գոտիներ, որոնք հատկապես ակտիվ կլինեն տոնական օրերին, արտաքին ձևավորման տեսանկյունից անհրաժեշտ է իրականացնել այդ հանգստյան գոտիներում և հարակից տարածքներում գտնվող սյուների վրա կամ այլ տեղերում դրոշակների տեղադրում: Այս աշխատանքները հնարավորություն կտան տոն օրերին ձևավորել ոչ միայն Կենտրոն վարչական շրջանը, այլ նաև մնացած շրջանները՝ նպաստելով Երևան քաղաքի առավել համաչափ զարգացմանը: Այս նպատակով Երևանի 2013 թվականի բյուջեի միջոցների հաշվին նախատեսվել է 84.000,0 հազ. դրամ:

5. Մասնավոր ընկերությունների միջոցներով Երևանի դրոշների տեղադրում

Արտաքին միջավայրի զարգարումը պետք է իրականացվի ոչ միայն տոնական օրերին: Այս առումով կարևորվում է մասնավոր ընկերությունների ներգրավումը նշված գործընթացում, որոնց կարող է հետաքրքրել լրացուցիչ գովազդային մակերեսի տեղադրումը՝ նույնպես դրոշի տեսքով: Ընկերության դրոշի տեղադրման դեպքում ընկերությունը կպարտավորվի տեղադրել նաև Երևան քաղաքի դրոշը, և որպես հետևանք մասնավոր և հանրային շահերի համադրումը հնարավորություն կտա Երևան քաղաքի տարբեր վայրերում ունենալ արտաքին ձևավորման լրացուցիչ տարբեր:

6. Ձևավորման նոր տարրերի օգտագործում

Ի լրումն քաղաքի ձևավորման ավանդական միջոցների, անհրաժեշտ է դիտարկել արտասահմանում լայն տարածում ստացած ձևավորման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են շենքերի ֆասադային հատվածների պատումը բուսականությամբ և կերամիկական խճանկարով, որոնք կարող են օգտագործվել թե՛ որպես քաղաքային միջավայրի գեղագիտական տարր, թե՛ որպես ոչ բարեհաճ ֆասադային հատվածների քողարկման կամ գունազարդման միջոց: Բացի դրանից, կերամիկական խճանկարի օգտագործումը կարող է օգտագործվել նաև լայն զանգվածներին՝ Երևանի բնակիչներին և զբոսաշրջիկներին, հայ նկարիչների հայտնի ստեղծագործությունները ներկայացնելու նպատակով: Բացի դրանից, վերջերս թե՛ Հայաստանում, թե՛ հատկապես արտասահմանում լայն տարածում է գտել սթրիթ արթը, որը, ի լրումն այլ տարրերի, ներառում է նաև 3D նկարներն ու թեմատիկ նկարների շարքերը: Կարևոր է նշել, որ սթրիթ արթը, գեղագիտական նշանակությունից բացի, կարող է ունենալ նաև կրթական նշանակություն: Ինչպես և կերամիկական ձևավորման դեպքում, այնպես էլ սթրիթ արթի միջոցով հնարավոր է ներկայացնել արվեստի հայտնի գործեր, անվանի մարդկանց մտքեր և այլն: Այդ պատճառով պետք է առաջին հերթին դիտարկել կրթական հաստատությունների մոտակայքում սթրիթ արթի տարրերի կիրառումը:

Նախատեսվում է նաև Կենտրոն վարչական շրջանի մի շարք կենտրոնական փողոցներում գտնվող շենքերի շքամուտքերը զարդարել այդ փողոցին համապատասխանող լապտերներով, ինչը նույնպես կունենա և՛ գեղագիտական, և՛ ֆունկցիոնալ նշանակություն:

2013 թվականի ընթացքում նախատեսվում է փողոցի կողմից գտնվող 200 շքամուտքի զարդարում:

7. Ցուցատախտակների տեղադրում

Քաղաքի արտաքին ձևավորումը զգալիորեն վատթարացնող երևույթներից են հայտարարությունները, որոնք փակցվում են շենքերի պատերին, սյուներին և երևացող այլ վայրերում: Նշված խնդիրը լուծելու համար քաղաքում արդեն իրականացվում են հայտարարությունների համար նախատեսված ցուցատախտակների տեղադրման աշխատանքները, և նախատեսվում է դրանք շարունակել 2013 թվականի ընթացքում՝ ապահովելով ցուցատախտակների առկայություն բոլոր 12 վարչական շրջաններում:

Արտաքին գովազդի ծրագիր

1. Երևան քաղաքի տարբերանշանի և բռենդբուքի ստեղծում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններից մեկն է Երևանի՝ որպես տուրիստական քաղաքի զարգացումը, խիստ կարևոր է դառնում մուտք գործող արտասահմանցիներին քաղաքի դրական կողմերի ճիշտ ներկայացումը, ինչն իրենից ներկայացնում է համապատասխան մարքեթինգային և PR քաղաքականության իրականացում: Նման քաղաքականությունների առաջին բաղադրիչը սովորաբար լինում է ճիշտ տարբերանշանի ընտրությունը և մարքեթինգային այլ տարրերի մշակումը, որոնք ամփոփվում են այսպես կոչված բռենդբուքում: Քանի որ ամբողջ մարքեթինգային և PR քաղաքականությունը հետագայում հիմնվելու է այդ բռենդբուքում ներառված բաղադրիչների վրա, պետք է առանձնահատուկ կարևորություն ու ուշադրություն դարձնել այս աշխատանքներին՝ ներգրավելով բարձրակարգ մասնագետների, որի նպատակով 2012 թվականի նոյեմբերի 15-ին հայտարարվել է Երևան քաղաքի տարբերանշանի և բռենդբուքի մշակման մրցույթ: Մրցույթի արդյունքները պատրաստ կլինեն 2013 թվականի ապրիլին:

2. Արտաքին գովազդի հայեցակարգի մշակում

Վերջին տարիներին արտաքին գովազդի ոլորտի կարգավորման բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացումը հնարավորություն է տվել նվազեցնել օրենքի խախտման դեպքերը, ավելացնել քաղաքի բյուջեի մուտքերը, փոխշահավետ համագործակցություն իրականացնել ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ և այլն: Այնուամենայնիվ նշված զարգացումները երբեմն կրում էին ոչ համակարգված բնույթ՝ հիմքում չունենալով զարգացման երկարաժամկետ տեսլական:

Այդ պատճառով 2013 թվականի գերակայություններից մեկը պետք է լինի Արտաքին գովազդի ոլորտի հայեցակարգի մշակումը, որը կսահմանի ընդհանուր սկզբունքներ քաղաքում ըստ գոտիների գովազդային վահանակների չափերի և տեղերի հաստատման, գովազդային տարածքի տրամադրման միջոցով քաղաքային լրացուցիչ տարրերի տեղադրման, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի դրույթների իրականացումը ապահովող վերահսկողության արդյունավետության բարձրացման, քաղաքում նոր գովազդային կրիչների կիրառման խթանման և այլնի վերաբերյալ: Հայեցակարգի մշակման աշխատանքներն իրականացնելու համար 2012 թվականի նոյեմբերի 15-ին հայտարարվել է մրցույթ, որի արդյունքները կամփոփվեն 2013 թվականի առաջին կիսամյակում:

3. Մասնավոր ընկերությունների գովազդային վահանակների համար ընդհանուր կանոնների սահմանում

Արտաքին գովազդի ոլորտում առկա կարևորագույն խնդիրներից է մասնավոր ընկերությունների կողմից տարբեր ձևի և չափի գովազդային վահանակների տեղադրումն իրենց ընկերության մուտքի վերևում: Քանի որ ներկայումս չկա համապատասխան միասնական ձև՝ սահմանված մասնավոր ընկերությունների վահանակների համար, որոշ փողոցներ կարող են կորցնել իրենց գեղագիտական հմայքը այդ վահանակների բազմազանության հետևանքով: Այդ պատճառով անհրաժեշտ է սահմանել ընդհանուր կանոններ՝ մասնավոր ընկերությունների մուտքերին փակցվող գովազդային վահանակների համար, որոնք հաշվի կառնեն յուրաքանչյուր փողոցի կամ հատվածի առանձնահատկությունները:

4. Տուրքի հավաքագրման օպտիմալացում

Արտաքին գովազդի կարգավորման և հատկապես արտաքին գովազդի պետական տուրքերի հավաքագրման ոլորտում խիստ կարևոր է արդյունավետ վերահսկողության իրականացումը, որը հնարավորություն է տալիս ավելացնել հավաքագրման ենթակա

տուրքերի ծավալը և նվազեցնել դա իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները: Արդյունավետ վերահսկողության համար առաջին հերթին 2012 թվականի ընթացքում իրականացվել է ամբողջ գովազդային մակերեսի գույքագրում, ինչը հնարավորություն կտա 2013 թվականին առավել օպտիմալ ձևով կազմակերպել ստուգումները և տուրքերի հավաքագրումը: Բացի դրանից, 2012 թվականին առանց համապատասխան թույլտվության գովազդային վահանակ տեղադրող ընկերությունը տուգանելու հնարավորությունը նույնպես հնարավորություն կտա խստացնել վերահսկողությունը և նվազեցնել ապօրինի տեղադրված գովազդային վահանակների քանակը՝ դրանով ավելացնելով քաղաքի բյուջեի մուտքերը:

5. Օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում

Այս ոլորտում կարգավորումն ավելի արդյունավետ իրականացնելու համար 2013 թվականի ընթացքում պետք է իրականացնել մի շարք օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, քաղաքում նոր գովազդային միջոցների՝ էլեկտրոնային էկրանների կիրառումը անհրաժեշտություն է առաջացնում վերանայել ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային էկրանում կարելի է տեղադրվել զգալիորեն ավելի շատ գովազդ, քան հասարակ գովազդային վահանակների դեպքում, ուստի դրանցից գանձվող արտաքին գովազդի տեղական տուրքի ծավալները նույնպես պետք է զգալիորեն ավելի մեծ լինեն: Սա նշանակում է, որ պետք է սահմանել լրացուցիչ գործակից էլեկտրոնային էկրանների համար: Միննույն ժամանակ անհրաժեշտ է մշակել համապատասխան ընթացակարգ էլեկտրոնային կրիչների գովազդային վիդեոնյութերի նախօրոք հաստատման համար, ինչը հնարավորություն կտա առավել վերահսկելի դարձնել դաշտը և բացառել «Գովազդի մասին» ՀՀ օրենքին չհամապատասխանող գովազդային նյութերի տեղադրումը: Առաջարկվող հաջորդ օրենսդրական փոփոխությունը պայմանավորված է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և «Լեզվի մասին» ՀՀ օրենքի միջև եղած էական հակասությամբ: Անհրաժեշտ է հստակ սահմանել և տարանջատել «ցուցանակ» և «գովազդային վահանակ» հասկացությունները՝ տնտեսվարողների կողմից երկակի մեկնաբանությունը բացառելու համար:

6. Գովազդային մակերեսի տրամադրման միջոցով քաղաքային նոր տարրերի տեղադրում

2012 թվականի փորձը ցույց տվեց, որ մասնավոր ընկերությունների համար համապատասխան ներդրումային պայմաններ ստեղծելու միջոցով հնարավոր է ապահովել նրանց մասնակցությունը թե արտաքին ձևավորման, թե արտաքին գովազդի, և թե այլ ուղղություններով իրականացվելիք քաղաքային զարգացման բազմաթիվ ծրագրերի: Արտաքին գովազդի ոլորտում մասնավոր-հանրային առավել արդյունավետ համագործակցություն կարող է լինել գովազդային մակերեսի տրամադրման միջոցով քաղաքային տարրեր նոր տարրերի տեղադրումն ու կառուցումը: Այսպես, 2012 թվականի ընթացքում նման համագործակցության լավագույն փորձը գովազդային մակերեսի տրամադրման դիմաց 7 նոր վերգետնյա անցումների կառուցումն է: Նախատեսվում է 2013 թվականի ընթացքում Երևանի բանուկ փողոցներում կառուցել ևս 8 վերգետնյա անցում: Հարկ է նշել, որ այս ճանապարհով հնարավոր է ներգրավել ներդրումներ՝ բազմաթիվ այլ տարրերի՝ ժամացույցների, նստարանների, ցուցանակների, բիո զուգարանների և այլնի տեղադրման համար:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Երևան քաղաքի ջրային կառույցների սպասարկում և շահագործում

Երևանի ջրային կառույցների հաշվեկշռում են Հանրապետության Հրապարակի շատրվանները, «Կարապի լիճ» ջրավազանը, Օղակաձև զբոսայգու 3-6-րդ հատվածների 8 շատրվանները, «Հաղթանակ» զբոսայգու արհեստական լիճը, Գետառ, Ջրվեժ և Ողջաբերդ գետերը:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող 33 ջրային կառույցներից 5-ը շահագործման ընթացքում ֆիզիկապես և բարոյապես մաշվել են և ներկայումս չեն գործում, թվով 13 ջրային կառույցները պահանջ ունեն մաքրման և նորոգման:

2012թ. վերանորոգվել և վերագործարկվել են թվով 5 շատրվաններ՝ Գարեգին Նժդեհի հրապարակի, Հանրապետության Հրապարակի մետրոյի կայարանների, Շարլ Ազնավուրի հրապարակում («Մոսկվա» կ/թ մոտ), Գլխավոր պողոտայի և Օղակաձև այգու:

Հիմնախնդիր. անսարք ջրային կառույցների առկայություն

Այս հիմնախնդրի լուծման նպատակով Երևանի քաղաքապետարանը շարունակելու է համագործակցությունը մասնավոր հատվածի հետ:

Երևանի քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող թվով 24 ջրային կառույցների շահագործման և ընթացիկ նորոգման համար Երևան քաղաքի 2013թ. բյուջեից նախատեսվել է 320.0 մլն դրամ:

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, մշակում, փորձաքննության աշխատանքների իրականացում

2014թ. շինարարության և բարեկարգման ոլորտի հետ առնչվող ծրագրերի (փողոցների վերակառուցման, հենապատերի, եզրաքարերի վերանորոգման, հետիոտն անցումների կառուցման, հուշարձանների վերանորոգման, հանգստի գոտիների ստեղծման և այլ) իրականացման համար Երևանի բյուջեից 2013թ. կհատկացվի 246.800,0 հազ. դրամ:

Կամրջային կառուցվածքների սպասարկման, շահագործման, վերականգնման ու ամրացման աշխատանքներ

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված են 27 կամուրջներ և կամրջային կառուցվածքներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 3700 մետր:

Կամրջային կառուցվածքների ընթացիկ նորոգման, սպասարկման և շահագործման համար նախատեսվել է 90.0 մլն դրամ:

Հիմնախնդիր. կամրջային կառուցվածքների արդիականացում

2013թ. նախատեսվում է հիմնանորոգել Քրստափոր փողոցի (Մետրոպոլիտենի) կամուրջը (13.0 մլն դրամ):

Ստորգետնյա և վերգետնյա անցումներ

Երևանի քաղաքապետարանում հաշվառված են 60 ստորգետնյա անցումներ, որից 39-ը գտնվում են բավարար վիճակում, 21-ում անհրաժեշտ է իրականացնել շինարարական աշխատանքներ՝ հիմնականում երեսապատման, հարդարման, ջրամեկուսացման և լուսավորության գծով: Վերգետնյա անցումները 17-ն են:

Հիմնախնդիր. վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում:

Այս հիմնախնդրի համատեղ լուծման նպատակով նախատեսվում է ներգրավել մասնավոր հատվածին: 2012 թվականին վերգետնյա անցումների կառուցման ծրագիրն իրականացվել է մասնավոր ներդրողների միջոցների հաշվին (թվով 7):

2013 թվականի նախատեսվում է իրականացնել թվով 8 վերգետնյա անցման կառուցման աշխատանքներ:

Հետիոտն անցումների ընթացիկ վերանորոգման աշխատանքների համար Երևանի 2013 թվականի բյուջեով նախատեսվել է 10.000,0 հազ. դրամ:

4 օբյեկտների համար նախագծա-նախահաշվային փատաթղթերը պատրաստ են:

18 ստորգետնյա անցումներում վարձակալական հիմունքներով գործում են առևտրի և սպասարկման կետեր: Վարձակալությունից գանձվող գումարները նախատեսվում է ուղղել անցումների հիմնանորոգման և լուսավորության ցանցի վերանորոգման վրա: Աշխատանքներ են տարվում մյուս անցումները ևս հնարավորության դեպքում հանձնել վարձակալության, իսկ այն անցումները, որոնք նպատակահարմար են տալ վարձակալության վերանորոգման աշխատանքները կկատարվեն Երևանի բյուջեի միջոցների հաշվին:

Փողոցների բարեկարգում

2012թ. վերակառուցվել են Ռուբինյանց, Թամանցիների, Դավիթ Բեկ, Բագրևանդ, Երիտասարդական, Բագրատունյաց, Մեբաստիա, Տիտոգրադյան, Այվազովսկու փողոցները, Հյուսիսային պողոտայի՝ Լալայանց-Պուշկին փողոցներ ընկած հատվածը, Գլխավոր պողոտայի՝ Կողբացի-Արամի փողոցների հատվածը, Սիլիկյան թաղամաս տանող ճանապարհը, Հյուսիսային ճառագայթի գրունտային ճանապարհը, Հալաբյան-Աբեյյան փողոցների խաչմերուկը և այլն:

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի հ.1276-Ն որոշմամբ 2012 թվականին իրականացվել են նաև թվով 30 փողոցի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման, փոսային նորոգման և ճաքալցման, հողային պաստառով (գրունտային) փողոցների հիմնանորոգման աշխատանքներ:

2012թ. կատարվել են մայրերի վերանորոգման, սալիկների փոխարինման աշխատանքներ:

2013 թվականին նախատեսվում է իրականացնել շուրջ 1.0 մլն քմ ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ աշխատանքներ: Այս աշխատանքների 60%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում: Դրանով կմոտենան ավարտին բակային տարածքների նորոգման աշխատանքների ծրագիրը:

Կիրականացվեն շուրջ 40 հազ. քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ, Երևան քաղաքի մայրուղիների, փողոցների և բակային տարածքների ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման, գրունտային ճանապարհների հիմնանորոգման, մայրերի, դիտահորերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքները կկրեն շարունակական բնույթ:

***Հիմնախնդիրներ. Մայրաքաղաք մտնող ճանապարհների կառուցապատում
Հուսայի և Ժամանակակից ճանապարհների ստեղծում***

Այս հիմնախնդրի լուծմանն է ուղղված ոչ միայն մայրաքաղաքի առկա ճանապարհային ցանցի վերանորոգումն ու հիմնանորոգումը, այլ նաև նոր ճանապարհների ստեղծումը՝ Երևանի կենտրոնը տարանցիկ տրանսպորտի միջոցներից բեռնաթափելու նպատակով:

2013 թվականին կշարունակվեն Ասիական զարգացման բանկի և նրա փորձագետների հետ համատեղ իրականացվող Երևան կենտրոնը շրջանցող մի քանի մայրուղիների և դրանց առանձին հանգույցների շինարարության համար ընթացող աշխատանքները: Ծրագիրն իր մեջ ներառում է Շիրակի փողոցից մինչև Արտաշատի խճուղի միջպետական նշանակության մայրուղու (մայրուղու երկարությունը՝ 4340 մետր, անցուղիները՝ 995 մետր, ընդհանուրը՝ 5335 մետր) և Արգավանդը Շիրակ փողոցի հետ կապող ճանապարհի (մայրուղու երկարությունը՝ 1300 մետր, անցուղիները՝ 800 մետր, ընդհանուրը՝ 2100 մետր) կառուցումը:

Մայրուղիների և փողոցների վերակառուցման և հիմնանորոգման ծրագրի իրականացման համար նախատեսվել է 1.823.105,0 հազ. դրամ՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Այս ծրագիրը նախատեսում է Ուլնեցի և Ռուբինյանց փողոցները միացնող ավտոճանապարհի 2-րդ փուլի կառուցում, քաղաքի փողոցների մայթերի վերանորոգում և վերականգնում, ինչպես նաև Հալաբյան փողոցի Դավթաշեն կամրջի հատվածի, Մելքոնով, Անդրանիկի, Արգիշտի, Չարենցի, Նար-Դոսի, Բ. Մուրադյան, Դավիթ Բեկի, Մայիսի 9-ի, Նուբարաշենի փողոցների կամ դրանց հատվածների ասֆալտ-բետոնյա ծածկի ամբողջական, իսկ դրանցից մի մասում նաև եզրաքարերի և մայթերի հիմնանորոգում:

Վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման նպատակով, ինչպես նաև բետոնե եզրաքարերի վերականգնման համար Երևանի 2013 թվականի բյուջեով նախատեսվել է 38.000,0 հազ. դրամ:

Հենապատերի նորոգման-վերականգնման աշխատանքներ

	Հենապատերի տեղակայման վայրը	Քանակը (հատ)	Գումարը (մլն դրամ)
2009թ.	Աճառյան, Սյանիկյան, Հալաբյան, Լենինգրադյան, Թևոսյան, Թոթովենց, Մուրովական, Դեմիրճյան, Հրազդանի փողոցներ, Ծիծեռնակաբերդի և Սարալանջի խճուղիներ	*	40.0
2010թ.	Բաբաջանյան, Սարյան, Լեռ, Օրբելի 8 շենքի մոտ, Նոր Նորքի 9-րդ զանգվածի հ.48 շենքի մոտ, ՀՀ Նախագահի նստավայրին կից հենապատերը	*	41.8
2011թ.	Ն. Նուբարյանի անվան պուրակում, Խորենացի հ.104 տան մոտ, Սվաճյան փողոցում, Նոր-Արեշի 15-րդ փողոցում, Արամի նրբանցքում (Կոմպոզիտորների տան մոտ), «Զեյթուն» մշակութային կենտրոնի շենքի մոտ, Պարույր Սևակ փողոցի հ.2 և 1բ շենքերի մոտ	7	43.3
2012թ.	Խորենացի-Գլինկա, Մեքաստիա-Բագրատունյաց փողոցների խաչմերուկներում, Անդրանիկի 25, Հալաբյան 19, Հերացի 10 շենքերի մոտ, Հերացի փողոցի կամուրջը ամրացնող, Դուրյան թաղամասի հ.հ.43, 48, Դավթաշենի 1-ին թաղամասի հ.41, Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.2բ և 3ա շենքերի մոտ, Մար-Թադի 5-րդ փողոցի, Աթենքի փողոցի հենապատեր, Սյանիկյան պողոտայում և Հերացի փողոցից դեպի Կենդանաբանական այգի, Հերացի փողոցի կամրջից դեպի Ազատության պողոտա:	13	234.1
2013թ.	Կենտրոն, Ավան, Նոր Նորք, Աջափնյակ, Արաբկիր վարչական շրջաններ	13	170.0

Հանգստի գոտիների ստեղծման աշխատանքներ

Մայրաքաղաքի կանաչ գոտու պահպանման և ավելացման նպատակով 2012թ ծրագրով իրականացվել է Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան-Մարգարյան փողոցների խաչմերուկին հարող տարածքում հանգստի գոտու ստեղծման աշխատանքներ՝ 100.0 մլն դրամի:

Ծրագիրը շարունակական է, 2013թ. բյուջեով հանգստի գոտիների ստեղծման աշխատանքների համար նախատեսվում է հատկացնել 300.0 մլն դրամ գումար: Այդ գումարը կուղղվի թվով 3 վարչական շրջանում նոր հանգստի գոտիների ստեղծմանը:

Երևան քաղաքում շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքներ

2012թ. կատարվել են շենքերի կամարանցումի վերանորոգման և գունազարդման աշխատանքներ: Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ: Կամարանցումների, ինչպես նաև այլ շինությունների գունազարդման համար բյուջեով նախատեսված է 110.0 մլն դրամ:

Երևանի քաղաքապետարանի բարեկարգման ծրագրի շրջանակում շարունակվել են մայրաքաղաքի շենքերի ճակատային մասերի վերանորոգման և քարերի մաքրման աշխատանքները: 2013 թվականին այն կրելու է շարունակական բնույթ, և նախատեսվում է իրականացնել շուրջ 50 շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքներ:

«Գեղեցիկ Երևան» ծրագիր

2012 թվականին իրականացվել են՝

- ✓ Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի շենքի արտաքին գեղարվեստական ձևավորում և լուսավորում,

- ✓ Երևան քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի շենքի բարեկարգում (ներառյալ ճակատային հատվածի հին պատուհանների փոխարինումը նոր պատուհաններով) և լուսավորում,

- ✓ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան ճակատային հատվածի լվացման և դեկորատիվ որմնանկարների վերականգնում,

- ✓ Սայաթ-Նովա պողոտայի հ.13 և հ.15 շենքերի միջակայքում գտնվող կամարաձև կառույցի գեղազարդ բարեկարգում,

- ✓ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շենքի (ներառյալ հին պատուհանների փոխարինումը նոր պատուհաններով) և հարակից բակային տարածքի բարեկարգում,

- ✓ ծրագրի շրջանակում անց է կացվել գեղարվեստական ձևավորման մրցույթ

Ծրագրի 2012թ. Ֆինանսական միջոցներով նախատեսվում է նաև իրականացնել Հանրապետության և Շառլ Ազնավուրի հրապարակներում գտնվող շատրվանների ձմեռային գեղազարդ լուսավորության աշխատանքները:

Հավասար բաշխմամբ համաֆինանսավորման սկզբունքով 2011-2012թթ. ընթացքում Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի լայնածավալ և արդյունավետ համագործակցության արդյունքում, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, «Գեղեցիկ Երևան» ծրագիրը կկրի շարունակական բնույթ:

2013թ. ընթացքում ծրագրի շրջանակում կիրականացվեն 140.0 մլն ՀՀ դրամ (որից՝ 70 մլն ՀՀ դրամ՝ Երևանի 2013 թվականի բյուջեի միջոցների հաշվին) ընդհանուր արժողությամբ աշխատանքներ, որոնք ուղղված կլինեն Երևանի վարչական շրջաններում այգիների, շատրվանների, անբարեկարգ տարածքների բարեկարգմանը, գեղարվեստական ձևավորմանը, արտաքին լուսավորությանը և այլ խնդիրների լուծմանը:

Այս ծրագրի նպատակն է քաղաքը դարձնել ավելի հարմարավետ և հաճելի վայր ապրելու համար: Հատկանշական է, որ ծրագիրը նաև նպատակ է հետապնդում բարձրացնել Երևանի բնակչության բարեկեցությունը՝ մայրաքաղաքի բնակչության համար ստեղծելով նոր աշխատատեղեր:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վիճակի բնութագիր

Ներկայում Երևան քաղաքում առկա է 4-րդ աստճանի վթարայնության քանդման ենթակա բազմաբնակարան բնակելի 6 և հանրակացարանային 3 շենք 556 բնակարանով, այդ թվում՝ 320 բնակարան Աջափնյակում, 150-ը Էրեբունիում, 52-ը Շենգավիթում, 27-ը Կենտրոն և 7-ը Արաբկիր վարչական շրջաններում:

Ներկայում Երևանում դեռևս առկա են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման պահանջներին չհամապատասխանող, պետական գրանցում ունեցող, հաշվառված, բայց չհասցեավորված, ինչպես նաև չհաշվառված շենք-շինություններ:

Լուծման կարիք ունի Երևան քաղաքի մի շարք թաղամասերում 1991 թվականին որպես տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված նախկինում սեփականաշնորհված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերը:

ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու» հ. 1517-Ն որոշմամբ Երևանի քաղաքային համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողամասերի մակերեսները ներկայացված են աղյուսակով:

		Տարածքը, հա
1.	Երևան քաղաքի վարչական տարածքը	22328
	այդ թվում՝	
1.1	պետական սեփականության հողեր	18218
1.2	համայնքային սեփականության հողեր	11031.65
1.3	քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն	7913.7
1.4	օտարերկրյա պետությունների սեփականություն	13

	Հողամասեր	Տարածքը, հա
	Պետական սեփականության հողամասեր	11330.61
	որից՝	
	Գյուղատնտեսական նշանակության	3158.44
	Բնակավայրերի հողեր	6278.40
	Արդյունաբերական, ընդերք-օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտներ	969.69
	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	107.25
	Հատուկ պահպանվող տարածքներ	853.34
	Զբոսային հողեր	13.49

2012 թվականին իրականացված ծրագրեր

Հիմնախնդիր. մայրաքաղաքում վթարային շենքերի առկայությունը:

2012 թվականին իրականացված ծրագրերը կապված են եղել Երևան քաղաքում 4-րդ կարգի վնասվածություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների վերաբնակեցման հետ: 2012 թվականին շարունակվեց և ավարտին հասցվեց Մարգարյան 45 և 37 հասցեների շենքերի համապատասխանաբար 48 և 44 ընտանիքի վերաբնակեցման աշխատանքները: Շարունակվում է Շինարարների փողոցի հ. 15 շենքից բնակիչների վերաբնակեցման գործընթացը որի համար օգտագործվել է Քանաքեռի 14-րդ և Բաբաջանյան փողոցներում շահագործման հանձնված բնակելի շենքերը, ինչպես նաև Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող բնակելի շենքի հնարավորությունները:

Ծավալուն աշխատանք է տարվել վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի ոչ բնակելի տարածքների հաշվառման ուղղությամբ:

Հասցեավորվել են 10165 օբյեկտներ:

2013 թվականին նախատեսվող աշխատանքներ

2013 թվականին կշարունակվի ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» հ.947-Ն որոշման համաձայն գոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքներին հաշվառման ընդունելու և ցուցակները ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացնելու գործընթացը:

2013 թվականին նախատեսվում է շարունակել Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի (բնակելի տների) բնակիչների անվտանգության ապահովման, անկանխատեսելի հետևանքները բացառելու, դրանցում բնակվող բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու հետ կապված աշխատանքները:

Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման նպատակով Երևանի 2013 թվականի բյուջեի միջոցներից հատկացվելու է 1.441.869,0 հազ. դրամ: Գումարն ուղղվելու է Մարգարյան 37 հասցեում չորրորդ աստիճանի ազատված վթարային շենքի քանդման, նույն տեղում բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքներին և այդ շենքից բնակարանների ձեռքբերմանը:

Հիմնախնդիր. դեռևս լուծում չի տրվել սողանքի հետևանքով վթարային և բնակության համար ոչ պիտանի դարձած Սարի Թաղի 18-րդ փողոցի հ.հ. 33, 35, 37, 39 և 41 հասցեներում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային հարցերին, որոնք ըստ ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 26-ի հ.204-Ն որոշման ենթակա են վերաբնակեցման:

Այս հիմնախնդրի լուծման նպատակով պետական բյուջեով նախատեսվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակում կառուցվող շենքերից 2013 թվականին բնակարաններ կհատկացվեն նաև նշված տներում բնակվող ընտանիքներին:

Նոր Խարբերդի այգեգործական 4800 տնտեսությունների հողօգտագործման իրավունքների ձևակերպումները կատարելու, տարածքում առկա կարգավիճակը չճշտված շենք-շինությունների նկատմամբ իրավունքի ձևակերպմանն ուղղված 2013 թվականին կիրականացվեն համապատասխան աշխատանքներ:

2013 թվականին կշարունակվեն Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերում դեռևս չսեփականաշնորհված բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացը:

Բնակարանային շինարարության իրականացման փորձի վերլուծության արդյունքներից ելնելով հնարավոր միջոցներ կձեռնարկվեն վթարային քանդման ենթակա շենքերից բնակիչների վերաբնակեցման ժամանակ բնակարանային շինարարությունը տվյալ վարչական շրջանի սահմաններում իրականացնելու համար:

Նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման գործառնությունները կշարունակվեն նաև 2013 թվականին:

Կ Ո Մ ՈՒ Ն Ա Լ Ո Լ Ո Ր Տ

Ջրամատակարարում և ջրահեռացում

Վիճակի բնութագիր

Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցվում են «Վեոլիա-Օ կոմպանի Դեզ Օ» ֆրանսիական ընկերության կողմից 2005թ. դեկտեմբերին հիմնադրված «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից:

Մայրաքաղաքում ջրամատակարարումն իրականացվում է 2600 կմ երկարություն ունեցող բաշխիչ ցանցի և 245 հազ. խմ տարողությամբ օրվա կարգավորիչ 23 ջրավազանների (ՕԿՁ) միջոցով:

Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգն ունի 103 կապտաժային կառույցներ, 39 արտեզյան հորատանցքեր, 5 գլխավոր պոմպակայաններ, 30 խորքային հորատանցքեր և 803 կմ մայրուղային ջրատարներ: Երևան քաղաք մտնող ջրաքանակի շուրջ 76,5%-ը մատակարարվում է մեխանիկական եղանակով:

2012 թվականի ընթացքում իրականացված ծրագրեր

Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող Երևան քաղաքի բարեկարգման աշխատանքների շրջանակում 2012թ. ընթացքում կատարվել են մայրաքաղաքում առկա ցայտադրված գույքագրման աշխատանքներ, որոնց արդյունքների հիման իրականացվել է համապատասխան գործընթաց՝ դրանց վերագործարկման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում «Երևան Ջուր» ՓԲԸ-ի, համատիրությունների, ցայտադրված սեփականատերերի միջոցներով վերանորոգվել և վերագործարկվել է մայրաքաղաքի 200 ցայտադրված:

Անձրևաջրերի կուտակումները բացառելու նպատակով կառուցվել է 2818 մետր ընդհանուր երկարությամբ անձրևատար:

«Վարձակալության պայմանագրի» 6-րդ տարվա ընթացքում արձանագրված ջրամատակարարման ծառայությունների զգալի բարելավումների հարցում իր էական ազդեցությունն է ունեցել Համաշխարհային բանկի վարկավորմամբ «Երևանի ջրամատակարարման ջրահեռացման բարելավում» ծրագրի իրականացումը:

2012 թվականին լուրջ նվաճումներ են արձանագրվել հատկապես Երևան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի գոտիավորման աշխատանքների, ցանցի կառավարման բարելավման, վթարների, հոսակորուստների և ապօրինությունների կանխման և դրա շնորհիվ՝ ջրամատակարարման շարունակականության ցուցանիշի բարելավման գործընթացում:

Ջրամատակարարման շարունակականության արձանագրված առաջընթացի (6.07%) պահպանման պարագայում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ 6.56%-ով նվազել է ջրարտադրությունը: Ընդ որում այս նվազեցումն ապահովվել է մեխանիկական եղանակով արտադրվող ջրաքանակի զգալի պակասեցման (29%-ով) արդյունքում, որի շնորհիվ զգալիորեն (38.62%-ով) նվազել է նաև էլեկտրաէներգիայի ծախսը: Այն հնարավոր է դարձել ջրամատակարարման համակարգի կառավարման բարելավման, շահագործման արդյունավետության բարձրացման և ջրակորուստների նվազեցման արդյունքում:

Ջրի սպառման ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում ավելացվել է 4.67%-ով, ընդ որում՝ ջրաչափերի ցուցմունքների հիման վրա հասույթ ձևավորած ջրածավալը հասցվել է 98.76%-ի:

Հիմնախնդիր. ջրակորուստների կրճատումը:

Չհաշվառված ջրաքանակը կամ ընդհանուր ջրակորուստը (արտադրված և սպառված ջրաքանակների տարբերությունը) նվազել է 8.94%, որը հետևանք է ինչպես տեխնիկական ջրակորուստների նվազեցման, այնպես էլ ապօրինի ջրօգտագործումների դեմ ձեռնարկվող պայքարի ուժեղացման, որը շարունակվելու է:

Հաշվետու ժամանակահատվածում կանխվել է ուղղակի գետ կատարվող ևս մեկ արտանետում: Ընդհանուր առմամբ, Պայմանագրի մեկնարկին արձանագրված՝ ուղղակի գետ կատարվող 17 արտանետումից Պայմանագրի անցած ժամանակահատվածում կանխվել է 11-ը:

Հիմնախնդիր. ջրակորուստների և համակարգում տեղ գտած ապօրինությունների ու խախտումների դեմ տարվող աշխատանքների խորացումը, սահմանափակման կետի հստակեցման, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հետագա շահագործման խնդիրների կարգավորումը, ջրաչափական սարքերի տեղադրման, սպասարկման, ստուգաչափման և փոխարինման գործառնությունների կանոնակարգման և պատասխանատվությունների հստակեցման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացումն ու հիմնախնդրի վերջնական լուծումը:

Հաշվետու տարում Երևանի ջրահեռացման համակարգի շահագործումը ընթացել է նախկին ձևով՝ առանց որևէ էական բարելավման: Վերացվել են կոյուղատարների վթարների 14 580 դեպք, կառուցվել և վերականգնվել են 150-500մ տրամաչափի կոյուղագծեր՝ 1357 գծամետր ընդհանուր երկարությամբ:

Մաքրման կայան մտնող ջրի քանակը կազմում է ջրառի (239.1մլն խմ) 21.37%-ը, իսկ իրացումը՝ ջրառի 25.5%-ը, այսինքն՝ մոտ 4%-ով պակաս: Դեռևս պահպանվում են թվով 6 կետերում կեղտաջրի ուղղակի արտանետումներ դեպի տարբեր ջրային ավազաններ, ապա կեղտաջրի քանակը նորից կգերազանցի իրացված ջրաքանակը:

Ֆրանսիական կառավարության հետ, ֆրանս-հայկական միջկառավարական արձանագրության շրջանակում, 2008թ. մայիսին ստորագրվել է «Երևանի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման» 24.9 մլն եվրո ընդհանուր գումարի ծրագիրը:

Հիմնախնդիր. «Աէրացիա» մաքրման կայանի վերակառուցումը:

2013թ. կսկսվեն «Աէրացիա» կայանի և հիմնական կոլեկտորի վերականգման 12.34 մլն. եվրո կամ 6,484.1 մլն դրամի աշխատանքներ:

2013 թվականին նախատեսվող միջոցառումներ

Հիմնախնդիր. ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի ընդլայնումը:

Ջրամատակարարման շարունակականության (օրվա ջրամատակարարման ժամերի միջին տևողության) բարելավման հարցում առանձնակի ուշադրություն է դարձվելու ջրամատակարարման առումով ոչ բարենպաստ պայմաններում գտնվող գոտիների բարելավմանը: Ձեռնարկվելու են միջոցառումներ 2013թ. ընթացքում ջրամատակարարման նվազագույն շեմը բարձրացնելու համար՝ անփոփոխ թողնելով մինչ այդ շուրջօրյա ջրամատակարարում ստացող տարածքները:

Ընկերությունը շարունակելու է խթանել ջրաչափերի տեղադրումը: 2012թ. մարտի 1-ի դրությամբ ջրաչափական սարք չտեղադրած բաժանորդների թիվը կազմել է 9544, որը բաժանորդների ընդհանուր թվի 2.86%-ն է: Շարունակվելու է նման բաժանորդների բացահայտման գործընթացը, որի հիման վրա կթարմացվեն բազային տվյալները: Ձեռնարկվող միջոցառումների արդյունքում նախատեսվում է ավելացնել ջրաչափ տեղադրած բաժանորդների թիվը՝ այն հասցնելով 98%-ի:

«Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների ծրագրով» 7-րդ պայմանագրային տարում նախատեսված է իրականացնել 1384.8 մլն. ՀՀ դրամի աշխատանքներ:

Ընկերության շահագործման պատասխանատուների կողմից ջրամատակարարման բաշխիչ և կոյուղու ցանցերի բարելավման համար ներկայացված աշխատանքների ցանկից ընտրվել են առաջնահերթ իրականացման կարիք ունեցող աշխատանքները՝ բաշխիչ ցանցի համար՝ 741.7 մլն ՀՀ դրամ և կոյուղու ցանցի համար՝ 217.3 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

Մայրաքաղաքի բարեկարգման ծրագրերը կրում են շարունակական բնույթ, և ցայտադրյալների վերագործարկման գծով աշխատանքները ևս կշարունակվեն 2013 թվականին: Նախատեսվում է նշված աշխատանքների իրականացման նպատակով ներգրավել մասնավոր ներդրողներին:

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Վիճակի բնութագիր

Երևանի 4588 բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է 220 համատիրությունների, 165-ը՝ լիազորագրային կառավարիչների, 70-ը՝ վարչական շրջանների ղեկավարների և 9-ը՝ ԿԷՉ-ի կողմից:

Կատարվել է վերելակների գույքագրում ըստ վարչական շրջանների, որում ճշտված են վերելակների հորանների չափերը և արտադրող գործարանները: Անհրաժեշտություն կա 1520 վերելակ փոխարինել նորերով: Մնացած 2735 վերելակների անվտանգ շահագործումը հնարավոր է ևս 3-5 տարի, որից հետո անհրաժեշտ է իրականացնել դրանց արդիականացման ծրագիր:

	Երևան վարչական շրջանների անվանումը	Շենքերի քանակը	Վերելակների թիվը
	ք. Երևան	4855	4246
1.	Աջափնյակ	425	245
2.	Ավան	237	330
3.	Արաբկիր	697	450
4.	Դավթաշեն	192	394
5.	Էրեբունի	261	209
6.	Կենտրոն	739	574
7.	Մալաթիա-Սեբաստիա	586	960
8.	Նոր Նորք	681	589
9.	Նորք-Մարաշ	10	-
10.	Նուբարաշեն	35	6
11.	Շենգավիթ	636	272
12.	Քանաքեռ-Զեյթուն	356	217

2012 թվականին իրականացված ծրագրեր

2012 թվականին մշակվել և ներդրվել է պարտադիր նորմերի վերահսկման մեխանիզմ:

2012 թվականի ծրագրերով մայրաքաղաքում կատարվել է բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում՝ համապատասխանաբար 30 և 22 հազար քմ ծավալով, նորոգվել է 15 հազար գծմ ջրթափ խողովակ: Նորոգվել է 14 հազար գծմ ջրամատակարարման ներքին ցանցի խողովակ: 3500 գծամետր էլ ներքին ցանցերի ջերմամեկուսացման աշխատանքներ են իրականացվել:

Այս տարի մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման ծրագրով նորոգվել է բազմաբնակարան շենքերի շուրջ 1315 շքամուտք, 420 շքամուտքի մալուխները վերանորոգվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջոցով:

Գովազդային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում բազմաբնակարան շենքերի մուտքերում փակցվել են բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի իրավունքների և պարտականությունների իրազեկման պաստառներ:

Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հզորացմանն ուղղված աշխատանքների արդյունքում շուրջ 65 համատիրություն միավորվել են:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Հիմնախնդիր. Մաշված և կապիտալ վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:

2013թ. ընթացքում նախատեսվում է շարունակել մուտքերի վերանորոգման ծրագիրը՝ Երևանի բյուջեի միջոցներից հատկացնելով շուրջ 150 մլն դրամ՝ նույն չափի մասնակցություն ակնկալելով համատիրությունների կողմից:

Բազմաբնակարան շենքերի վերանորոգման նպատակով աշխատանքներ կտարվեն մասնավոր և վարկային միջոցների ներգրավման ուղղությամբ:

Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հզորացման նպատակով նախատեսվում է համատիրությունների միավորում:

Մայրաքաղաքի վերելակային պարկի վերանորոգման համար սարքավորումներ ձեռք բերելու և տեղադրելու նպատակով Երևանի 2013թ. բյուջեից հատկացվել է 89.000,0 հազ. դրամ:

Երևանի քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգման ծրագրերով աշխատանքները կազմակերպելու համար նախատեսվել է 287.050,0 հազ. դրամ (Երևանի բյուջե):

«Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագիր

Այս ծրագիրն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶՄ հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ: Ընդհանուր ծրագրի նպատակն է նվազեցնել էլեկտրական և ջերմային էներգիայի սպառումը, միաժամանակ նվազեցնելով դրանց հետ կապված ջերմոցային գազերի արտանետման ծավալները նորակառույց և/կամ գոյություն ունեցող բնակելի շենքերից:

Ծրագրի բաղադրիչներից մեկի շրջանակում նախատեսվում է ցուցադրել էներգաարդյունավետ շենքերի էներգաձախսախնայողական ներուժը, նպաստել նմանատիպ օբյեկտների իրականացման փորձի տարածմանն ու կուտակմանը՝ բարձրացնելով բնակչության լայն խավերի իրազեկվածությունը՝ էներգաարդյունավետ շենքերի կառուցման, ինչպես նաև գոյություն ունեցող շենքերի վերանորոգման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների և ջերմամեկուսիչների կիրառման հնարավորությունների վերաբերյալ:

Ծրագրի համար գոյություն ունեցող բնակելի շենքերից թիրախային շենքեր են համարվում կենտրոնացված ջերմամատակարարում ունեցող ինը հարկանի պանելային շենքերը: Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶՄ հայաստանյան գրասենյակի հետ համատեղ համագործակցությունը ծրագրի շուրջ վերաբերում է պիլոտային ծրագրի իրականացմանը՝ տիպային բնակելի շենքի էներգաարդյունավետության բարձրացմանը՝ համատեղ ֆինանսական միջոցների կիրառմամբ:

Ա Ղ Բ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Վ Ս Ա Ն Ի Տ Ա Ր Ա Կ Ա Ն Մ Ա Ք Ր Ո Ւ Մ Վ Ի Ճ Ա Կ Ի Բ Ն Ո Ւ Ք Ա Գ Ի Ր

2012թ. Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայրերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմել է շուրջ 12.931.2 հազ. քմ:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվել են թվով 12 մասնագիտացված ընկերությունների շուրջ 1600 աշխատակցի կողմից: Աշխատանքներում ներգրավվել են շուրջ 410 միավոր հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմ: Երևան քաղաքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1000-1100տ կենցաղային աղբ, որից՝ 750-800տ տեղադրվում է Նուբարաշենի քաղաքային աղբավայրում, իսկ մնացածը տեղադրվում է

Աջափնյակ վարչական շրջանի «Ցիտա» գործարանին հարող, Ջրվեժի, Մասիսի և Աշտարակի՝ Մասունիկ գյուղի աղբավայրերում:

Երևանի աղբահանությունը կատարվում է շուրջ 4855 բազմաբնակարան շենքից և ավելի քան 53000 մասնավոր տնատիրությունից:

Մայրաքաղաքի բազմահարկ-բազմաբնակարան շենքերում առկա է՝ թվով 3901 հատ աղբամուղ:

2012 թվականին իրականացված ծրագրեր

Հիմնախնդիր. վարչական շրջանների տարածքներում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման ցածր որակը:

Համաձայն Երանի քաղաքապետի 17.07.2009թ. «Օպերատիվ շտաբ ստեղծելու մասին» հ.85-Ա կարգադրության, աղբահանության և սան.մաքրման բաժնի աշխատակիցները որպես օպերատիվ շտաբի անդամներ ուսումնասիրել և ամենօրյա ստուգայցեր են անցկացնում Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքներում:

2012թ. ապրիլ-մայիս ամիսներից մինչև հոկտեմբերի սկիզբը մայրաքաղաքում վարչության կողմից կազմակերպվել և անցկացվել է համաքաղաքային շաբաթօրյակներ:

Երևանում աղբահանության և սանիտարական մաքրման /ներառյալ ձմռան ամիսներին/ ծառայությունների մրցույթի նախապատրաստման շրջանակներում տարվում են աշխատանքներ, այդ թվում՝ տեղեկատվության ամփոփում և տրամադրում, արտասահմանյան օպերատորների հետ կնքվող պայմանագրերի պայմանների քննարկում, վերջիններիս առաջարկությունների վերլուծություն:

Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման նպատակով Երևանի 2013 թվականի բյուջեի միջոցներից հատկացվելու է 1.441.869,0 հազ. դրամ: Գումարն ուղղվելու է Մարգարյան 37 հասցեում չորրորդ աստիճանի ազատված վթարային շենքի քանդման, նույն տեղում բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքներին և այդ շենքից բնակարանների ձեռքբերմանը:

Համապատասխան կարգով Երևանի աղբահանության վերահսկողություն իրականացնելու համար հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների վրա տեղադրված են GPS համակարգեր: Էլեկտրոնային տարբերակի են վերածվել նաև քաղաքի բազմաբնակարան շենքերում առկա աղբամուղերի, ինչպես նաև կոնտեյներների և աղբամանների տեղակայման վայրերը, հասցեները, քանակներն ու տեսակները:

23.06.2011թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն աղբահանության վարձավճարը դարձել է պարտադիր գանձույթ: Օրենքը ամբողջությամբ գործում է 2012թ. հունվարի 1-ից:

Համաձայն ՀՀ կառավարության 01.02.2011թ-ի հ.168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-րդ կետի 9-րդ ենթակետի նախատրակավորված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ անցկացնելու համար 2012թ. սեպտեմբերի 5-ին Երևանի քաղաքապետարանում հրավիրվել է Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման /ներառյալ ձմռան ամիսներին/ ծառայությունների ձեռքբերման մրցակցային երկխոսության ընթացակարգի առաջին փուլին նախատրակավորված օպերատորների խորհրդակցություն: Խորհրդակցության ընթացքում մանրամասնորեն քննարկվել են օպերատորների հետ կնքվող պայմանագրերի և մասնագրերի դրույթները: Հաշվի առնելով քննարկումների գործընթացը հավանաբար մինչև 2012թ. դեկտեմբերի վերջը կավարտվի հայտարարված մրցույթը և հաղթող ճանաչված օպերատորների հետ կկնքվեն պայմանագրեր: Գործընթացը կշարունակվի նաև 2013թ. ընթացքում:

Ներկա դրությամբ «Եվրոպական վերակառուցման և զարգացման» բանկի ֆինանսավորմամբ Ավստրիական խորհրդատվական ծառայություն իրականացնող «Hydroingener-RCE-KPC Tranceproject» ընկերությունը, համագործակցելով Երևանի քաղաքապետարանի հետ, իրականացնում է նոր քաղաքային աղբավայրի նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորման մշակման աշխատանքները:

2012թ. ընթացքում Երևանի փողոցներում, կանգառներում, պուրակներում և այլ մարդաշատ վայրերում տեղադրվել են ձևավոր աղբամաններ և նստարաններ: Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Հիմնախնդիր. մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման համակարգը չի համապատասխանում ժամանակակից եվրոպական երկրներում գոյություն ունեցող չափանիշներին:

2013 թվականին Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման /ներառյալ ձմռան ամիսներին/ ծառայությունների իրականացման համար մրցույթում հաղթող ճանաչված օպերատորները կիրականացնեն կնքված պայմանագրերի և մասնագրերի դրույթները: Ծրագրով մինչև 2013թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսները՝ օպերատորների կողմից կիրականացվեն նախապատրաստական աշխատանքներ՝ օպերատորների վարչական շենքերի ձեռքբերման, անձնակազմի հավաքագրման, ավտոտնտեսությունների հավաքատեղի կազմակերպման, հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և այլ ուղղություններով:

Արտաքին լուսավորություն

Վիճակի բնութագիր

2012թ. Երևանի քաղաքապետարանի և «Երքադլոյս» ՓԲԸ միջոցների հաշվին իրականացվել են Երևան քաղաքի 135 օբյեկտների (բակեր, փողոցներ) արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքները, 98 շենքերի, շինությունների և արձանների գեղարվեստական լուսավորության աշխատանքները, լուսավորվել են 67 կամարանցումներ:

Իրականացվել են 1226կմ ընդհանուր երկարությամբ 1035 օբյեկտների (փողոցներ, այգիներ, արձաններ և այլն), 50965 հատ տարբեր տիպի լուսատուների, որոնք մոնտաժված են 28910 արտաքին լուսավորության հենասյուների վրա, արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ:

Շենք-շինությունների և արձանների գեղարվեստական լուսավորության ցանցը գործում է մինչև լուսաբաց ռեժիմով:

Վերջին տարիներին կապիտալ ներդրումների հաշվին վերակառուցվել է արտաքին լուսավորության ցանցի զգալի մասը:

2012 թվականին իրականացված ծրագրերը

2012 թվականին Երևանի արտաքին լուսավորության ցանցի կապիտալ շինարարությունը կատարվել է Երևանի բյուջեի հաշվին: Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքները իրականացնելու համար հատկացվել է 1.696.000,0 հազ. դրամ (Երևանի բյուջե):

«Երբաղույս» ՓԲԸ և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված կապալային աշխատանքների կատարման պայմանագրերի հիման վրա 2012թ. իրականացվել են 340123,8 հազար դրամի փողոցների, բակերի, այգիների արտաքին լուսավորության ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ: «Երբաղույս» ՓԲԸ սեփական միջոցների հաշվին 2012թ., համաձայն ներկայացված ներդրումային ծրագրի, իրականացվել փողոցների, բակերի, այգիների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև հիմնանորոգման աշխատանքներ:

Այս տարի 111 կմ նոր ցանց է անցկացվել մայրաքաղաքի 370 օբյեկտների, այդ թվում՝ փողոցների, կամուրջների, բակային տարածքների և այգիների, ինչպես նաև արձանների ու շենքերի ճակատային հատվածների գիշերային լուսավորությունն ապահովելու նպատակով:

Շահագործման և պահպանման աշխատանքների հետ միասին «Երբաղույս» ՓԲԸ-ն 2012թ. իրականացրել է նաև տոնական լուսավորության աշխատանքները, Անկախության, Երևանի օրվան նվիրված և մյուս տոնակատարությունների ժամանակ ապահովվել է Երևանի գունագարդ լուսավորությունը, միացվել են շուրջ 482 հատ զարդեր՝ 3670քմ մակերեսով, 9700 մետր լուսաշղթաներ:

Իրականացվել է Մաշտոցի պողոտայի, Ֆրանսիայի հրապարակի շրջակայքի ծառերի գունագարդ լուսավորությունը:

Իրականացվելու է 2012թ. ամանորյա տոնական լուսավորություն, Երևանը զարդարվելու է լուսաշղթաներով, միացվելու են զարդերը, վարչական շրջաններում տեղադրված տոնածառերի տոնական լուսավորությունն է ապահովվելու: Ամանորյա միջոցառումների համար Երևանի տեսարժան վայրերում տեղադրվելու են 350 հատ տարբեր գույնի լուսադիոդային ծառեր:

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶՕ/ԳԷՖ ծրագրի նախապատրաստական փուլը ամբողջությամբ ավարտվել է, ներկայացվել են պիլոտային ծրագրերի հաշվարկ հիմնավորումները՝ 2013 թվականին իրականացնելու համար:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

2013թ. նախատեսվում է իրականացնել 1337կմ ընդհանուր երկարությամբ 1405 օբյեկտների (փողոցներ, այգիներ, արձաններ, անցումներ, թունելներ, շենքեր, խաղահրապարակներ և այլն), 58735 հատ տարբեր տիպի լուսատուների, արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքները (1.696.000,0 հազ. դրամ՝ Երևանի բյուջե):

Կապահովվի 2013թ. տոնական օրերի և ամանորյա տոնական լուսավորությունը:

Կիրականացվեն փողոցների, նրբանցքների, բակային տարածքների, խաղահրապարակների, այգիների արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ՝ 100.000,0 հազ. դրամ արժեքով:

2012թ. հաստատվել է «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիրը: Ըստ Գլոբալ էկոլոգիական ֆոնդի (ԳԷՖ) ընթացակարգերի, անհրաժեշտ է պատրաստել նախագծային փաստաթուղթ, որը ներառում է ապագա Ծրագրի տեխնիկական, ֆինանսական, ինստիտուցիոնալ շրջանակները, ծրագրի համաֆինանսավորման հնարավոր ծավալները, ծրագրի մասնակից կողմերի պատասխանատվության շրջանակները, ինչպես նաև պիլոտային ծրագրի շրջանակում առաջարկող տարբերակները:

2013թ. կմեկնարկի «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիրը՝ ԳԷՖ-ի կողմից ծրագրի վերջնական հաստատումից հետո:

Սույն ծրագրի նպատակն է նպաստել լուսավորման էներգաարդյունավետ սարքերի և տեխնոլոգիաների ներդրմանն ու կիրառմանը հանրային, առևտրային, հասարակական ոլորտներում, ինչպես նաև բնակարաններում շիկացման լամպերի և լուսավորման այլ

հնացած տեխնոլոգիաների կիրառման աստիճանական դադարեցմանը, այդպիսով նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները: Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև ներգրավելով կառավարական այլ կառույցների, պետական և մասնավոր շահագրգիռ կողմերի, ԲՈՒՀ-երի և տեխնիկական ինստիտուտների, էներգաարդյունավետության կենտրոնների, լաբորատորիաների, ՀԿ-ների և այլնի:

Նախատեսվում է իրականացնել դիսպետչերական ծառայության արդիականացման աշխատանքները՝ արդիական GPRS համակարգի ներդրմամբ, որը իր մեջ կներառի նաև էլեկտրաէներգիայի ծախսի հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրումը

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Վիճակի բնութագիր

	ք. Երևան
Առևտրի օբյեկտներ	8538
Կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտներ	1891
Սպառողական ապրանքների օբյեկտներ	26
Գյուղատնտեսական արտադրանքի օբյեկտ	24
Հանրային սննդի օբյեկտ	1138

Առևտրի օբյեկտների 80.1%-ը, հանրային սննդի օբյեկտների 85.1%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 80.5%-ը կենտրոնացված են Կենտրոն, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում:

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 86%-ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության մոտ 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ:

2012 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ Երևան քաղաքում առևտրի շրջանառության աճը կազմել է 7.2%: Առևտրի շրջանառության 63.9%-ը իրականացվում է խոշոր, մնացած 37.1%-ը՝ փոքր և միջին բիզնեսի կողմից:

2012 թվականին իրականացված ծրագրեր

Երևան քաղաքում 2011 և 2012 թվականների ընթացքում իրականացվել են կրպակների ու տաղավարների ապամոնտաժումներ, սակայն որոշ կենտրոնական փողոցներին հարող տարածքներ դեռևս գերհագեցված են, որոնցից շատերը կրպակաշարեր են և կարիք ունեն կանոնակարգման ու վերակառուցման:

Հիմնախնդիր. չնայած Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի արգելմանը, դեռևս այն կանոնակարգման կարիք ունի:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման հսկողությունն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով կազմակերպվել են բազմաթիվ շրջայցեր, որոնց արդյունքում գյուղութերքների, լցմովի պաղպաղակի, ոչ գործարանային փաթեթավորմամբ զովացուցիչ ջրերի և այլ սննդամթերքների, սգո պարագաների, շինանյութերի բացօթյա առևտրի արգելման ծավալուն աշխատանքներ են իրականացվել Երևան քաղաքի բոլոր փողոցներում ու պողոտաներում, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի բակերում:

Հիմնախնդիր. կանոնակարգման կարիք ունի ստորգետնյա անցումներում իրականացվող առևտուրը:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Երևան քաղաքի բոլոր փողոցների և պողոտաների մայրերը մաքրվել ու ազատվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով բացօթյա առևտրի համար չթույլատրվող ապրանքներից, սահմանվել է մշտական հսկողություն բացօթյա ապօրինի առևտրի վերսկսումը բացառելու նպատակով: Առևտրի կանոնակարգման աշխատանքներ են իրականացվել նաև Երևան քաղաքի գետնանցումներում:

Մասնավոր ներդրումների հաշվին Երևան քաղաքի Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Քանաքեռ-Զեյթուն և Ավան վարչական շրջաններում կառուցվել են 1-ական գյուղատնտեսական արտադրանքի փոքրածավալ շուկաներ:

Կասյան փողոցում և Խորենացի, Ագաթանգեղոս փողոցներով և Տիգրան Մեծ պողոտայով պարփակված տարածքում կազմակերպվել են գյուղմթերքի բացօթյա շուկաներ, որտեղ առևտուր են իրականացնում միայն գյուղմթերք արտադրողները:

Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակվելու կապակցությամբ Մաշտոցի պողոտայում կազմակերպվել է գրքերի ցուցահանդես– վաճառք:

2012թ. 9 ամիսների ընթացքում անհրաժեշտ աշխատանքներ են տարվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 158-րդ, 162-րդ, 169.16-րդ և 180-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների հայտնաբերման ուղղությամբ:

Վարչական շրջաններում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում խախտումներ են արձանագրվել 2940 օբյեկտներում և կազմվել են արձանագրություններ, որոնցից՝

Հետևողական աշխատանքներ են տարվել առևտրի օբյեկտներում ժամկետանց ապրանքների հայտնաբերման ու դրանց վաճառքի արգելման ուղղությամբ:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում աճել են, ինչպես թույլտվությունների թիվը, այնպես էլ համայնքի բյուջե մուտք եղած տեղական տուրքերի չափը:

Երևան քաղաքում գործող ավտոկայանատեղիների գործունեության նկատմամբ իրականացված հսկողության արդյունքում արգելվել է շուրջ 300 ապօրինի ավտոկայանատեղիների գործունեությունը: Բացահայտվել են պայմանագրերով սահմանված տարածքներից ավել օգտագործման բազմաթիվ դեպքեր: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերացվել են անօրինակությունները և կնքվել նոր պայմանագրեր:

Կանոնակարգվել է ծաղիկների բացօթյա առևտուրը: Այն իրականացվում է հիմնականում բաց տաղավարներում:

Մշակվել են «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», ՀՀ օրենքներում, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նոր առաջարկություններ

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով կմշակվեն և կներկայացվեն առաջարկություններ:

Հիմնախնդիր. կանոնակարգված չէ շրջիկ առևտրի կետերի միջոցով իրականացվող վաճառքը:

Շրջիկ առևտրի միջոցով իրականացվող առևտրի կանոնակարգմանն ուղղված կներկայացվեն օրենսդրական առաջարկություններ:

Շարունակական բնույթ է կրելու ապօրինի բացօթյա առևտուրն արգելելու ուղղությամբ, ինչպես նաև պիտանիության ժամկետանց ապրանքների վաճառքի նկատմամբ վերահսկողությունը:

Երևան քաղաքում գործող ավտոկայանատեղիների գործունեության նկատմամբ վերահսկողությունն ուղղված է լինելու պայմանագրերով սահմանված տարածքներից ավել օգտագործման դեպքերի բացահայտմանը և անօրինակությունների բացառմանը:

Հիմնախնդիր. մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտ է շարունակել վարչական շրջաններում մանրածախ և մեծածախ շուկաների, ինչպես նաև տոնավաճառների կազմակերպման գործընթացը:

Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով կորոշվեն դրանց տեղակայման վայրերը, կմշակվի քաղաքաշինական փաթեթ:

Մայրաքաղաքում հասարակական զուգարանների խնդիրը կարգավորելու նպատակով ևս նախատեսվում է ներգրավել մասնավոր ներդրողների: Կմշակվի քաղաքաշինական փաթեթ և կառուցապատողներին կտրվի ծրագրային փաթեթների օտարում՝ աճուրդային կամ մրցութային կարգով:

Երևան քաղաքում կենդանիների շուկաների կառուցման նպատակով տեղակայման առաջարկություններ կներկայացվեն և կորոշվեն համապատասխան վայրերը:

Թափառող կենդանիների վնասագերծման աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը կրելու է շարունակական բնույթ: Թափառող կենդանիների վնասագերծման համար Երևանի 2013 թվականի բյուջեի միջոցների հաշվին նախատեսվել է 220.000,0 հազ. դրամ:

Կմշակվեն ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմներ, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորման նպատակով կարվեն առաջարկություններ («Կենդանիների մասին», «Կենդանիների պաշտպանության մասին» օրենքների նախագծերի մշակման նպատակով):

Տ Ր Ա Ն Ս Պ Ո Ր Տ

Վիճակի բնութագիր

Երթուղային ցանց

Երևանի քաղաքապետի 2012թ. մարտի 30-ի հ.2911-Ա որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների նոր երթուղային ցանցը, ինչը նպատակ է հետապնդել ամբողջովին վերանայելու Երևանի փոքր կենտրոնում ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը, որոշակիորեն նվազեցնելու միկրոավտոբուսների քանակը, մեծացնելու մետրոպոլիտենի և տրոլեյբուսների դերը ներքաղաքային ուղևորափոխադրումներում, ինչպես նաև նախատեսելու ավտոբուսային նոր, արդյունավետ երթուղիներ:

Նոր երթուղային ցանցով նախատեսված է թվով 76 միկրոավտոբուսային երթուղիներ (1565 միավոր շարժակազմ), թվով 68 ավտոբուսային երթուղիներ (939 միավոր շարժակազմ) և թվով 10 տրոլեյբուսային երթուղիներ (108 միավոր շարժակազմ): Ներկայում ընթացքի մեջ է նոր երթուղային ցանցի ներդրման աշխատանքները: Հաստատված ժամանակացույցի համաձայն անց են կացվել Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների մրցույթներ: Կայացած թվով 21 մրցույթում ընդգրկված է եղել 76 միկրոավտոբուսային երթուղի, որոնցից 62-ում հաղթողներ են ճանաչվել, իսկ 14 երթուղիների մասով կանցկացվեն լրացուցիչ մրցույթներ:

Ավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքում փաստացի գործում են թվով 36 ավտոբուսային երթուղի, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 330-340 միավոր շարժակազմ: Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրելու նպատակով 2012թ. մայրաքաղաք է ներկրվել թվով 249 չինական «HIGER» մակնիշի KLQ6770G մոդելի նոր ավտոբուս, որից 140-ը արդեն իսկ շահագործվում է ներքաղաքային երթուղիներում: Չնայած ավելացել է ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը, ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում այն դեռևս մնում է ցածր՝ կազմելով մոտ 24.0%: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են 12 մասնավոր կազմակերպության, «Ավտոբուս» ՓԲԸ-ի և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից:

Հիմնախնդիր. Երևան քաղաքում դեռևս անբավարար է ավտոբուսային երթուղիների շահագործման արդյունավետությունը. անհրաժեշտ քանակի ավտոբուսների բացակայության պատճառով երթուղիների մի մասը չի սպասարկվում, իսկ մի մասը համալրված է մասնակիորեն:

Մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ է շարունակել ավտոբուսային հավաքակազմի համալրումը փոքր և միջին տեղատարողության, քաղաքային մոդիֆիկացիայի ավտոբուսներով և դրան զուգահեռ կրճատել միկրոավտոբուսների քանակը:

Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում նախատեսվում է առաջիկա 4-5 ամիսների ընթացքում մայրաքաղաք ներկրել (մասնավոր կազմակերպությունների միջոցով) մոտ 150 քաղաքային ավտոբուսներ:

Միկրոավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքում փաստացի գործում է 99 միկրոավտոբուսային երթուղի, որը համալրված է տարբեր մակնիշի մոտ 1900 միավոր շարժակազմով: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում է 55 մասնավոր կազմակերպություն:

Վերջին տարիներին միկրոավտոբուսների թվաքանակի կրճատման հետևանքով զգալիորեն նվազել է միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը: Չնայած դրան, այսօր մայրաքաղաքում ուղևորափոխադրումների հիմնական մասը դեռևս իրականացվում է միկրոավտոբուսներով, որոնց բաժին է ընկնում ընդհանուր ծավալի մոտ 68.0%-ը:

Որոշակիորեն բարելավվել է միկրոավտոբուսային երթուղիների որակական կազմը: 2012թ. ընթացքում անցկացված մրցույթների, երթուղիների շարժակազմերի համալրման (փոխարինման) գործընթացների արդյունքում ներքաղաքային միկրոավտոբուսային երթուղիներում ներգրավվել են հիմնականում «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսներ (այդ թվում՝ 21 հատ նոր), որոնք հիմնականում փոխարինել են հին «ՌԱՖ» և «ԵՐԱԶ» մակնիշների միկրոավտոբուսներին: Չնայած միկրոավտոբուսային երթուղիների աշխատանքների կազմակերպման գործընթացում արձանագրված դրական տեղաշարժերին՝ մայրաքաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկման իրականացումը հիմնականում միկրոավտոբուսներով անընդունելի է:

Երթուղային ցանցը գերհագեցած է միկրոավտոբուսային երթուղիներով, որոնցում շահագործվող շարժակազմի մեծ քանակությունը, մայրաքաղաքի ճանապարհափողոցային ցանցի և կանգառատեղերի փոքր թողունակության պայմաններում, լուրջ դժվարություններ է ստեղծում երթևեկության կազմակերպման առումով, ուստի ուղևորափոխադրումների գործընթացում միկրոավտոբուսների քանակի կրճատումը և դրանց փոխարինումը ավտոբուսներով այլընտրանք չունի:

Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակում արդեն իսկ կրճատվել են թվով 3 միկրոավտոբուսային երթուղի, թվով 4 միկրոավտոբուսային երթուղի փոխարինվել են ավտոբուսայինով, ևս 27 միկրոավտոբուսային երթուղիներ նախատեսվում է փոխարինել ավտոբուսայինով, որի արդյունքում միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը կնվազի և կկազմի ընդհանուրի մոտ 41.0%-ը:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտ

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է թվով 79 տրոլեյբուս (1-ը՝ տեխօգնության): Ընկերության կողմից ներկայում սպասարկվում են թվով 5 տրոլեյբուսային երթուղի, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 50-52 միավոր շարժակազմ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերջին մի քանի տարիների վերլուծությունը ցույց է տվել, որ որոշակիորեն ավելացել է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը: Չնայած այդ հանգամանքին, դեռևս ցածր է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների տեսակարար կշիռը ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում՝ կազմելով մոտ 2.3%:

Կարևորելով քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի դերը ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացում 2006 թվականից վերականգնվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի սուբսիդավորումը ՀՀ պետբյուջեից: 2013թ. համար նախատեսվել է 379.800,0 հազ. դրամ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին:

Մետրոպոլիտեն

Երևանի մետրոպոլիտենում առկա է թվով 45 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ): Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում կազմում է մոտ 6.7%:

Նոր երթուղային ցանցի ներդրման, մասնավորապես, միկրոավտոբուսների քանակի կրճատման արդյունքում, 2012թ. հոկտեմբեր ամսին որոշակիորեն ավելացել է մետրոպո-

լիտենով տեղափոխված ուղևորների քանակը՝ նախորդ տարվա հոկտեմբեր ամսվա համեմատ (մոտ 211.0 հազ. ուղևորով):

Հիմնախնդիր. սահմանափակ են Երևանի մետրոպոլիտենի հնարավորությունները, ցածր է մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության մակարդակը.

Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալների զգալի աճ կարող է տեղի ունենալ միայն գործող գծի ընդլայնման, նոր կայարանների կառուցման և շահագործման, ինչպես նաև, մասնակիորեն, ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի ավարտից հետո:

Շարունակվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիրը, որը նպատակ է հետապնդում բարելավելու Երևանի մետրոպոլիտենի ծառայությունների անվտանգ և ապահով իրագործումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ ներդրումային բաղադրիչներից՝ շարժակազմի արդիականացում, ռելսային գծերի վերականգնում, էլեկտրասնուցման վերականգնում և վերանորոգում, սպասարկման ծառայությունների և ենթակառուցվածքների արդիականացում, ջրի ներհոսքի վերացում: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը կազմում է 15.0 մլն եվրո:

Հասարակական տրանսպորտի կանգառներ

Ընթացիկ տարում զգալիորեն վնասվել են Երևանի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառների գոտիների սահմանագատման նպատակով 2011թ. տեղադրված ռետինե ուղղորդիչները, շատ կանգառներում նաև՝ կանգառանշաններն ու կանգառասրահները:

Անհրաժեշտություն է առաջացել նաև գործող շինարարական նորմերով ու կանոններով, ինչպես նաև ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված պահանջներին համապատասխանեցնել նախկինում տեղադրված որոշ կանգառների տեղերը՝ հաշվի առնելով նաև միջկանգառային հեռավորությունները:

Մայրաքաղաքի նոր երթուղային ցանցի ներդրումը թելադրում է նաև շարունակել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների որոշ նախկին կանգառների վերականգնման, ինչպես նաև, ըստ նոր երթուղիների ուղեգծերում ընդգրկված ճանապարհահատվածների՝ նոր կանգառների սահմանման ուղղությամբ նախկինում մեկնարկած աշխատանքները:

Ավտոկայանատեղեր

Մայրաքաղաքում կայանատեղիների շահագործման իրավունքի տրամադրման առնչությամբ վարչական շրջանների ղեկավարների և տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված շուրջ 400 պայմանագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ լրացուցիչ չափազրման, զբաղեցրած տարածքների մակերեսների հստակեցման, տրանսպորտային միջոցների կայանման ձևի ճշգրտման կարիք կա:

Անհրաժեշտություն է առաջացել նաև «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովման համար թվով 3 ենթաօրենսդրական ակտերի՝ «Ավտոկայանատեղի տուրքերի դրույքաչափերը և վճարման ձևերը սահմանելու մասին», «Ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը սահմանելու մասին» և «Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» Երևանի ավագանու որոշումների նախագծեր մշակելու համար, ինչը ոլորտի կանոնակարգմանն ուղղված հիմնական քայլերից առանցքայինն է:

Հաշմանդամների տրանսպորտային սպասարկում

Հիմնախնդիր. հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը անբավարար է:

Երևան քաղաքի ներքաղաքային երթուղիներում շահագործվում են ընդամենը 2 հաստ «ԼԻԱԶ» մակնիշի տրուլեյբուսներ, որոնք իրենց կառուցվածքով հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկումն իրականացնելու համար:

Հաշմանդամների տրանսպորտային ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքները դեռևս անբավարար են: Առաջիկա տարիներին նախատեսվում է իրականացնել կոնկրետ ծրագրային միջոցառումներ՝ հաշմանդամների սպասարկման համար հարմարեցված տրանսպորտային միջոցների քանակն ավելացնելու նպատակով:

Երթակարգավարական կետեր

Երևան քաղաքում առկա են թվով 38 երթակարգավարական կետեր, որոնց միջոցով կարգավորվում է ներքաղաքային ավտոբուսային, միկրոավտոբուսային և տրուլեյբուսային երթուղիների աշխատանքը: Նշված կետերում հիմնականում տեղակայված են տաղավարներ, որոնք ենթակա են վերանորոգման, բացի այդ՝ անհրաժեշտություն կա երթուղիների վերջնակետերում նոր տաղավարների տեղակայման: Երթակարգավարական կետերի մոտ հիմնականում չկան սան. հանգույցներ, ինչը խնդիրներ է առաջացնում երթակարգավարների և վարորդների աշխատանքի կազմակերպման հարցերում: Սան. հանգույցների կառուցման, տեղակայման հարցը լուրջ և մոտակա տարիներին լուծում պահանջող հիմնախնդիր է:

2012 թվականին իրականացված ծրագրեր

Մշակվել և Երևանի քաղաքապետի 2012թ. մարտի 30-ի հ.2911-Ա որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների նոր երթուղային ցանցը:

2012թ. հունիս ամսից սկսվել է նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացը: Հաստատված ժամանակացույցի համաձայն անց են կացվել Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների մրցույթներ:

Մրցույթի են դրվել բոլոր ավտոբուսային (68 հաստ) և միկրոավտոբուսային (76 հաստ) երթուղիները: Հաղթողներ են ճանաչվել թվով 29 ավտոբուսային և թվով 71 միկրոավտոբուսային երթուղիների համար: Մնացած երթուղիների համար հայտարարված են լրացուցիչ մրցույթներ:

Հիմնախնդիր. համալրված չէ մայրաքաղաքի ավտոբուսային հավաքակազմը, ներքաղաքային երթուղիներում դեռևս մեծ քանակ են կազմում միկրոավտոբուսները.

Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև տնտեսական և տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում մայրաքաղաք է ներկրվել Չինաստանի կառավարության կողմից նվիրատվության կարգով տրամադրված «Հայգեր» մակնիշի KLO6770G մոդելի թվով 249 նոր քաղաքային ավտոբուսներ և կազմակերպվել դրանց շահագործման աշխատանքները՝ նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում (ներկայումս չինական ավտոբուսներով սպասարկվում են թվով 14 երթուղիներ):

Շարունակվել են աշխատանքները մայրաքաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրելու ուղղությամբ. Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերված առաջիկա 4-5 ամիսների ընթացքում մասնավոր կազմակերպությունների կողմից մոտ 150 քաղաքային ավտոբուսների ձեռք բերման հարցում:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ շարունակվել են աշխատանքները Երևան քաղաքի վարչական տարածք միջ-

մարզային երթուղիների մուտքը սահմանափակելու, ուղեգծերը և վերջնակետերը վերանայելու, ինչպես նաև դրանց աշխատանքը կանոնակարգելու ուղղությամբ:

Երևանի մետրոպոլիտենում 2012թ. 9 ամիսների ընթացքում, գնացքների անվտանգ երթևեկության և ուղևորափոխադրումների հարմարավետության ապահովման նպատակով, կատարվել են թվով 4 վագոնի արդիականացում, գծի վերաբեռնավորում, «Ձորավար Անդրանիկ» կայարանին հարակից թունելների ջրառատ հատվածների թուջե երեսարկի առողջացում, նոր մոնտաժվող 6 կվտ լարման մալուխների տեղի նախապատրաստում և մալուխային կանգնակների փոխարինում, «Երիտասարդական» կայարանի հ.2 շարժասանդուղքի հիմնանորոգում, 6 կվտ լարման մալուխների և ուղղիչ սարքերի մոնտաժում:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության և ՀՀ ճանապարհային ոստիկանության համապատասխան մասնագետների հետ համատեղ՝ 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում ուսումնասիրվել, գույքագրվել և քարտեզագրվել են մայրաքաղաքում գործող ավտոկայանատեղերը:

ՀՀ ճանապարհային ոստիկանության համապատասխան մասնագետների հետ համատեղ ուսումնասիրվել, գույքագրվել են մայրաքաղաքում տեղադրված ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների փաստացի վիճակը և տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ տարվել են համապատասխան աշխատանքներ, մասնավորապես.

- թվով 12 խաչմերուկում լուսացուցային օբյեկտներ փոխարինվել են նոր ժամանակակից լուսացուցային օբյեկտներով.

- թվով 7 խաչմերուկում կիրառվել է երթևեկության լուսացուցային կարգավորում՝ տեղադրվել են նոր լուսացուցային օբյեկտներ (Ա.Խաչատրյան-Կյուլպենկյան փողոցների խաչմերուկ, Աճառյան-Ծարավ Աղբյուրի փողոցների խաչմերուկ, Հալաբյան-Արելյան փողոցների խաչմերուկ, Գալշոյան-Միկոյան փողոցների խաչմերուկ, Հասրաթյան-Մարտիրոսյան փողոցների խաչմերուկ, Դ.Բեկի-Գաջեգործների փողոցների խաչմերուկ, Պարոնյան-Չորափի փողոցների խաչմերուկ):

- տեղադրվել են 1590 նոր ճանապարհային նշաններ.

- 400 ճանապարհային նշաններ փոխարինվել են նորերով.

- կատարվել է 2.100.000մ գծանշման աշխատանքներ.

Մայրաքաղաքի կենտրոնում շուրջ 2,5 կմ երկարությամբ ստեղծվել է և համապատասխան ճանապարհային նշաններով ու գծանշումներով կահավորվել առաջին հեծանվային արահետը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության հետ համատեղ մշակվել է Երևանի «Սիթի Տուր» զբոսաշրջային ավտոբուսների համար նախատեսված երթուղի, որի համար առանձնացվել են նաև համապատասխան գծանշմամբ կայանատեղեր, իրականացվել են դրանց գծանշման աշխատանքներ:

Վերականգնվել և նորերով են փոխարինվել թվով 80 ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի կանգառագոտիների 814 ռետինե ուղղորդիչները:

Հիմնախնդիր. ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառներում բարեկարգման և կահավորման կարիք կա:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, կոնկրետ առաջարկություններ են ներկայացվել որոշակի կանգառներում և հետիոտնային անցումներին կից հատվածներում հողաձածկ շերտի հաշվին հարթակներ կառուցելու ուղղությամբ, որը գործող օրենսդրությամբ՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառների համար սահմանված պարտադիր նորմ է:

Ուսումնասիրվել են նաև որոշ հին կանգառների վերականգնման, ինչպես նաև նորերի սահմանման հնարավորությունները, որի արդյունքում՝ Երևանի քաղաքապետի

համապատասխան որոշումներով սահմանվել են շուրջ 30 կանգառներ, որոնց կահավորման համար միջնորդագրեր են ուղարկվել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն:

Երևանի քաղաքապետարանի ծրագրերով 123 ավտոբուս, մետրոյի 10 կայարան, 7 այգի ու պուրակ արդեն ապահովված են WiFi համակարգով: Հասարակական տրանսպորտի կանգառներում էլեկտրոնային չվացուցակների համակարգի տեղադրման աշխատանքների կատարման նպատակով ներկրվել են GPS համակարգեր, և առաջիկայում մայրաքաղաքի կանգառասրահներում կսկսվի առաջիկա փորձնական էլեկտրոնային չվացուցակների տեղադրումը:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

2013 թվականի կշարունակվեն աշխատանքները փոքր և միջին տեղատարողության նոր, քաղաքային ավտոբուսների ձեռքբերման ուղղությամբ: Այս աշխատանքներում նախատեսվում է ընդգրկել մասնավոր կազմակերպություններին:

Հաշմանդամների հարմարավետ և անվտանգ տեղաշարժն ապահովելու համար նախատեսվում է մայրաքաղաք ներկրվելիք ավտոբուսների վերասարքավորում:

Կազմակերպվեն և կանցկացվեն լրացուցիչ մրցույթներ ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար: Արդյունքում՝ կկրճատվեն միկրոավտոբուսների քանակը, և կապահովվի սահմանված քանակի ավտոբուսային երթուղիների սպասարկումը:

Կշարունակվի ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացը:

Տրոլեյբուսային տնտեսության բարելավմանն ուղղված կիրականացվեն ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:

Երևանի քաղաքային ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառների կահավորման և նործ կանգառների սահմանման աշխատանքները շարունակական բնույթ են կրելու:

Հիմնախնդիր. կայանատեղերի կազմակերպման, շահագործման և դրանց գործունեության կանոնակարգման անհրաժեշտություն կա:

Այս հիմնախնդրի լուծման նպատակով կիրականացվեն ավտոկայանատեղերի կանոնակարգմանն առնչվող օրենսդրական և կազմակերպչական միջոցառումներ, շարունակական բնույթ կկրեն 2012 թվականին իրականացված աշխատանքները:

Միասնական տոմսային համակարգի անցման գործընթացի շրջանակում ուղեվարձի գանձման ավտոմատացված սարքերի հնարավոր ներդրման աշխատանքները կշարունակվեն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիճակի գնահատում

	ք. Երևան
Ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը, հա	832.0
որից՝	
<i>փողոցների սիզամարգեր</i>	145.8
<i>գրոսայգիներ</i>	147.7
<i>պուրակներ</i>	34.5
<i>անտառ-պուրակներ</i>	497.5
Ընդհանուր ծառերի թիվը (հատ)	345443
Ծաղկային մակերես, հա	6.5

2012 թվականին իրականացված ծրագրեր

Տարվա ընթացքում կանաչապատվել, ծաղկապատվել և ձևավորվել են վարչական բոլոր շրջանների այգիները, պուրակները, բակային տարածքները, կամուրջների և մայրերի հարակից հատվածները, ինչպես նաև ավտոճանապարհների ու պողոտաների միջնամասերը: Հատուկ ուշադրություն է դարձվել մայրաքաղաքի մուտքերի կանաչապատմանն ու գեղարվեստական ձևավորմանը: Այս տարի մայրաքաղաքում կանաչ գոտիների պահպանության ու նաև նորերի ստեղծման ուղղությամբ տարված աշխատանքների արդյունքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը մայրաքաղաքում հասել է 842 հեկտարի (այս ցուցանիշը 2004թ. եղել է 530 հեկտար):

Ոռոգման և մշակման աշխատանքներ են իրականացվել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հարակից անտառային գոտում, Նորքի անտառ-պուրակում, «Հաղթանակ» զբոսայգում:

2012 թվականի ընթացքում մայրաքաղաքում իրականացվել են ընդհանուր 19500 գծմ երկարությամբ ոռոգման ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ հետևյալ հատվածներում՝ Դ.Բեկ, Աճարյան-Բաբաջանյան, Իսահակյան, Ռուբինյան, Բաշինջաղյան, Սարյան, Տիգրանյան, Բազրատունյաց փողոցներ, Եռաբլուր, Շախմատի ակադեմիա, 16թաղ. 2, 3 շրջաններ, Կոմիտասի անվան զբոսայգի:

Հիմնախնդիր. Երևան քաղաքի անբարենպաստ տեխնածին և կլիմայական գործոնների ազդեցության պայմաններում բացակայում են պաշտպանիչ տնկարկները և դրանց էկոլոգիապես կայուն տեսակները:

Հիմնախնդրի լուծման նպատակով, սիզամարգերի ստեղծման և ծաղկապատման աշխատանքների շրջանակում, ստեղծվել և ծաղկապատվել են ընդհանուր 17.9 հեկտար տարածք հետևյալ հատվածներում՝ Զովունի խճուղի, Աշտարակի խճուղի, Մյասնիկյան-Աճառյան կամրջի աջ մաս, Հալաբյան միջնաշերտ, Դ.Անհաղթ, Դրո, Դավթաշենի կամուրջ:

2012 թվականին ստեղծվել են մակերեսով նոր սիզամարգեր, տարբեր վարչական շրջաններում ստեղծվել և բացվել է 20 այգի և պուրակ:

Զբոսայգիների և պուրակների վերակառուցման ծրագրի շրջանակում 2012թ. իրականացվել են ընդհանուր 5.3 հեկտար տարածքի վերականգնման աշխատանքներ հետևյալ վայրերում՝ Շողակաթ հեռ. հարավից, Էրեբունու մանկական զբոսայգիներ, Աջափնյակի նորաբաց այգի, Ավան վարչական շրջանում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, Մաշտոցի պուրակ:

Գարնանային և աշնանային ծառատունկի միջոցով մայրաքաղաքում 2012 թվականին տնկվել է 40 հազար ծառ և թուփ (հացենի, կաղնի, ակացիա, սոսի, եղևնի և այլ

ծառատեսակներ): Տնկված ծառերի կաշնդականությունը կազմել է շուրջ 70 տոկոս, ինչն աննախադեպ ցուցանիշ է մայրաքաղաքի բնակլիմայական պայմաններում:

2012թ. Գլխավոր պողոտայի՝ Մաշտոցի պողոտա-Սարյան փողոց միջանկյալ հատվածում բացվել է Նոտարական ծառուղի: Նոտարական պալատի նախաձեռնությամբ ծառուղում տեղադրվել են նստարաններ, աղբամաններ:

Ծաղկապատման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման նպատակով ձեռք են բերվել 1 մլն հատ հողանդական ծաղկասածիլներ, բուսահող, կարմիր ավազ, տնկիներ: Երևան քաղաքի ծաղկապատման աշխատանքների շրջանակում ձեռք են բերվել գնդաձև ակացիաների տնկիներ, 300000 հատ վարդակակաչներ: Այս տարի առաջին անգամ մայրաքաղաքում կիրառվել է ձևավոր ծաղկապատման մշակույթը՝ դիզայներական հարուստ լուծումներով:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Այգիների և պուրակների վերակառուցման, ինչպես նաև նորերի ստեղծման ծրագրերը լինելու են շարունակական, և հաջորդ տարիներին մյուս վարչական շրջաններում ևս կլինեն հանգստի կենտրոններ:

Ոռոգման ցանցերի կառուցում և վերանորոգում,

Ոռոգման ցանցերի կառուցման և վերանորոգման ծրագիրը 2013 թվականին կրելու է շարունակական բնույթ: Այս ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել ընդհանուր 20500 գծմ երկարությամբ (313.218,2 հազ. դրամ՝ Երևանի բյուջե) ոռոգման ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ:

Ծրագրի իրականացման արդյունքում 2013թ. նոր ոռոգման ցանցերի երկարությունը նախորդ տարվա համեմատ կավելանա 1000 գծմ-ով:

Նախատեսվում է աշխատանքներ իրականացնել հետևյալ վայրերում՝

Ն.Նորք վարչական շրջան - Գայի պողոտա (Գայի արձանի - Հայկի արձանի խաչմերուկի աջ և ձախ կողմերը), Նանսենի անվան այգի:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան - Սևակի փողոց (Ունեցի - Ազատության պողոտա), Հաղթանակ զբոսայգի, Ահարոնյան փողոց:

Արաբկիր վարչական շրջան - Գրիբոյեդով, Վրացական, Վաղարշյան փողոցներ, Քանաքեռ ՀեԿ-ի պուրակ:

Շենգավիթ վարչական շրջան - Զեխով փողոց, Արշակունյաց պողոտա (ձախակողմյան հատված), Բազրատունյաց պողոտա (Գ.Նժդեհ հրապարակ-Արշակունյաց պողոտա):

Կենտրոն վարչական շրջան - Իսակով պողոտա, Գլխավոր պողոտա (Հանրապետության փողոց-Նալբանդյան փողոց և Մաշտոց-Սարյան փողոց), Սայաթ-Նովա պողոտա (Նալբանդյան, Խանջյան փողոց), Արշակունյաց պողոտա (սկզբնամաս):

Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջան - Բաբաջանյան, Օգանով փողոցներ, Փարոսի անտառ - պուրակ:

Աջափնյակ վարչական շրջան - Արզումանյան, Էստոնական փողոցներ:

Ավան վարչական շրջան - Բրյուսովի թաղամաս, Ընտանիքի այգի, Քուչակի թաղամաս:

Նուբարաշեն վարչական շրջան - Նորաստեղծ պուրակ, փոքր Միեր կրթահամալիր:

Նոր սիզամարգերի ստեղծում

Առկա հիմնախնդիրների լուծման նպատակով 2013 թվականին նախատեսվում է ստեղծել 20.0 հեկտար նոր սիզամարգեր: Ծրագրի իրականացման արդյունքում 2013 թվականին դրանք կավելենան նախորդ տարվա համեմատ 2.1 հեկտարով:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ վայրերում՝

Նուբարաշեն վարչական շրջան - Նուբարյանի անվան զբոսայգի (ներառյալ ոռոգման ցանցի ստեղծում):

Դավթաշեն վարչական շրջան – 1 և 2 թաղամասերի միջև գտնվող զբոսայգի (ներառյալ ոռոգման ցանցի ստեղծում):

Նոր Նորք վարչական շրջան - Դ.Բեկ փողոց (Հայրորդաց տան թև, ներառյալ ոռոգման ցանցի ստեղծում):

Նորք-Մարաշ վարչական շրջան - Արմենակյան փողոց դեպի բժշկական կենտրոն (ներառյալ ոռոգման ցանցի ստեղծում):

Աջափնյակ վարչական շրջան - Հալաբյան փողոց (ձախ լանջ, ներառյալ ոռոգման ցանցի ստեղծում):

Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջան - Իսակով պողոտայի ուղետար կամրջի ձախակողմյան հատված:

Ծաղկանոցների ստեղծում

Ծաղկային տարածքների մակերեսը 2013 թվականին նախատեսվում է հասցնել 6.8 հեկտարի, ի դեպ ծաղկապատման ոլորտում առաջին անգամ նախատեսվում է իրականացնել թվով 300000 հատ վարդակակաչների տնկում, ինչի շնորհիվ գալիք տարվա ապրիլ-մայիս ամսին Երևան քաղաքը ձևավորված կլինի բազմերանգ ծաղկած վարդակաչներով: Ծաղկապատման աշխատանքների շրջանակում շարունակական բնույթ է կրելու հոլանդական ծաղկասածիլների ներմուծումը:

Հիմնախնդիր. Երևան քաղաքի կանաչապատման զարգացման ծրագրի մշակումը, որը հնարավորություն կընձեռնի ոչ միայն լուծելու փոշու, ծանր մետաղներով աղտոտվածության նվազեցման, քամիների մեղմման խնդիրը, այլ նաև ունենալու ֆունկցիոնալ տեսակետից առողջ, գեղեցիկ և ժամանակակից նորմատիվներին համապատասխանող կանաչ զանգվածներ:

Կանաչ տարածքների հիմնման և պահպանման ծրագրով նախատեսվել է 1.437.100,0 հազ. դրամ, որից 1.377.100,0 հազ. դրամը կազմում են պահպանման ծառայությունները, նյութերը և ոռոգման ջրի արժեքը: Տնիկների ձեռքբերման համար հատկացվել է 20.000,0 հազ. դրամ, 40.000,0 հազ. դրամ՝ քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերի համար: Այս ծրագիրը 2013 թվականի բյուջետային գործընթացում դիտվել է որպես գերակայություն:

Ծառատունկ

2013թ. նախատեսվում է կատարել թվով 300000 հատ ծառերի տնկման աշխատանքներ՝ հիմնականում դրանք ունենալու են բուֆերային գոտու դերակատարություն, որը նվազեցնելու է ուժգին քամիների ներթափանցումը և փոշու ազդեցությունը մայրաքաղաքի վրա՝ դրանով իսկ մասամբ լուծվելու է առկա հիմնախնդիրը:

Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում տնկվելու են 5000 հատ գնդաձև ակացիաներ, որոնք ոչ միայն գեղեցիկ տեսք են հաղորդելու շրջապատին, այլ նաև բնապահպանական տեսակետից զգալի ֆունկցիոնալ դերակատարություն են ունենալու:

Ծաղկային կոմպոզիցիաներ

Մայրաքաղաքի զբոսայգիներում, պուրակներում, կենտրոնական փողոցներում տեղադրվելու են թվով 70 հատ տարբեր թեմաների և ոճի ծաղկազարդված կոմպոզիցիաներ:

Սիզամարգերի ստեղծման և ծաղկապատման աշխատանքներն իրականացնելու նպատակով Երևանի 2013թ. բյուջեի միջոցներից նախատեսվում է տրամադրել 327.400,0 հազ. դրամ: Այս ծրագրի շրջանակում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի փողոցների, հրապարակների և քաղաքի մուտքերի շրջակայքը:

**Բնապահպանության ոլորտում իրականացվող աշխատանքների դինամիկան
 2009-2013թթ.**

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Զափի միավոր	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ. (նախատեսված)
1.	Միզամարզերի բարելավում և նորերի ստեղծում	հա	4.0	7.0	12.0	17.9	20.0
2.	Ծառերի և թփերի տնկում	հատ	15000	18000	25000	28000	30000
3.	Ծաղկանոցների ստեղծում	հա	4.8	5.2	5.3	6.5	6.8
4.	Ոռոգման ցանցերի վերակառուցում և ստեղծում	կմ	4.0	12.6	12.0	19.5	20.5
5.	Զբոսայգիների և պուրակների բարեկարգում և ստեղծում	հա	-	1.0	1.5	5.3	5.5
6.	Մայրաքաղաքի մուտքերի կանաչապատում	հա	-	-	5.0	9.2	-
7.	Ծառերի ձևավորում	հատ	9000	11000	12500	14000	17000
8.	Ծաղկային կոմպոզիցիաների տեղադրում	հատ	-	-	8	40	70
9.	<u>Վարդակակաչների տնկում (տնուկներ)</u>	<u>հատ</u>	<u>=</u>	<u>=</u>	<u>=</u>	<u>=</u>	<u>300000</u>

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

	Երևանի քաղաքապետարանի ենթակայության
Հանրակրթական դպրոց	161
այդ թվում՝	
հիմնական դպրոց	141
միջնակարգ դպրոց	15
կույրերի երեկոյան	1
հատուկ հանրակրթական դպրոց	2
կրթահամալիր	2
Աշակերտների ընդհանուր թիվը	78956
Ուսուցիչների ընդհանուր թիվը	6054
Ոչ պետական լիցենզավորված ուսումնական հաստատություններ	46
Մանկապարտեզներ	161
Երեխաների թիվը	31174
Ոչ պետական մանկապարտեզներ	53
Համակարգիչների թիվը դպրոցներում	3023
Էլեկտրոնային գրատախտակներ	48

2012 թվականին իրականացված ծրագրեր

Դպրոց

Քաղաքապետի, ՀՀ ԿԳ նախարարի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ «Դպրոցի կառավարման տեղեկատվական համակարգի» (dasaran.am) ներդրման նպատակով, որի շնորհիվ հնարավոր է դարձել վերահսկել աշակերտ-ուսուցիչ-ծնող կապը, իսկ դպրոցի կառավարումը՝ առավել թափանցիկ:

Կիրարկվում են «Հանրակրթության պետական կրթակարգի» պահանջները. 2011-2012 ուսումնական տարում դպրոց են մտել պետական ծրագրով նախատեսված նոր դասագրքեր: Ստեղծվում են համակարգչային հայալեզու էլեկտրոնային ծրագրեր (համակարգչային դասագրքեր, ուսուցողական նյութեր):

Կազմակերպվել է դպրոցների համացանցային կայքերի ստեղծման և էլեկտրոնային հասցեների ապահովման գործընթացը:

Երևանի քաղաքապետարանի շատ դպրոցներում օգտագործվում է համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը դասադասարանում: Երևանի քաղաքապետարանի և UCOM ծրագրի համագործակցությամբ Երևանի 12 դպրոցում իրականացվել է հեռուստակամուրջ-հայրենագիտության դաս սփյուռքի դպրոցների հետ: Ծրագիրը շարունակական է:

Հիմնական և ավագ 36 դպրոցում կառուցվել են կաթսայատներ և տեղադրվել ջեռուցման համակարգեր:

2012թ. լոկալ ջեռուցում չունեցող 17 հիմնական և 7 ավագ դպրոց ապահովվել են ջեռուցման համակարգով: ՀՀ պետական բյուջեով հիմնանորոգվել է 22 դպրոց:

Կազմակերպվել է Վեհափառ Հայրապետի հովանավորությամբ իրականացվող «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական առարկաների ուսուցիչների, ինչպես նաև «Տարվա լավագույն տնօրեն, ուսուցիչ, դաստիարակ» մրցույթների քաղաքային փուլերը:

Անցկացվել են առարկայական օլիմպիադաներ: Համայնքային փուլին մասնակցել է 7845 դպրոցական, քաղաքային փուլին՝ 1570: Տարբեր կարգի դիպլոմների է արժանացել 310-ը:

Առաջին կարգի 63 դիպլոմակիր Երևանի քաղաքապետի կողմից պարգևատվել է Եղիշե Չարենցի «Վերջին խոսք» անտիպների ժողովածուով:

Համագործակցություն

2012թ. փետրվարի 2-ին Երևանի քաղաքապետարանում հանդիպում է տեղի ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ: ՖՄԿ-ի լեզվաբանական ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի կողմից կազմվել են ՖՄԿ-ին են ներկայացվել կրթության ոլորտին վերաբերող ծրագրային առաջարկություններ:

ՀՀ Ֆրանսիայի դեսպանատան, ՀՀ արտաքին կապերի նախարարության ֆրանկոֆոնիայի հարցերով բաժնի համագործակցությամբ մայրաքաղաքի ֆրանսերեն ուսումնասիրող դպրոցներում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ: Ֆրանկոֆոն քաղաքապետների միջազգային ասոցիացիայի աջակցությամբ Երևանի հ. 48, 78 դպրոցներում վերանորոգվել են ֆրանսերենի կաբինետները, համալրվել համակարգիչներով և լինգվիստային սարքերով:

2012թ. հունիսին Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակությունը Մարսելի քաղաքապետի հրավերով մեկնեց Մարսել՝ երկու քաղաքների բարեկամության և համագործակցության 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը մասնակցելու նպատակով: Այցի շրջանակում ձեռքբերված պայմանավորվածության համաձայն Երևանի քաղաքապետարանը Մարսելի քաղաքային համայնքին և Մարսելի քաղաքապետարանին են ներկայացրել տարբեր ոլորների, այդ թվում՝ կրթության ոլորտի վերաբերյալ առաջարկություններ: Հուլիսին Երևանի քաղաքապետը հանդիպեց մասնավոր այցով Երևանում գտնվող Մարսելի փոխքաղաքապետ Դ.Փարաքյանի հետ և քննարկվեցին մանկապարտեզի, դպրոցի աջակցության հարցը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1180 աշակերտի համար ներառական կրթություն է իրականացվել մայրաքաղաքի 41 դպրոցում, որտեղ նրանց համար ապահովվել են համապատասխան պայմաններ: Նրանց հետ աշխատել են 185 հատուկ մանկավարժներ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ և լոգոպեդներ:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ ներառական կրթություն իրականացնող դպրոցները ապահովվել են թեքահարթակներով: Ծրագիրը շարունակական է:

Կատարվել է պարտադիր ուսուցումից դուրս մնացած անչափահասների հաշվառում և ընդգրկում ուսումնական հաստատություններ: ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ ոստիկանության անչափահասների հարցերով զբաղվող բաժինների հետ շարունակվում է համագործակցությունը՝ «Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի» շրջանակում:

Կարևորելով դպրոցականների գեղագիտական և բարոյական դաստիարակությունը՝ Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ մայրաքաղաքի 58475 աշակերտ այցելել է Երևանի թվով 9-ը թատրոն, 14 թանգարան և ֆիլիարմոնիա, այցելել է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ա.Խաչատրյանի անվան մեծ համերգասրահ, Մատենադարան:

2012 թվականին ՅՈՒՆԵՍԿՕՅԻ հայտարարած «Երևանը գրքի մայրաքաղաք» ծրագրի շրջանակում՝ դպրոցների բակերում, Հանրապետության հրապարակում, տարբեր բեմահարթակներում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Չարենցի տուն-թանգարանի, «Էդիտ պրինտ» հրատարակչության, «Հայ ասպետ» և այլ կազմակերպությունների համագործակցությամբ կազմակերպվել են մրցույթներ՝ «Ժամանակ մի կորցրու, կարդա», «Ե. Չարենց 115»:

Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԳ նախարարության և շախմատի ակադեմիայի համագործակցությամբ **հաջողությամբ իրականացվել է շախմատի մուտքը դպրոց:** Ստեղծվել

են շախմատի առանձին կաբինետներ՝ համապատասխան գույքով (պատի և սեղանի շախմատ, ժամացույց): Դպրոցները ապահովվել են շախմատի հինգ անուն դասագրքերով: Ընթացքի մեջ է դասագրքերի բաշխումը:

Նախադպրոցական կրթություն

«Օգնիր մանկապարտեզիդ» կայքի միջոցով հավաքագրված գումարով 2012 թվականին ձեռք են բերվել սառնարաններ, համակարգիչներ, մահճակալներ և այլ գույք: Մասնակի վերանորոգվել է 8 մանկապարտեզ: Վարչական շրջանների 75 մանկապարտեզ համարվել է 414 սեղանով, 2360 աթոռով, 60 մահճակալով: «Առդա» բարեգործական հիմնադրամի կողից իրականացվել է մի շարք մանկապարտեզների վերանորոգում, գույքի, գրենական պիտույքների հատկացում և այլն:

Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների համար նախատեսվում է 2013 թվականին ձեռք բերել և թարմացնել մահճակալներ, սեղաններ, աթոռներ, սարքավորումներ և սպասք: Այս ծրագրի իրականացման համար Երևանի 2013 թվականի բյուջեով կհատկացվի 505.000,0 հազ. դրամ:

2012 թվականին ավարտվել են մայրաքաղաքի բոլոր մանկապարտեզների ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքները:

Մանկապարտեզներն ապահովվել են ուսումնամեթոդական գրականությամբ և իրավատեղեկատվական ձեռնարկներով:

Վերապատրաստվում են մանկապարտեզների դաստիարակները:

Հիմնախնդիր. կրթական օջախների շենքերի անմխիթար վիճակը

Մայրաքաղաքում գործող գրեթե բոլոր մանկապարտեզները, հիմնական և ավագ դպրոցները հիմնանորոգման կարիք ունեն: Երևանի քաղաքապետարանի կրթական օջախների նորոգման ծրագրերով՝

2012թ.՝ հիմնանորոգվել է 26 մանկապարտեզ:

2013թ.՝ նախատեսվում է 11 վարչական շրջանների մանկապարտեզներում (յուրաքանչյուրի համար նախատեսված է 50.000,0 հազ. դրամ) իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ (550.000,0 հազ. դրամ՝ Երևանի բյուջե): 2012թ. Նուբարաշեն վարչական շրջանում գործող մանկապարտեզում ավարտվել են հիմնանորոգման աշխատանքները:

2013 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Մանկավարժների խրախուսման նպատակով կանցկացվեն «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլերը, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերը (քաղաքային, հանրապետական փուլ):

2013 թվականին կկազմակերպվեն և կանցկացվեն սովորողների XXII մարզական խաղեր, առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային և հանրապետական փուլերը:

Կանցկացվեն անվանակիր դպրոցների անվանատուններին նվիրված շաբաթներ, տասնօրյակներ և միամյակներ, ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող հոբբեյանական և այլ միջոցառումներ: Կկազմակերպվի «Երևանը գրքի մայրաքաղաք» միջազգային ամփոփիչ հանդիսությունը: Ըստ համացանցում տեղադրված ժամանակացույցի կիրականացվի «Դասը վարում է մտավորականը» հանդիպումների շարքը:

Սահմանափակ կարողություններով երեխաների ինտեգրումը հասարակությանը կազմակերպելու նպատակով նրանք կընդգրկվեն իրականացվող մարզական և այլ կարգի

մրցույթներում: Վերջիններիս համար իրականացվելու է մայրաքաղաքի մշակութային օջախների այցելելության ծրագիրը:

Բարեկարգ շրջակայք, կանաչապատ և ծառաշատ դպրոց ու մանկապարտեզ ունենալու նպատակով կիրականացվի բարեկարգման ու կանաչապատման ծրագիր:

Հիմնախնդիր. նորագույն տեխնոլոգիաների ներդրում դպրոցներում և մանկապարտեզներում:

Այս հիմնախնդրի լուծմանն է ուղղված Երևանի քաղաքապետարանի և UCOM-ի համագործակցության ծրագիրը: Ծրագրի իրականացման արդյունքում Երևանի շարունակվելու է դպրոցներում կազմակերպվել հեռուստականուրջ-հայրենագիտության դաս սփյուռքի դպրոցների հետ:

«Առդա» բարեգործական հիմնադրամը կշարունակի համագործակցությունը դպրոցների և մանկապարտեզների հետ:

Սովորողների քաղաքացիական, մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովման նպատակով շարունակվելու է համագործակցությունը տուն-թանգարանների, ՀՀ գրողների միության, մշակութային տարբեր օջախների հետ:

«Վորլդ Վիժն», «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունների կրթական և «Քայլ առ քայլ» ծրագրերի հետագա գործունեությունը կապահովվի ներառական կրթություն իրականացնող հաստատություններում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Վիճակի բնութագիր

Երևան քաղաքում կենտրոնացած են բժիշկների 68.8%-ը, ստացիոնար բուժօգնությունների՝ 38.5%-ը, հիվանդոցային մահճակալների՝ 61.2%-ը, ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների՝ 27.1%-ը:

Երևան քաղաքում օգնությունն ու սպասարկումն իրականացվում է 108 առողջապահական կազմակերպությունների կողմից:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գործում է մեկ գիտահետազոտական ինստիտուտ և շտապբուժօգնության ծառայություն:

	Երևանի քաղաքապետարանի ենթակայության
Առողջապահական հիմնարկ	34
Բժշկական կենտրոն	4
Մասնագիտացված հիվանդանոց	2
Ծննդատուն	1
Պոլիկլինիկա	22
Բուժանմաս	1
Դիսպանսեր	2

2012 թվականին իրականացված ծրագրեր

2012 թվականին շարունակվել է առողջապահական ընկերությունների շենքերի պահպանմանն ու վերականգնմանն ուղղված ընթացիկ հիմնանորոգման աշխատանքները և ջեռուցման համակարգերի տեղադրումը:

Երևանի զարգացման 2012 թվականի ծրագրով և Երևանի բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել է «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ մասնաշենքը: Մի շարք պոլիկլինիկաներում կատարվել են շենքերի արտաքին տեսքի բարելավման և մուտքերի դռների կապիտալ նորոգման աշխատանքներ:

«Առողջապահական օբյեկտների թեքահարթակների կառուցում» ծրագրի շրջանակում սահմանափակ կարողություններով անձանց համար քաղաքապետարանի ենթակայության ընկերություններում կառուցվել են թեքահարթակներ, պոլիկլինիկաների առաջին հարկերում առանձնացվել են հարմարեցված բուժսենյակներ՝ հաշմանդամների հարմարավետ բուժապասարկումն իրականացնելու համար:

«Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ-ում իրականացվել է 32.3 մլն դրամ արժողությամբ լոկալ ջեռուցման համակարգի տեղադրման ծրագիր՝ Երևանի բյուջեի միջոցներով:

2012թ. իրականացվել է գազամատակարարման և ջեռուցման համակարգով ապահովման ծրագիր, որի շրջանակում լոկալ ջեռուցման համակարգերի տեղակայման աշխատանքներ են կատարվել «Արաբկիր» մանկական պոլիկլինիկա», «Նոր Արեշ» պոլիկլինիկա», «Թիվ 12 պոլիկլինիկա» և «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ներում:

2012թ. մարտի 8-ից ապրիլի 7-ը, կանանց միամսյակին նվիրված, մայրաքաղաքում անցկացվել է առողջապահական ակցիա՝ «ԶԵԶ ՀԱՄԱՐ ԿԱՆԱՅԷ» խորագրով: Ակցիայի շրջանակում Երևան քաղաքի ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բոլոր բուժօգնություններում և մի շարք բժշկական կենտրոններում («Քանաքեռ-Զեյթուն», «Սուրբ Աստվածամայր», «Գրիգոր Նարեկացի» ԲԿ-ներ, Սրտաբանության ԳՀԻ, Երևանի պետական բժշկական համալսարանի թիվ 1 և թիվ 2 կլինիկական հիվանդանոցներ, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, թիվ 2 բուժմիավորում, Շենգավիթ ԲԿ և Երևանի էնդոկրինոլոգիական դիսպանսեր) բուժօգնությունը կանանց համար եղել է անվճար: Ծրագրի շրջանակում պոլիկլինիկաներ են դիմել 12500 կին, ստացիոնարներում բուժվել կամ վիրահատվել են 586 կին:

2012թ. դեկտեմբերին սոցիալապես անապահով խավի համար Երևանի բոլոր պոլիկլինիկաներում կազմակերպվել են Բաց դռների օրեր: Ակցիայի շրջանակում, անհրաժեշտության դեպքում, կատարվել են նաև դժվարամատչելի հետազոտություններ (կոմպյուտերային տոմոգրաֆիա, ռենգենոգրաֆիա, կոլոնոսկոպիա և այլ):

Առողջապահության վարչության նախաձեռնությամբ, Երևանի քաղաքապետարանի ենթակայության բոլոր բուժօգնականներում և ընկերություններում իրականացվել է բակերի բարեկարգման և ցուցանակների արդիականացման ծրագիր:

Առողջապահության վարչության կողմից մշակել և ներդրվել է բուժօգնության որակի, ֆինանսատնտեսական և ծրագրային ցուցանիշների Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների գործունեության գնահատման կողմնորոշիչ ուղեցույց:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության բուժօգնականների կառավարման, ֆինանսատնտեսական գործունեության բարելավման, ինչպես նաև մասնավոր ներդրումների ապահովման նպատակով Երևան քաղաքի ավագանու որոշումներով վերակազմակերպվել են «Քանաքեռ-Զեյթուն», «Սուրբ Աստվածամայր» և «Գրիգոր Նարեկացի» ՓԲԸ-ները՝ ստեղծելով նոր ընկերություններ («Դավիթ Անհաղթ» ԲԿ, «Թիվ 16 պոլիկլինիկա», «Արաբկիր մանկական պոլիկլինիկա», «Ն.Բ.Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների ԳՀԻ», «Նուբարաշեն», «Մարի Թաղ», «Նոր Արեշ», «Կարմիր Բլուր», «Թիվ 18 պոլիկլինիկա», «Սուրբ Աստվածածին» ՓԲԸ-ները): Կառավարման նոր մեխանիզմների ներդրումը կբերի բուժապասարկման առաջնային օղակում ենթակառուցվածքների բարելավմանը, բուժօգնականների վերազինմանը, ինչը իր հերթին կնպաստի բնակչության բուժապասարկման որակի բարձրացմանը:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Երևան քաղաքում 2013 թվականի ընթացքում նախատեսվում է առողջապահության ոլորտի զարգացման գերակա ուղղություն ընդունել հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայության վիճակի բարելավումը՝ հիմնական շեշտը դնելով մատուցվող ծառայությունների ծավալների ավելացման, նոր բուժօժանդակությունների ներդրման, ընկերությունների վերազինման և բուժանձնակազմի վերապատրաստման գործընթացի վրա:

Հիմնախնդիր. առողջապահական հիմնարկներում բուժսարքավորումների և գույքի նորացում

Առողջության առաջնային պահպանման ծառայությունների ներքո շարունակվելու է բուժսարքավորումների արդիականացումը և գույքի նորացումը: Ծրագիրն իրականացվելու է Երևանի բյուջեի միջոցներով, որի արժեքը կկազմի 70.000,0 հազ. դրամ:

Հիմնախնդիր. առողջապահական հիմնարկների շենքերի անմխիթար վիճակը

2013 թվականին նախատեսվում է շարունակել շենքերի պահպանմանն ու վերականգնմանն ուղղված ընթացիկ նորոգման աշխատանքները և ջեռուցման համակարգերի տեղադրումը: Նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքներ իրականացնել Երևանի ենթակայության մանկական պոլիկլինիկաներում և պոլիկլինիկաների մանկական բաժանմունքներում՝ փոխարինելով հին պատուհանները և պատուհանագոքերը նոր եվրոպատուհաններով: Ծրագրի շրջանակում նախատեսվում է թիվ 9 և «Արաբկիր» մանկական պոլիկլինիկաների պատուհանների փոխարինում նորերով և թիվ 9 պոլիկլինիկայի ջեռուցման համակարգի կառուցում: Ծրագրի իրականացման համար Երևանի 2013 թվականի բյուջեով նախատեսված է 45.900,0 հազ. դրամ:

2013թ. շարունակվելու է դժվարամատչելի հետազոտությունների անցկացումը սոցիալապես անապահով խավի համար: Ծրագիրը հնարավորություն կտա Երևան քաղաքի

ազգաբնակչությանը ժամանակին և պատշաճ մակարդակով մատուցել ախտորոշման ծառայություններ:

Ուշադրության կենտրոնում պահվելու են հղիների նախաձննդյան և հետձննդյան խնամքի որակյալ բուժօգնության սպասարկումը, ինչպես նաև կերակրող մայրերը: Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:

Երևան քաղաքում շարունակվելու է ընտանեկան բժշկության գրասենյակների կազմակերպման գործնառնությունը, ինչը ենթադրում է ընտանիքի ամբուլատոր սպասարկում մեկ կառույցում և աստիճանաբար տեղամասային մանկաբույժների, թերապևտների և նեղ մասնագետների փոխարինումը ընտանեկան բժիշկներով:

Շարունակվելու է Երևանի առողջապահական ընկերությունների ֆինանսավորման նոր աղբյուրների որոնումը, ներդրումային քաղաքականության մշակումը և զարգացումը՝ նպաստելով բուժօրհանությունների որակի բարձրացմանը և վճարովի ծառայություններից մուտքերի ավելացմանը:

Երևանի բուժօրհանների գործունեության հսկողության արդյունավետության բարձրացման և աշխատանքների գնահատման նպատակով նախատեսվում է ստեղծել տվյալների ավտոմատացված բազա, որը հնարավորություն կտա բարելավել հաշվետվությունների ամփոփումը, առողջապահության վարչությանը մշակել ոլորտային քաղաքականություն և տալ օբյեկտիվ գնահատականներ ընկերությունների և տնօրենների գործունեության վերաբերյալ:

Հիվանդությունների և դրանց կանխարգելման վերաբերյալ հանրության իրազեկումը ԶԼՄ-ներով կրելու է պարբերական բնույթ:

Ս Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Ա Պ Ա Հ Ո Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վիճակի բնութագիր

	ք. Երևան
Բարեգործական ճաշարան	16
Շահառուների թիվը	2190
Սահմանափակ կարողություններով հաշմանդամներ	53000
Կենսաթոշակառուների թվաքանակը, մարդ	176431

2012 թվականին իրականացված ծրագրեր

Մայրության և գեղեցկության օրվա կապակցությամբ Արցախյան պատերազմի մասնակից կանանց, զոհվածների մայրերի և զոհված ազգային հերոսների մայրերի, բազմազավակ մայրերի և երեխայի սպասող մայրերի մասնակցությամբ միջոցառում է կազմակերպվել Երևանի քաղաքապետարանում:

ՀՀ կառավարության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակում կարիքավոր ընտանիքների շուրջ 850 երեխա հուլիս-օգոստոս ամիսներին ամառային իրենց հանգիստն են անցկացրել Հանքավանի և Ծաղկաձորի ճամբարներում: Ծրագիրն իրականացվել է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Մշակվել և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում գործողության մեջ է դրվել «Ցանկությունների իրականացում» բարեգործական նախագիծը, որի շնորհիվ 6 երկկողմանի ծնողագուրկ, հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքների հատկացվել են մահճակալներ, համակարգիչ, անկնոդնային պարագաներ, հագուստեղեն, գրասեղան և այլն: Ծրագիրը շարունակական բնույթ ունի:

Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության և վարչական շրջանների համատեղ ջանքերով դպրոցական պարագաների և գրենական պիտույքների աջակցության ծրագիր է իրականացվել Երևան քաղաքի կարիքավոր ընտանիքների 1-ին դասարան հաճախող երեխաների համար: Ծրագրում ընդգրկվել են 5790 կարիքավոր երեխաներ: Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ:

2012 թվականի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչությունը Հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացրել է մայրաքաղաքի փողոցներից, կիսակառույցներից անօթևանների հավաքման և ժամանակավոր կացարանում տեղավորման ծրագիրը: 9 ամիսների ընթացքում կացարան են տեղափոխվել կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված 113 անօթևան:

Մայրաքաղաքի Գ. Սունդուկյանի, Ստանիսլավսկու, Հ. Պարոնյանի անվան թատրոնների հետ համատեղ կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված 420 կարիքավոր անձ, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող համայնքները, մասնակցել են անվճար թատերական ներկայացումներին:

Իրականացվել է Երևան քաղաքում բնակվող, բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառումը (շուրջ 1200 ընտանիքներ), որոնց ցուցակները սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատվել և ներկայացվել են ՀՀ կառավարության միգրացիոն գործակալություն:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպման նպատակով Երևանի բյուջեով նախատեսվել է 4.002,0 հազ. դրամ:

Հիմնախնդիր. հաշմանդամների սոցիալական ինտեգրում

Երևան քաղաքում հաշվառված են շուրջ 53000 սահմանափակ կարողություններով հաշմանդամներ: Նրանց զգալի մասը չի կարողանում ազատ տեղաշարժվել և ինտեգրվել հասարակությանը: Հաշմանդամների սոցիալական ինտեգրմանը նպաստելու ուղղությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր և աշխատանքներ:

Երևանի քաղաքապետարանը, Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող CIUDAD (Քաղաքային զարգացման և երկխոսության համագործակցություն) ծրագրի շրջանակում, իրականացնում է GOSPEL՝ «Սպորտի կառավարումը որպես սոցիալական կապ» ենթածրագիրը: Սոցիալական այս ծրագիրն ունի բազմակողմ ուղղվածություն: Այն ուղղված է ոչ միայն սպորտի զարգացմանը, այլ նաև սպորտի միջոցով հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելուն, սպորտային ծրագրերը անապահով խավերին հասանելի դարձնելուն: Այն շարունակվելու է 2013 թվականին: Այս ծրագրի շրջանակում նախատեսվում է Շենգավիթ վարչական շրջանի հ.52 դպրոցի մարզահրապարակի վերանորոգում և հարմարեցում հաշմանդամներին:

Անապահով խավին հասարակությանն ինտեգրելու նպատակով նախատեսվում է շարունակել Հ. Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Ստանիսլավսկու անվան թատրոնների հետ համատեղ իրականացվող ծրագիրը: Ըստ այդ ծրագրի կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված անձանց կտրամադրվեն թատերական ներկայացումների անվճար տոմեր:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ ներառական կրթություն իրականացնող դպրոցները ապահովվել են թեքահարթակներով, ինչպես նաև «Առողջապահական օբյեկտների թեքահարթակների կառուցում» ծրագրի շրջանակում սահմանափակ կարողություններով անձանց համար քաղաքապետարանի ենթակայության ընկերություններում կառուցվել են թեքահարթակներ, պոլիկլինիկաների առաջին հարկերում առանձնացվել են հարմարեցված բուժսենյակներ՝ հաշմանդամների հարմարավետ բուժսպասարկումն իրականացնելու համար:

Հաշմանդամների անարգել տեղաշարժն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը հաշմանդամների կողմից ներկայացված առաջնահերթությամբ մատչելիություն ապահովելու համար մայրաքաղաքի հանրային նշանակության տարբեր վայրերում կապահովի թեքահարթակների առկայություն: Այս նպատակով Երևանի բյուջեով նախատեսված է 20.000,0 հազ. դրամ:

Ծրագրի անվանումը	Ծրագրի բովանդակությունը	Ծրագրի արժեքը (մլն դրամ)
Մարտի 8՝ Կանանց միջազգային օր		
2012թ.	Միջոցառում՝ նվիրված սոցիալական խմբերում ներառված, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կանանց համար (շուրջ 900 կին):	3.05
2013թ.	Միջոցառում՝ նվիրված կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող կանանց համար (շուրջ 1260 կին)	8.0
Ապրիլի 7՝ Մայրության և գեղեցկության օր		
2012թ.	Միջոցառում նվիրված Արցախյան պատերազմի մասնակից կանանց, զոհվածների և զոհված ազգային հերոսների, բազմազգալակ և երեխայի սպասող մայրերին	3.05
2013թ.	Մայրության խրախուսման նպատակով մեկանգամյա նպաստի վճարման ծրագիր 10 և ավելի երեխաներ ունեցող մայրերի համար:	1.7

Ապրիլի 24		
2012թ.	Եղեռնը վերապրած երևանաբնակ 25 քաղաքացիներին դրամական աջակցության ծրագիր:	1.1
2013թ.	Եղեռնը վերապրած երևանաբնակ քաղաքացիներին դրամական աջակցության ծրագիր:	1.1
Մայիսի 8 և 9		
2012թ.	1) Միջոցառում Հայրենական պատերազմի վետերանների խորհուրդում: Դրամական աջակցություն հայրենական պատերազմի 50 վետերանների: 2) «Կոմանդոս» ջոկատի ազատամարտիկներին դրամական աջակցության ծրագիր: 3) Շուշիի ազատագրության 20-ամյակ Միջոցառում՝ Շուշիի հերոսամարտի և Արցախյան պատերազմի թվով 130 մասնակիցների համար: «Արցախյան պատերազմի մասնակից կանանց հանրապետական խորհուրդ» դրամական աջակցություն:	1) 1.0 2) 1.0 3) 4.6
2013թ.	1) Միջոցառում՝ նվիրված Հաղթանակի օրվան (Արցախյան պատերազմի թվով 250 մասնակիցների համար) 2) Վետերանների խորհրդի դրամական աջակցության ծրագիր	1) 1.4 2) 2.0
Հունիսի 1՝ երեխաների պաշտպանության միջազգային օր		
2013թ.	Սոցիալական ակցիա՝ 5-րդ նորածինն ունեցող 50 կարիքավոր բնտանիքների համար	3.0
Հոկտեմբերի 1՝ Տարեցների միջազգային օր		
2012թ.	Սոցիալական ակցիա՝ 100 և ավելի տարիք ունեցող 23 տարեցների համար	
2013թ.	Սոցիալական ակցիա՝ 100 և ավելի տարիք ունեցող շուրջ 20 տարեցների համար	1.4
Դեկտեմբերի 3՝ Հաշմանդամների միջազգային օր		
2012թ.	Հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող կառույցների աջակցության ծրագիր:	1.0
2013թ.	1) Արցախյան պատերազմի 1-ին խմբի շուրջ 150 հաշմանդամների համար սոցիալական աջակցության ծրագիր: 2) Սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին օժանդակություն՝ սոցիալական ծրագրերի իրականացման կամ համաֆինանսավորման համար:	1) 7.5 2) 10.0
Ամանորյա տոներ		
2012թ.	Կարիքավոր բնտանիքների երեխաների համար տոնական միջոցառումների ծրագիր:	4.0
2013թ.	Կարիքավոր բնտանիքների երեխաների համար տոնական միջոցառումների ծրագիր:	2.8
Դրամական աջակցության ծրագիր		
2012թ.	Դրամական աջակցության ծրագիր:	20.0
2013թ.	Դրամական աջակցություն սոցիալական կարիքի մեջ գտնվող քաղաքացիներին:	16.0

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիճակի բնութագիր

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների համալիր լուծման նպատակով փաստացի ստեղծված է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային: Բոլոր 3 մակարդակները փոխկապակցված են իրենց մանդատներով, լիազորությունների և պարտավորությունների կոնկրետ շրջանակով:

Ազգային մակարդակը պատասխանատու է երկրում երեխաների պաշտպանության ընդհանուր համակարգի գործառնման, օրենսդրական բարեփոխումների, ռազմավարական պլանների, ընթացակարգերի և կանոնակարգերի մշակման, ինչպես նաև դրանց իրագործման հանդեպ ընդհանուր վերահսկողություն սահմանելու համար:

Մարզային մակարդակը տեղայնացնում է ազգային ծրագրերը՝ մարզի շրջանակներում:

Համայնքային մակարդակը ապահովում է երեխաների /ընտանիքների/ շահերի պաշտպանությունը որոշակի պարտականությունների և լիազորությունների շրջանակում:

Մարզային մակարդակով նախատեսված ծրագրերն իրականացվում են Հայաստանի 10 մարզերի մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմերի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթներն իրականացնում են Երևան քաղաքի 12 վարչական շրջանների ղեկավարները, որոնց կից օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված են հասարակական հիմունքներով գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ:

Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. հունվար 12-ի հ. 206-Ն որոշման, որը վերաբերվում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության ռազմավարության իրականացմանը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, նշված երեխաների համար իրականացնում է կարիքների գնահատում, կազմում սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված անհատական ծրագրեր և հետևում դրանց իրականացմանը:

Համաձայն բաժնում առկա տեղեկատվական բազայի՝ Երևան քաղաքում հաշվառված է առանց ծնողական խնամքի 642 երեխա, որոնցից մի մասը բնակվում են ընտանիքներում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նշված երեխաներին նշանակված են խնամակալներ և հիմնականում լուծված են նրանց սոցիալական պաշտպանության առաջնահերթ խնդիրները, սակայն կարիք կա բազմամասնագիտական ծառայությունների մատուցման (սոցիալական, հոգեբանական, մանկավարժական):

Մանկատներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար առաջնահերթ է մնում նրանց հետագա տեղավորման խնդիրը, որպես նախընտրելի միջոց հարազատների, որդեգրողների կամ խնամատարի ընտանիքում երեխայի դաստիարակության և խնամքի կազմակերպումը: Այսինքն մանկատների բեռնաթափման

	ք. Երևան
Մանկատուն	4
որից՝ բարեգործական	1
Հատուկ դպրոց	7
Հատուկ կրթահամալիր	4
Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն	2

հնարավոր ուղիների ճիշտ նախանշումը, այդ նպատակով շահագրգիռ կողմերի ակտիվ համագործակցության շնորհիվ՝ խնդրի հանդեպ ճիշտ և միասնական մոտեցումը:

2012 թվականին իրականացված ծրագրեր

Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով իրականացվել են բազմաթիվ տունայցեր, ուսումնասիրվել են սոցիալապես անապահով ընտանիքներում գտնվող, տարբեր խնդիրներ ունեցող երեխաների կենսապայմանները, անհրաժեշտ մասնագիտական օգնություն է տրամադրվել, գնահատվել է նրանց կարիքները, կազմվել են անհատական վերականգնողական ծրագրեր և հսկողություն է իրականացվել դրանց կատարման նկատմամբ:

2012 թվականից իրականացվում են ամենամյա հանդիպում-քննարկումներ Երևանի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, ինչպես նաև Վորլդ Վիժն Հայաստան միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ: Այս ծրագիրն ուղղված է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների խնդիրների համակողմանի լուծմանը: Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ:

Առկա հիմնախնդիրների լուծման և մասնակի կանխարգելման նպատակով հատուկ դպրոցների, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների երեխաների ծնողների համար անցկացվում են «Ծնողավարման հմտություններ» թեմայով սեմինարներ:

Հաշմանդամների օրվան նվիրված կազմակերպվում է Երևան քաղաքի հատուկ կարիքներ ունեցող երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ Երևան քաղաքի հատուկ դպրոցների 77 երեխաների համար ապրիլ ամսին կազմակերպվել և իրականացվել է ֆուտբոլի մրցաշար՝ հատուկ կարիքներով երեխաների առողջ ապրելակերպի և հասարակության մեջ ինտեգրման նպատակով:

Իրականացվել է հաշմանդամների օրվան նվիրված միջոցառում, որտեղ ներկայացվել են Երևան քաղաքի հատուկ կարիքներ ունեցող երեխաների ձեռքի աշխատանքները: Ցուցահանդեսը կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում:

Որոշակի աշխատանք է կատարվել նաև կրթությունից դուրս մնացած երեխաներին հայտնաբերելու և նրանց կրթական համակարգում ընդգրկելու ուղղությամբ: Առանձին ահազանգերի և դիմումների հիման վրա կատարվել են այցեր ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներ, պարզվել են կրթությունից դուրս մնալու պատճառները և ներկայումս կրթական համակարգի մեջ երեխաների ընդգրկման գործընթացը շարունակվում է:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների գենդերային հարցերով հանձնաժողովների մասնակցությամբ կազմակերպվել է հանդիպում-քննարկում գենդերային քաղաքականության, մեր երկրում գենդերային ներառյալ ընտանեկան, բռնության առանձնահատկությունների, ընտանեկան բռնության մասին ՀՀ օրենքի նախագծում ընդգրկված կարևոր դրույթների, գենդերային բռնության կանխման, կանխարգելման, ճանաչման, ուղղորդման անհրաժեշտ ընթացակազմերի հստակեցման, համալրման աշխատանքների անհրաժեշտության վերաբերյալ:

«Վորլդ Վիժն», «Մեյվ դը չիլդրեն», «Փիվի ին նիդ» միջազգային բարեգործական կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվել են երեխաների պաշտպանության ռազմավարական խնդիրներին վերաբերող սեմինարներ, աշխատանքային հանդիպումներ, խորհրդակցություններ:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Հիմնախնդիր. երեխաների շրջանում թափառաշրջիկության և մուրացկանության երևույթի կրճատում և կանխարգելում

Անչափահասների կողմից իրավախախտումների, մուրացիկության և թափառաշրջիկության կանխման նպատակով կազմակերպվում են հասցեական օգնություն, շրջայցեր, իրականացվում են անհատական վերականգնողական աշխատանքներ:

Հիմնախնդիր. կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին ուղղված բազմամասնագիտական ծառայությունների զարգացում, տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների ցանցի ընդլայնում:

Վարչական շրջաններում երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների ցանցի ընդլայնման նպատակով կշարունակվի համագործակցությունը հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ:

Մանկալքության դեպքերը կանխելու նպատակով կիրականացվեն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, բուժհաստատությունների և շահագրգիռ այլ կառույցների հետ համատեղ միջոցառումները:

Միջազգային և տեղական հասարակական կառույցների ու կազմակերպությունների հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված կմշակվեն ծրագրեր, կիրականացվեն միջոցառումներ:

Կկազմակերպվեն և կիրանացվեն երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Կանանց միջազգային տոնին և այլ հիշարժան օրերին նվիրված միջոցառումներ: Մասնավորապես կանցկացվեն Երեխաների պաշտպանության օրվան նվիրված շնորհալի երեխաների լուսանկարչական աշխատանքների մրցույթ:

Հատուկ դպրոցների, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների երեխաների համար կկազմակերպվեն կանցկացվեն ամանորյա տոներին նվիրված միջոցառումներ:

Հատուկ կարիքներով երեխաների կրթական իրավունքի լիարժեք իրացման նպատակով կիրականացվեն ուսումնասիրություն և վերահսկողություն հատուկ և ներառական դպրոցներում անհատական ուսումնական պլանների կատմամբ:

Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ

Վիճակի բնութագիր

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ են գործում «Հայաստանի փոքրիկ երգիչներ» և Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, Երևանի կենդանաբանական այգին և «Հայ-Արտ» ՓԲԸ-ն:

	Ք. Երևան	որից՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության
Թանգարան	57	4
Թատրոն	18	3
Գրադարան	31	19
Երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ	26	26
Մշակույթի տուն, մշակույթի ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ	16	16

2012 թվականին իրականացված ծրագրեր

2012թ. Յունեսկոյի կողմից Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակվելու և հայկական գրատպության 500-ամյակի կապակցությամբ տարվա ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ:

2012թ. գրադարաններում անցկացվել են գրական, գրական-երաժշտական, հուշ-երեկոներ՝ նվիրված հայտնի մարդկանց, հանդիպումներ արվեստի անվանի գործիչների հետ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, ազգային գրադարանային շաբաթ, Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կազմակերպվել է մեկամսյա միջոցառումներ, հունվարից-դեկտեմբեր, «Ճանաչենք մեր մեծերին» վիկտորինաների շարք, «Նոան հատիկ» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնը:

2012թ. երաժշտական և արվեստի դպրոցների լավագույն սաները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային փառատոնների և մրցույթների՝ «Վերածնունդ» միջազգային մրցույթը, Ա. Բաբաջանյանի պատանի դաշնակահարների, «Նոր անուններ» միջազգային, ազգային նվագարանների և ժողովրդական երգի անհատ կատարողների հանրապետական մրցույթներին, Ա. Գաբրիելյանի և Ս. Ասլամազյանի անվան պատանի ջութակահարների և թավջութակահարների մրցույթ-փառատոններին, «Դելֆյան խաղեր» միջազգային մրցույթին, «Ֆլամ» միջազգային մրցույթին:

Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների մասնակցությամբ ս/թ մայիսի 8-ից մինչև մայիսի 21-ը անցկացվել է երաժշտական փառատոն, «Գեղարվեստական կրթության միջազգային շաբաթ» ծրագրի շրջանակում դպրոցներում կազմակերպվել են համերգներ:

Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կազմակերպվել է համերգ՝ համակարգի երաժշտական և արվեստի դպրոցների սաների ուժերով Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում:

Հունիսի 6-ին կազմակերպվել է Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնը:

2012 թվականի ընթացքում կազմակերպվել են ՀՀ տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, Եղեռնի զոհերի հիշատակին, Թանգարանների միջազգային և Երեխաների իրավունքների պաշտպանության օրերին, Ուսուցչի և Գրադարանավարի օրվան, Էրեբունի-Երևան 2794-ամյակին և այլն:

Բոլոր թանգարաններում կազմակերպվել են «Թանգարանների գիշեր», իսկ գրադարաններում՝ «Հանդիպան վայրը գրադարան» միջոցառումները:

Երևան քաղաքի թանգարաններում կազմակերպվել են մի շարք թեմատիկ ցուցահանդեսներ, միջոցառումներ:

Թատրոններում տարվա ընթացքում բեմադրվել է 450 ներկայացում, որից 9-ը նոր ներկայացումներ են: Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ իրականացվել է միջոցառում և կազմակերպվել հյուրասիրություն:

Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների մասնակցությամբ ս/թ մայիսի 13-ից մինչև մայիսի 21-ը անցկացվել է երաժշտական փառատոն: Փառատոնի եզրափակիչ համերգին (հունիսի 17) Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում ելույթ ունեցան ընտրված լավագույն աշակերտները:

2011 թվականին Երևանի քաղաքապետարանն իր մասնակցություն է ցուցաբերել «Ոսկե Ծիրան» մրցանակաբաշխությանը, «Հայ-Ֆեստ» միջազգային թատերական փառատոնին:

Երևանի քաղաքապետարանը 2012 թվականից իրականացնում է Ֆրանկոֆոն քաղաքապետների միջազգային ասոցիացիայի կողմից Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ, «Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ, «Ա.Սպենդիարյանի անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» մշակութային հաստատությունների ֆինանսավորման ծրագիրը (Օրագրի արժեքը՝ 30000 եվրո): Այն կրելու է շարունակական բնույթ, և աշխատանքները շարունակվելու են 2013 թվականին:

2012թ. փետրվարի 2-ին Երևանի քաղաքապետարանում հանդիպում է տեղի ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների միջև: ՖՄԿ-ի լեզվաբանական ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի կողմից կազմվել և ՖՄԿ-ին են ներկայացվել ծրագրային առաջարկություններ մշակույթի ոլորտի վերաբերյալ:

Հիմնախնդիր. մշակութային օջախների արդիականացում ու բարելավում.

Մշակութային օջախների ջեռուցման և վերանորոգման ծրագրի շրջանակում՝

2012թ. թվով 8 գրադարանի և թվով 6 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի ջեռուցում և վերանորոգում: Հիմնանորոգվել է «Զեյթուն» մշակույթի տունը:

2013թ. Մշակույթի տների հիմնանորոգման և վերանորոգման ծրագրով նախատեսվում է 203.398,3 հազ. դրամ՝ մշակույթի տների և ստեղծագործական կենտրոնների ջեռուցման խնդիրն ամբողջությամբ կարգավորելու, թվով 3 մշակույթի տներ ամբողջությամբ հիմնանորոգելու համար:

Երևանի ենթակայության թվով 18 չջեռուցվող գրադարանները (մասնաճյուղերը) ջեռուցելու համար նախատեսվել է 50.000,0 հազ. դրամ:

Երևանի ենթակայության թվով 2 թանգարանները ջեռուցելու համար Երևանի 2013 թվականի բյուջեով նախատեսված է 50.000,0 հազ. դրամ:

Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներու ջեռուցման համակարգերի կառուցման համար Երևանի 2013 թվականի բյուջեով նախատեսված է 50.000,0 հազ. դրամ:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Հիմնախնդիր. տեղեկատվական-հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի մշակումը և ներդրումը մշակույթի բնագավառում, մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանումը:

Առկա հիմնախնդրի լուծման նպատակով «Ավ. Իսահակյանի անվան գրադարան» ՀՈԱԿ-ում թվայնացվել են գրքային ֆոնդերը և ներկայումս ներդրվում է սպասարկման

համակարգ: Մշակույթի նախարարության հետ համատեղ ընթանում է գրացուցակների ավտոմատացման գործընթացը: Աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

2013 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել մի շարք համաքաղաքային միջոցառումներ՝ նվիրված Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Ցեղասպանության գոհերի հիշատակի օրվան, «Սուրբ Զատիկ» տոնին, «Թանգարանների միջազգային օրվան», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, ՀՀ Անկախության օրվան, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Ուսուցչի օրվան», «Գրադարանավարի օրվան» և հիշարժան այլ տարեթվերին:

Մշակութային կազմակերպություններում կկազմակերպվեն Ֆրանկոֆոնիայի միջազգային օրեր Երևանում:

2013 թվականին կմշակվի Երևանի քաղաքապետարանի գրադարանային համակարգի ռազմավարություն:

Կենդանաբանական այգու հիմնանորոգման իրականացման նպատակով Երևան բյուջեից կհատկացվի 89.393,4 հազ. դրամ: Կենդանաբանական այգու պահպանման համար նախատեսված է 195.178,0 հազ. դրամ սուբսիդավորման համար (ՀՀ պետբյուջե):

2013 թվականին Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ կիրականացվեն մշակութային ծրագրեր՝ քարոզելով հայկական մշակույթը, որը կստեղծի և կամրապնդի համագործակցության նոր շրջանակներ:

Մշակույթի բնագավառում համագործակցություն է նախատեսվում Փարիզի պարարվեստի ազգային բարձրագույն կոնսերվատորիայի և Երևանի պարարվեստի պետական քոլեջի միջև: Համագործակցության ծրագիրը 2013թ. հունվար ամսին կդրվի շրջանային խորհրդի քվեարկությանը: Նախատեսվում է իրականացնել նաև գրողների փոխայցելությունների ծրագիր:

Երևանի քաղաքապետարանը 2012 թվականից իրականացնում է Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի կողմից Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ, «Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ, «Ա.Սպենդիարյանի անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» մշակութային հաստատություններին ֆինանսավորվող ծրագիրը:

Ծրագրով նախատեսվում է «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում ստեղծել ֆրանսիական անկյուն, կատարել տեխնիկայի վերազինում և կազմակերպել ֆրանսերեն լեզվի անվճար ուսուցման դասընթացներ տարիքային տարբեր խմբերի համար:

«Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում նույն ծրագրի շրջանակում կիրականացվեն տանիքի և դասասենյակների վերանորոգման, տեխնիկական վերազինման աշխատանքներ: Ա.Սպենդիարյանի անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցում նախատեսվում է գրադարանի ընդլայման, պատուհանների վերանորոգման, տեխնիկական վերազինման աշխատանքներ:

2013 թվականին կավարտվեն բոլոր մշակութային օջախների ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքները՝ դրանով ամբողջովին լուծելով առկա հիմնախնդիրը:

Տ Ո Ւ Ր Ի Ձ Մ

Վ ի ճ ա կ ի ք ն ո թ ա գ ի ք

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից զբոսաշրջությունը ճանաչվել է որպես տնտեսության զարգացման գերակա ճյուղ: Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով:

Հայաստանում զբոսաշրջությունը իր զարգացման տեմպերով և արդյունքներով հանրապետության առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2012թ. հունվար-սեպտեմբեր հանրապետությունն են ժամանել 603074 զբոսաշրջիկներ, կամ 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 9.4 %:

2012 թվականը նշանավորվեց նրանով, որ ս/թ հոկտեմբերի 19-ին Երևանում ընթացող ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության միջազգային համաժողովի ընթացքում ընդունվեց «Երևանյան հռչակագիրը», որն ուղղված է զբոսաշրջության միջոցով միջմշակութային երկխոսության ամրապնդմանը, եթիկայի արժեքների հանդեպ հարգանքի խրախուսմանը և այլն: Երևանյան հռչակագրի ստորագրումը պատմական նշանակություն կունենա Հայաստանի համար և մեր երկիրն ավելի ճանաչելի կդարձնի արտերկրում:

Այսօր Երևանում գործում են շուրջ 167 զբոսաշրջային ընկերություններ, որից 99-ն ավիագործակալություններ են, ինչպես նաև 52 հյուրանոցներ և հյուրանոցային տնտեսության օբյեկտներ /հոսթել, զբոսաշրջային տուն և այլն/: Հյուրանոցների միաժամանակյա տարողությունը Երևան քաղաքում կազմում է 3052 տեղ (մահճակալ):

Երևան քաղաքը օժտված է ռեսուրսային հզոր ներուժով, որը կարող է ներագրել զբոսաշրջության կայուն զարգացման վրա, հետևաբար Երևան քաղաքի՝ որպես մասնագիտացված, զարգացած և ակտիվ զբոսաշրջային կենտրոնի ձևավորման վրա:

Ներկայացնելով Երևան քաղաքի ռեսուրսային ներուժը, կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու Երևանի քաղաքային մշակութային ժառանգությանը և կյանքին, տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրօրինակ խոհանոցին և այլն:

Երևանում զբոսաշրջության զարգացումը մեծապես կողմնորոշված է ոլորտի ընդհանուր ենթակառուցվածքով, որի բարելավումը պահանջում է հիմնականում պետական նախաձեռնությամբ ներդրումաին ծրագրերի իրականացում:

Կարևորելով Երևան քաղաքի, որպես ՀՀ զբոսաշրջության կենտրոնի, մեծ ուշադրություն է դարձվում Երևանը որպես բրենդ աշխարհին հասանելի և ընկալելի դարձնելու անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով Երևանի քաղաքապետարանի կողմից նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ ուղղված քաղաքի բարեկարգմանը և քաղաքային բրենդի ձևավորմանը:

Այս ոլորտում հաջողությունների հասնելու համար մեծածավալ աշխատանքներ են տարվել բնական և մշակութային լանդշաֆտների ներուժը գնահատելու և բացահայտելու ուղղությամբ: Ծրագրի շրջանակում բարեկարգվել են մայրաքաղաքի այգիների և զբոսայգիների տարածքները, որոնք ապահովվել են անվճար wi-fi ծածկույթով: Պատմամշակութային շենք-շինություններին, կամուրջներին և հուշարձաններին տրվել են գեղագիտական լուսավորվածության լուծումներ և տեղադրվել տեղեկատվական եռալեզու ցուցանակներ՝ համապատասխան QR կոդերով: Բարեկարգվել և նորովի գեղարվեստական լուսավորության լուծումներ են տրվել մայրաքաղաքի շատրվաններին: Մայրաքաղաքում 2012թ. ընթացել են լայնածավալ կանաչապատման և դեկորատիվ ծաղկապատման աշխատանքներ:

Երևան քաղաքի վարչական շրջանները զարգացած չեն զբոսաշրջության տեսանկյունից, հետևաբար վերոնշյալ միջոցառումները նպաստում են նաև քաղաքի վարչական շրջանների զարգացմանը, որը հիմք կհանդիսանա նաև ապակենտրոնացվածության ու տարածքների համաչափ զարգացմանը:

2012 թվականին իրականացված ծրագրեր

Տարեսկզբին կազմակերպվել են տարաբնույթ քննարկումներ շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ զբոսաշրջության ոլորտում խոչընդոտների և խնդիրների ամփոփման և առաջնահերթ ներդրումներ պահանջող ծրագրերի մշակման նպատակով:

2012թ. մարտին «Զվարթնոց» հիմնադրամի հետ համատեղ մշակվել և տպագրվել է «ԵՐԵՎԱՆ» լուսանկարներով խաղային քարտեզ, որը բաժանվել է անվճար քաղաքային օլիմպիադաներում հաղթած դպրոցահասակ երեխաներին:

Արտերկրյա շուկաներում Երևանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնելու նպատակով 2012թ. «Վեստնիկ Մագ», «Financial Times», “Tour Info”, “Welcome to Georgia”, “Czech airlines”, “YerevanResto” և այլ հեղինակային զբոսաշրջային և քաղաքային տնտեսությունը լուսաբանող ամսագրերում տպագրվել են հոդվածներ Երևան քաղաքի զբոսաշրջային ներուժի վերաբերյալ:

2012թ. ապրիլին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության հետ համատեղ պատրաստվել են Երևան քաղաքին նվիրված տեսահոլովակներ, որոնք ցուցադրվում են ինչպես Երևան քաղաքի արտաքին գովազդի համար նախատեսված կրաններին, այնպես էլ ամռան երեք ամիսների ընթացքում «Սամսոն Թրեյլ» տուրիստական ընկերության աջակցությամբ Մոսկվա քաղաքի «Սամսոն Ֆարմ» դեղատների ցանցում:

2012թ. ընթացքում Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել են հանդիպումներ Հունգարիայի, Սլովակիայի, Վրաստանի, ՌԴ, Եգիպտոսի, Ֆրանսիական մի շարք քաղաքների զբոսաշրջային ընկերությունների ներկայացուցիչների հետ: Հյուրերին ներկայացվել է զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված Երևանի քաղաքապետարանի ծրագրերն ու ընթացիկ տարում զբոսաշրջային առումով հետաքրքրություն ներկայացնող՝ մայրաքաղաքում նախատեսվող միջոցառումները:

Հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությամբ՝ կողմերը, գործընկերային հարաբերություններն առավել առարկայական դարձնելու նպատակով, առաջիկայում ճանաչողական ու գործնական փոխայցելություններ կիրականցեն:

2012թ. հոկտեմբերին ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև ստորագրվել է բարեկամության համաձայնագիր, երկու մայրաքաղաքների միջև հարաբերությունների խորացման և փոխշահավետ համագործակցության նպատակով, որը նախատեսում է քաղաքային տնտեսության մի շարք ոլորտներում՝ մասնավորապես մշակույթի և զբոսաշրջության ոլորտում ծավալել գործընկերային սերտ փոխգործակցություն: Այս համագործակցության շրջանակում տրվել են հստակ ծրագրային առաջարկներ, որոնք կկատարվեն 2013-2014թթ. ժամանակահատվածում:

2012թ. հոկտեմբերի 10-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է հանդիպում «Արենի գինու փառատոն 2012» կազմակերպիչների և հյուրերի հետ: Կարևորելով այս փառատոնի դերն ու նշանակությունը զբոսաշրջության զարգացման գործում կողմերը ցանկություն են հայտնել Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ միջոցառումների անցկացման՝ մասնավորապես տարեկան միջոցառումների օրացույց ունենալու անհրաժեշտության վերաբերյալ:

2012թ. հոկտեմբերի 16-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է հանդիպում Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս նահանգի շրջանային խորհրդի տուրիզմի միջազգային համագործակցության պատասխանատուների հետ, որի ընթացքում քննարկվել են հարցեր մշակութային ժառանգության գնահատման ու պահպանման, զբոսաշրջության զարգացման հեռանկարների և համագործակցության եզրերի վերաբերյալ: Ֆրանսիական կողմը, կարևորելով Երևանի զբոսաշրջության զարգացման լայն հեռանկարները, պատրաստակամություն է հայտնել իր հնարավորության սահմաններում աջակցել և արտերկրում ավելի ներկայանալի դարձնել Երևանի պատմամշակութային ժառանգությունը: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել նաև կազմակերպել զբոսաշրջության և մշակույթի ոլորտի մասնագետների փոխայցել:

2012թ. հոկտեմբերի 20-ին Երևանի քաղաքապետը հյուրնկալել է ՅՈՒՆԵՍԿՕ - ի կողմից Երևանը 2012 զրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու միջոցառումների շրջանակում «Թանգարան և գրավոր հաղորդակցություն. ավանդույթ և նորարարություն» խորագրով մայրաքաղաքում անցկացվող Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) Կրթություն և մշակութային գործունեություն միջազգային կոմիտեի (CECA) 41-րդ գիտաժողովի մասնակիցներին: Այս միջոցառումը ևս հնարավորություն տվեց աշխարհի շուրջ 35 երկրներից ժամանած հյուրերին ներկայացնել և ծանոթացնել Հայաստանի 2794-ամյա մայրաքաղաք Երևանը:

2012թ. հոկտեմբերի 25-29-ը Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը մի շարք տուրիստական ընկերությունների ներկայացուցիչների հետ պաշտոնական այցով գտնվել է Սանկտ-Պետերբուրգում և տեղի զբոսաշրջային ոլորտը ներկայացնող կազմակերպությունների հետ մասնակցել զբոսարջային կլոր սեղան-համաժողովի, որի ընթացքում ներկայացվել են երկկողմ զբոսաշրջային ռեսուրսային ներուժը,

արդյունքը, քննարկվել են համագործակցության հնարավոր ուղիները և նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության համար:

2012թ. Երևանի քաղաքապետարանի կողմից շարունակվել են «Երևան Սիթի Տուր» զբոսաշրջային ծրագրի աշխատանքները: Ծրագրի ընթացքում կազմակերպվել են «Արի տուն» ծրագրի շրջանակում Երևան ժամանած երեխաներին ու պատանիներին մայրաքաղաքի տեսարժան վայրերին ծանոթացնելու նպատակով զբոսաշրջային էքսկուրսիաներ, ինչպես նաև իրականացվել են անվճար ակցիաներ՝ 130 սիրիահայ մանուկների և պատանիների (օգոստոսի 12), Մարի Իզմիրյանի անվան մանկատան երեխաների (սեպտեմբերի 2), ուսանողների (նոյեմբերի 17), տարեցների (հոկտեմբերի 1) և հաշմանդամների (դեկտեմբերի 3) համար:

Զբոսաշրջության ոլորտի նորությունները ներկայացնելու և համագործակցության նոր ուղիներ ներգրավելու նպատակով «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի հետ համատեղ պատրաստվել է քաղաքային զբոսաշրջային պորտալը- www.myyerevan.am, որտեղ այսուհետ կարելի է գտնել այն ամենը, ինչ վերաբերում է քաղաքային զբոսաշրջության ոլորտի:

2012թ. հոկտեմբերի 12-13-ը Երևանի քաղաքապետարանի տուրիզմի բաժինը մասնակցել է «Իմ սրտի մայրաքաղաք» տաղավարով «ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ԷՔՍՊՈ 2012» ցուցահանդեսին:

2012թ. նոյեմբերին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է հանդիպում Եգիպտոսի Արաբական Հանրապետության խոշորագույն «Լաքի Տուրս» տուրիստական ընկերության ներկայացուցիչների հետ: Զբոսաշրջության ոլորտում հետագա համագործակցության նպատակով եգիպտական կողմին, նրանց իսկ հետաքրքրության շրջանակներում ներկայացվել է Երևան քաղաքի զբոսաշրջության ներուժը, հատկապես պատմամշակութային և կրոնական տեսանկյունից:

2012թ. նոյեմբերին «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի հետ համատեղ kinect համակարգով գործող Երևանում կյանքի կոչվեց մի ծրագիր, որի նպատակն է ինտերակտիվ տեղեկատվական համակարգի միջոցով զբոսաշրջիկներին և քաղաքացիներին տեղեկացնել Երևանի մշակութային և ժամանցային սպասվող իրադարձությունների մասին տեղեկատվություն:

2013 թվականին նախատեսվող միջոցառումները

Հիմնախնդիր. PR գործոնի պակասը, Երևանի բրենդինգի բացակայությունը:

Հանդիսանալով տնտեսության գերակա ճյուղ՝ զբոսաշրջության կենտրոնի, մեծ ուշադրություն է դարձվում Երևան որպես բրենդ աշխարհին հասանելի դարձնելու Երևանը որպես բրենդ աշխարհին հասանելի և ընկալելի դարձնելու անհրաժեշտությունը: Ոլորտի զարգացման և առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված նախատեսվում է նախաձեռնել և իրականացնել են մի շարք միջոցառումներ և ծրագրեր:

Երևան քաղաքի զբոսաշրջային գլխավոր պլանի (Master Plan) մշակում: Այն իրենից ներկայացնելու է Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման առաջիկա 3-5 տարիների տեսլականը: Աշխատանքների իրականացման հարցում նախատեսվում է ներգրավել միջազգային փորձագետների, որի շրջանակում նախնական փուլում կանցկացվի հետազոտություն: Արդյունքում կդիտարկվի Երևանի զբոսաշրջային մրցունակության ներուժը, զարգացման միտումներն ու դրան ուղղված քայլերը:

Հիմնախնդիր. հանգստի գոտիների ոչ պատշաճ մակարդակ:

Հարմարավետ և բարեկարգ հանգստի գոտիների առկայությունը խիստ կարևոր է ոչ միայն բնապահպանական տեսանկյունից, այլ նաև այն անմիջական ազդեցություն ունի զբոսաշրջության զարգացման գործում: Այդ ուղղությամբ մեծածավալ աշխատանքներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի կողմից և կկրեն շարունակական բնույթ, մասնավորապես կանաչապատվել և բարեկարգվել են մայրաքաղաքի բազմաթիվ փողոցներ, այգիներ ու պուրակներ, քաղաքը հարստացել է քաղաքային կահավորման էլեմենտներով /Երևան գրվածքով նստարաններ, “Մեր հանճարները մեր կողքին” ծրագրի հայտնի մարդկանց ինստալյացիաները, ապահովելով ոչ միայն բնակիչների, այլ նաև մայրաքաղաքի հյուրերի հանգիստը և ժամանցը:

Հիմնախնդիր. Երևանը Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայությունը:

Միջազգային ցուցահանդեսներում Երևան քաղաքի մասնակցություն: Այս ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է շահագրգիռ սուբյեկտների ներգրավում (պետական-մասնավոր հատվածի համագործակցություն), ինչը կնպաստի Երևանի զբոսաշրջային արդյունքի ներկայացմանն ու խթանմանը արտերկրյա շուկայում: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է հետևյալն 10 000.0 (տաս միլիոն) ՀՀ դրամ:

Հիմնախնդիր. տեղեկատվական միասնական կենտրոնի /i-pointe-երի/ բացակայություն:

Տեղեկատվական կենտրոնի ստեղծում: Առկա հիմնախնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է հիմնել զբոսաշրջային մեկ միասնական տեղեկատվական կենտրոն, որը զբոսաշրջիկներին կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն ճանապարհորդության տարբեր հարցերի, երթուղու, զբոսաշրջավայրերի և այլնի վերաբերյալ: Տեղեկատվական կենտրոնի ստեղծումը կնպաստի Երևան այցելած զբոսաշրջիկների իրազեկության բարձրացմանը և ինքնակողմնորոշմանը: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 5 000.0 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գովազդային հոլովակ (ֆիլմ): Երևանի զբոսաշրջային գրավչությունները պահանջարկի շուկաներում ներկայացնելու և զբոսաշրջիկներին անհրաժեշտ ու ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովելու գովազդելու նպատակով նախատեսվում է պատրաստել գովազդային հոլովակներ (ֆիլմ) և ընդլայնել դրանց տարածման աշխարհագրությունը: Ծրագրի իրականացումը նախատեսում է 3 000.0 (երեք միլիոն) մլն ՀՀ դրամ:

Հիմնախնդիր. զբոսաշրջիկին անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության խնդիր տուրիստական քարտեզների բացակայությունը:

Երևան քաղաքի զբոսաշրջային քարտեզների և բուկլետների ստեղծում: Ինչպես ներքին, այնպես էլ ներգնա զբոսաշրջության ծառայությունների առկա մակարդակը բարձրացնելու և տեղեկատվությունը զբոսաշրջիկին մատչելի դարձնելու նպատակով նախատեսվում է կազմակերպել զբոսաշրջային քարտեզների և բուկլետների տպագրություն: Զբոսաշրջային արդյունքը կիրացվի թիրախային կետերում (օդանավակայան, հյուրանոցներ, դեսպանատներ, սրճարաններ, ռեստորաններ և այլն) և կապահովվի ցանկալի արդյունք: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 2 000.0 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

Երևան քաղաքի իմիջային և երիտասարդական ուղեգրքեր: 2011թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տպագրած Երևան քաղաքի իմիջային և ժամանցային երիտասարդական պաշտոնական ուղեգրքերի զբոսաշրջային ուղեգրքերը մեծ հետաքրքրություն էին առաջացրել շուկայում: Կարևորելով ուղեգրքերի նշանակությունը և հիմնվելով առկա պահանջարկի վրա՝ Հայաստանի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջև լեզվաբանական ծրագրի համագործակցության շրջանակում

նախատեսվում է համատեղ իրականացնել վերոնշյալ ուղեգրքերի ներկայացումը ֆրանսերեն լեզվով: Այս ծրագրի իրականացումը կնպաստի աշխարհում ֆրանկախոս երկրներում Երևանի վերաբերյալ տեղեկտվության պատշաճ մատուցմանը և Երևան քաղաքի գովազդի տարածմանը:

Հիմնախնդիր. մայրաքաղաքում զբոսաշրջիկների տեղեկացվածության և տեղանքում ինքնակողմնորոշման հնարավորությունների բացակայությունը:

Զբոսաշրջիկի՝ տեղանքում ինքնակողմնորոշումը բարձրացնելու, քաղաքային անհրաժեշտ ենթակառուցվածքներից օգտվելու մատչելիությունը ապահովելու համար կտեղադրվեն ճանապարհային և տեղեկատվական նշաններ Երևան քաղաքում և հարակից վայրերում:

Շարունակյալ բնույթ է կրելու «Երևան Միթի Տուր» զբոսաշրջային ծրագիրը: Այն մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների համար: Էքսկուրսիոն ծրագիրը նախատեսված է հասարակության լայն շերտի համար, քանի որ ավտոբուսներում գործով աուդիոգիդ համակարգը (6 լեզուներ) հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին և քաղաքացիներին միաժամանակ ծանոթանալու Երևանի տեսարժան վայրերին՝ իրենց նախընտրած լեզվով: Ինչպես արդեն ներկայացվել էր, 2011թ. տոն և հիշատակի օրերին նվիրված, ինչպես նաև առանձին դեպքերում. պարբերաբար անցկացվել էին անվճար ակցիաներ: Այս ծրագիրը ևս կրելու է շարունակյալ բնույթ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամներին:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Վիճակի բնութագիր

	ք. Երևան
Ուսումնական հաստատություններ	2
Մարզական միություններ	4
Մարզական ակումբներ	12
Լողավազաններ	14
Ֆուտբոլի մարզադաշտեր	11
Թենիսի կորտեր	24
Հրաձգարաններ	3
Ստադիոններ	5
Մարզադահլիճներ	37
Հավաքական թիմերի ուսումնամարզական կենտրոն	1
Աթլետիկական մանեժ	1

	ք. Երևան
Թիավարության ու վինդսերֆինգի ջրամբարներ	3
Հեծանվահրապարակ	1
Մարզամշակութային կենտրոններ	2
Նետաձգարան	1
Զիարշավարան	1
Բազմաֆունկցիոնալ փոքր դաշտեր	50
Պարզ տիպի մարզահրապարակներ	120
Մարզադպրոցներ	54
Մարզադպրոցներ (Երևան համայնք)	25
Մարզամշակութային կենտրոն (Երևան համայնք)	2
Մարզատեխնիկական կենտրոններ	1

Երևան քաղաքում մարզական նշանակալի կառույցներ են՝ «Հրազդան» մարզադաշտը, Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտը, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը, Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տունը, շախմատի ակադեմիան, Ֆուտբոլային ակադեմիան, «Միկա», «Գրանդ սպորտ», «Օրանժ ֆիտնես» մարզական ակումբները, Հայաստանի մարզական միության «Սպարտակ» մարզահամալիրը, ՀՀ ոստիկանության «Դինամո» մարզահամալիրը, ձիասպորտի կենտրոնը, հավաքական թիմերի մարզական կենտրոնն ու հեծանվահրապարակը:

Երևանում գործող ուսումնական հաստատություններն են՝ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտն ու Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը:

Երևանում տեղակայված են՝ «Մարզաձևերի զարգացման նպատակով պետական աջակցություն ՀՀ մարզական ֆեդերացիաներին» ծրագրում ընդգրկված 30 և հիշյալ ծրագրում չընդգրկված մարզական 57 այլ ֆեդերացիաներ, հասարակական մարզական 15 կազմակերպություններ, հաշմանդամների մարզական 5 կազմակերպություններ:

Երևան համայնքի ենթակայությամբ գործում են գեղարվեստական և սպորտային մարմնամարզության, ակրոբատիկայի, խաղային մարզաձևերի, թենիսի, շախմատի, մարզատրամպանական խաղերի, սուսերամարտի, ըմբշամարտի և աթլետիկայի ուսումնամարզական խմբեր:

2012 թվականին իրականացված ծրագրեր

2012թ. անցկացվել են համայնքային առողջարարական, զանգվածային ու երիտասարդական միջոցառումներ, այդ թվում՝ «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» վեց մարզաձևերից բաղկացած համաքաղաքային բակային ավանդական փառատոնը և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամներին հասարակությանը ինտեգրելու նպատակով անցկացվող «Պարալիմպիկ սպարտակիադա»:

2012 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են մարզաառողջարարական միջոցառումներ, մասնավորապես Երևանի քաղաքապետի մրցանակների համար:

Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակների համար անցկացվող մարզական մրցույթներին ապահովվել է մայրաքաղաքի ներկայացուցիչների մասնակցությունը:

Կազմակերպվել և անցկացվել են Երևան քաղաքի առաջնություններ 30 մարզաձևերից:

Երևան քաղաքի հավաքական թիմերի ձևավորման, հանրապետական ու միջազգային մրցումներին և մրցաշարերին, այդ թվում 2013թ. կայանալիք Համահայկական միջանկյալ խաղերին հավաքական թիմերի մասնակցությունն ապահովելու իրականացվել է համապատասխան ծրագիր:

Ելնելով քաղաքի համաչափ զարգացումից, ինչպես նաև սպորտի միջոցով հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելու, սպորտային ծրագրերը անապահով խավերին հասանելի դարձնելու նպատակով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչությունը, Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող CIUDAD (Քաղաքային զարգացման և երկխոսության համագործակցություն) ծրագրի շրջանակում, իրականացնում է GOSPEL՝ «Սպորտի կառավարումը որպես սոցիալական կապ» ենթածրագիրը:

Ծրագրի շրջանակում կազմակերպվել են մի շարք տեխնիկական աշխատանքային հանդիպումներ: Քննարկվել է Շենգավիթ վարչական շրջանի թիվ 52 դպրոցի մարզահրապարակի վերանորոգման հետ կապված պիլոտային ծրագիրը: Բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել ֆինանսավորել մարզահրապարակի վերանորոգման ծրագիրը: 2012-2013թթ. ժամանակաշրջանի համար Երևան քաղաքին տրամադրվել է 74.540 Եվրո՝ ծրագրի շրջանակում միջոցառումների և մարզահրապարակի վերանորոգման հետ կապված ծախսերը հոգալու նպատակով:

Սոցիալական այս ծրագիրն ունի բազմակողմ ուղղվածություն: Այն ընդգրկում է հասարակության լայն շերտեր և ուղղված է ոչ միայն դպրոցի կարիքները հոգալուն, այլ նաև վարչական շրջանի բնակչության պահանջմունքների բավարարմանը: Նախատեսվում է կյանքի կոչել կառավարման մի մոդել, որով կապահովվի մարզահրապարակի պահպանությունը, անվտանգությունը և այլ հարցեր: Մշակվել է Ծրագրի իրականացման մոդել և էսքիզ:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

Առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված 2013թ. կշարունակվեն իրականացվել դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպման ծրագրեր: Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել 21-րդ մարզական խաղեր, մանկավարժների խրախուսում, «Ազգային ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հոբբիյանական միջոցառումներ:

Հրազդանի կիրճում մարզաառողջարարական երիտասարդական համալիր կենտրոնի նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ու կառուցման (ծրագիրն ընդգրկված է Երևանի գլխավոր հատակագծում), «Երևանի գեղասահքի ու տափօղակով հոկեյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման, ինչպես նաև «Հրազդան» մարզադաշտում աթլետիկական վազքուղու և մայրաքաղաքում աթլետիկական միակ մասնագիտացված կառույցի՝ «Մպարտակ» մարզադաշտի վերանորոգման նպատակով աշխատանքներ են տարվելու ներդրողների հետ համատեղ ծրագրերի իրականացման և ժամանակացույցների մշակման ուղղությամբ:

Հիմնախնդիր. լայն զանգվածների համար մատչելի մարզաքաղաքների բացակայությունը:

2013 թվականի կշարունակվի GOSPEL՝ «Մարտի կառավարումը որպես սոցիալական կապ» ենթածրագիրը ուղղված Շենգակի վարչական շրջանի թիվ 52 դպրոցի մարզահրապարակի վերանորոգմանը:

Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ Վիճակի բնութագիր

Երիտասարդության ոլորտի իրավական նորմատիվային միակ փաստաթուղթը երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգն է, որը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները: Մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունեն հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները: ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված ՀԿ-ների հիսուն տոկոսը երիտասարդական են, կամ զբաղվում են երիտասարդության խնդիրներով, դրանց մեծամասնությունը գործում են Երևան քաղաքում:

Երիտասարդական կենտրոնները գործում են որպես ռեսուրս կենտրոններ, որտեղ մայրաքաղաքի սոցիալապես անապահով երիտասարդները, երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ուսանողները, երիտասարդների առանձին խմբեր՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված, զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված անձինք, ինչպես նաև երիտասարդ հաշմանդամները հնարավորություն կունենան օգտվել բազմաբնույթ ծառայություններից (իրավաբանական և առողջապահական խորհրդատվություն, համակարգչային ծառայություններ և այլն), ինչպես նաև արդյունավետ կազմակերպել ազատ ժամանցը:

2012 թվականին իրականացված ծրագրեր

2012թ. իրականացվել են մարզաառողջարարական շարունակական աշխատանքներ Երևանի զբոսայգիներում: Իրականացվել են աշխատանքային ծրագրով նախատեսված հետևյալ միջոցառումները՝ աթլետիկա, շաշկի, շախմատ, վոլեյբոլ, ռենձյու, հանդբոլ՝ մարզաձևերից Երևան քաղաքի առաջնություններ, պարաօլիմպիկ սպարտակիադա՝ հաշմանդամ մարզիկների մասնակցությամբ:

Արեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված իրականացվել է մարզահամերգային տոնահանդես՝ 12 վարչական շրջաններում հաղթած մանկապարտեզների թիմերի մասնակցությամբ:

«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի շրջանակում հուլիս-սեպտեմբեր ամիսներին անցկացվել են Ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, հանդբոլի, մարզատրամպանական խաղեր, հեծանվավազք, որին մասնակցել են Երևանի 12 վարչական շրջանների թիմերը:

Տարվա ընթացքում անցկացվել են սեղանի թենիսի Երևան քաղաքի 2012թ. երիտասարդական սիրողական առաջնությունը, ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մարզական ստուգատեսի երևանյան փուլը, և ապահովվել է փուլի հաղթողների մասնակցությունը հանրապետական եզրափակիչ փուլին:

Հայաստանի Հանրապետության Անկախության, «Էրեբունի-Երևան 2794» տոնակատարությունների շրջանակներում կազմակերպվել են մարզական և երիտասարդական միջոցառումներ, արշավներ, մրցաշարեր:

Հիմնախնդիր. կամավորական շարժման զարգացումը դեռևս տարերային բնույթ է կրում:

«Մոսկվայի օրերը Երևանում» միջոցառման շրջանակում անցկացվել է կամավորական շարժման ուղղությամբ երիտասարդական ֆորում և ծառատունկ՝ «Բարեկամության ծառուղի» հայ-ռուսական համալսարանի պուրակում: Մոսկվա և Երևան քաղաքների երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են «Երիտասարդական դիվանագիտության զարգացումը՝ խաղաղ ապագայի երաշխիք» խորագրով երիտասարդական հանդիպման ծրագրով նախատեսված միջոցառումներ (կլոր սեղան Մոսկվայի տանը, հանդիպում-համերգ Ավետիք Բասիակյանի անվան կենտրոնական գրադարանում, այցելություն Երևան քաղաքի պատմության թանգարան և այլն), ինչպես նաև «Սանկտ Պետերբուրգի օրերը Երևանում» միջոցառման շրջանակում՝ շախմատի մրցաշար, վարպետության դաս Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը:

2013թ. նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Երիտասարդների իրավաքաղաքական իրազեկվածության, աշխատանքային, սոցիալական խնդիրների ուսումնասիրման, առաջարկությունների, ծրագրերի քննարկման նպատակով՝ կստեղծվեն Երևանի բուհերի ուսանողական խորհուրդների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների և համակարգի աշխատողներից կազմված աշխատանքային խմբեր:

Հիմնախնդիր. բավարար համագործակցություն չի ծավալվում մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ:

Այս հիմնախնդրի լուծմանն ուղղված 2013 թվականին կկազմակերպվի հաշմանդամություն ունեցող երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսներ: Ծրագիրը կիրականացվի հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով:

Հիմնախնդիր. երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության, համամարդկային և ազգային մշակույթի նկատմամբ բարձրաճաշակ պատկերացումների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները պատշաճ մակարդակի վրա չեն գտնվում:

2013 թվականին համամարդկային և ազգային մշակույթի նկատմամբ բարձրաճաշակ պատկերացումների ձևավորմանն ուղղված միջոցառումների կիրականացվեն, մասնավորապես կկազմակերպվեն տաղանդավոր երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսներ, համերգներ:

Կկազմակերպվեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին երիտասարդների իրազեկության ապահովման և կանխարգելման նպատակով զանգվածային միջոցառումներ:

Ամերիկայի հայկական համագումարի ամառային ծրագրի մասնակից սփյուռքահայ ուսանողների համար կկազմակերպվեն երկամսյա երիտասարդական միջոցառումներ:

Երևանի, քույր քաղաքների և Հայաստանի Հանրապետության այլ համայնքների երիտասարդների միջև փոխհարաբերությունները խթանելու նպատակով կիրականացվեն մարզամշակութային միջոցառումներ:

Երևան, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ քաղաքների քաղաքային իշխանությունների համագործակցության շրջանակներում կանցկացվեն երիտասարդական երկխոսությանը, կամավորական շարժմանը, երիտասարդական համատեղ ծրագրերի քննարկմանը և իրագործմանն ուղղված միջոցառումներ:

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը մասնավոր հատվածի հետ ակտիվ համագործակցություն է իրականացրել քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում: Աշխատանքներն ուղղված են եղել ինչպես առկա հիմնախնդիրների լուծմանը, այնպես էլ նոր ետխնդիրների ներդրմանը:

Նորագույն տեխնոլոգիաների ներդրում

Քաղաքային տնտեսության կառավարման կատարելագործմանն ուղղված բարեփոխումների շրջանակում Երևանի քաղաքապետարանը և «Յուքոմ» ընկերությունը 2012 թվականին ավարտեցին առաջին համատեղ նախագիծը: Ծրագիրն ուղղված էր դպրոցների՝ նոր տեխնոլոգիաներով վերազինմանը:

Կարևորելով մայրաքաղաքի համաչափ զարգացման քաղաքականությունը՝ անվճար ինտերնետի (WiFi) ապահովման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ և իրականացվելու է վարչական բոլոր շրջանների մարդաշատ վայրերում, մասնավորապես այգիներում ու պուրակներում:

Համագործակցության ընդլայնման, սփյուռքի և Երևանի դպրոցականների, ինչպես նաև ուսուցիչների միջև շփման նոր հարթակի ձևավորման, փորձի փոխանակման ու համատեղ այլ ծրագրերի իրականացման համար ստորագրվել է համագործակցության հուշագիր, որով ընկերությունը մայրաքաղաքի մի քանի դպրոցներում կատարելու է համապատասխան ներդրում՝ ապահովելով տեխնիկապես հագեցած լսարաններ:

Երևանի քաղաքապետարանը «Յուքոմ» ընկերության հետ համատեղ քաղաքապետարան-մասնավոր հատված համագործակցության շրջանակում նախատեսում է նոր ծրագրեր իրականացնել՝ ուղղված մայրաքաղաքի զարգացմանն ու բարեկեցության ապահովմանը:

Քաղաքային տնտեսության մեջ կառավարման տեխնոլոգիաների ոլորտում կատարելագործմանն ուղղված բարեփոխումների և նոր ծրագրերի շուրջ համագործակցությունն ուղղված է Երևանի բնակիչների, ինչպես նաև մայրաքաղաքի հյուրերի համար քաղաքն առավել հարմարավետ դարձնելու ծրագրերին:

2012թ. Երևանի քաղաքապետարանի և «Օրանժ Արմենիա» ընկերության միջև համագործակցության արդյունքում հաջողությամբ իրականացվեց Երևանի ավտոբուսներում անվճար Wi-Fi տեղադրելու պիլոտային ծրագիրը: Նախատեսվում են նոր համատեղ ծրագրերի իրականացում:

Ծրագիրը շարունակելու և ընդլայնելու նպատակով նախատեսվում է քաղաքային տրանսպորտում տեղադրված համակարգերի թիվը մինչև տարեվերջ հասցնել 255-ի:

«Գեղեցիկ Երևան» ծրագիր

Երևանի քաղաքապետարանի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից համատեղ իրականացվում է «Գեղեցիկ Երևան» ծրագիրը: Այս ծրագրի նպատակն է քաղաքը դարձնել ավելի հարմարավետ: Այն ուղղված է Երևանի բնակչության բարեկեցության բարձրացմանը:

«Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակում 2012 թվականին իրականացվել են Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի շենքի արտաքին գեղարվեստական ձևավորման և լուսավորման, Երևան քաղաքի Մայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի շենքի բարեկարգման և լուսավորման, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան ճակատային հատվածի լվացման և դեկորատիվ որմնանկարների

վերականգնման, Սայաթ-Նովա պողոտայի հ.13 և հ.15 շենքերի միջակայքում գտնվող կամարաձև կառույցի գեղազարդ բարեկարգման, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շենքի և հարակից բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Ծրագրի 2012թ. Ֆինանսական միջոցներով նախատեսվում է նաև իրականացնել Հանրապետության և Շառլ Ազնավուրի հրապարակներում գտնվող շատրվանների ձմեռային գեղազարդ լուսավորության աշխատանքները:

Հավասար բաշխմամբ համաֆինանսավորման սկզբունքով 2011-2012թթ. ընթացքում Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի լայնածավալ և արդյունավետ համագործակցության արդյունքում, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, «Գեղեցիկ Երևան» ծրագիրը կկրի շարունակական բնույթ:

2013թ. ընթացքում ծրագրի շրջանակում կիրականացվեն 140.0 մլն ՀՀ դրամ (որից՝ 70 մլն ՀՀ դրամ՝ Երևանի 2013 թվականի բյուջեի միջոցների հաշվին) ընդհանուր արժողությամբ աշխատանքներ, որոնք ուղղված կլինեն Երևանի վարչական շրջաններում այգիների, շատրվանների, անբարեկարգ տարածքների բարեկարգմանը, գեղարվեստական ձևավորմանը, արտաքին լուսավորությանը և այլ խնդիրների լուծմանը:

«Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակում ստեղծվել է iyerevan.am կայքէջը, որը նոր հարթակ է մայրաքաղաք Երևանի բարեկարգմանն ուղղված ծրագրերի մշակման, քննարկման և իրականացման համար՝ ստանալով քաղաքացիների առաջարկները և ծանոթանալով նրանց տեսակետներին ու կարծիքներին: Կայքը նաև հնարավորություն է ընձեռում տեղեկանալ քաղաքային տնտեսության բարելավմանը, կրթական, մշակութային, սոցիալական և այլ խնդիրների լուծմանն ուղղված նախագծերին և, նվիրատվությունների միջոցով, աջակցել դրանց իրագործմանը՝ սեփական ներդրումն ունենալով Երևանի համաշափ զարգացման գործում:

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիր

2012թ. հաստատվել է «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիրը, որը կմեկնարկի 2013 թվականին Գլոբալ էկոլոգիական ֆոնդի (ԳԵՖ) կողմից ծրագրի վերջնական հաստատումից հետո:

Սույն ծրագրի նպատակն է նպաստել լուսավորման էներգաարդյունավետ սարքերի և տեխնոլոգիաների ներդրմանն ու կիրառմանը հանրային, առևտրային, հասարակական ոլորտներում, ինչպես նաև բնակարաններում շիկացման լամպերի և լուսավորման այլ հնացած տեխնոլոգիաների կիրառման աստիճանական դադարեցմանը՝ այդպիսով նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները:

Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև ներգրավելով կառավարական այլ կառույցների, պետական և մասնավոր շահագրգիռ կողմերի, ԲՈԻՀ-երի և տեխնիկական ինստիտուտների, էներգաարդյունավետության կենտրոնների, լաբորատորիաների, ՀԿ-ների և այլնի:

Քաղաքային տնտեսության բարեկարգման ծրագրեր

Երևանի քաղաքապետարան-մասնավոր հատված համագործակցության շրջանակում 2012թ. «ՎՏԲ Հայաստան» բանկի աջակցությամբ վերագործարկվել են Գլխավոր պողոտայի Մաշտոցի պողոտա և Սարյան փողոցի միջնամասում գտնվող այգու շատրվանները:

Համագործակցությունը կրելու է շարունակական բնույթ և 2013 թվականին «ՎՏԲ Հայաստան» բանկը ու «Բնգո Արմենիա» ապահովագրական ընկերությունը պատրաստակամություն են հայտնել քաղաքապետարանի կողմից այգիների և շատրվանների բարեկարգման ծրագրերի շրջանակում մասնակցություն ունենալ Գլխավոր

պողոտայի Նալբանդյան և Հանրապետության փողոցների միջև ընկած հատվածը կանաչապատելու և շատրվանները բարեկարգելու աշխատանքներում: Այդ համատեքստում ներկայացվել են նաև վերոնշյալ հատվածի բարեկարգման նախնական էսքիզները:

2012 թվականին մասնավոր հատվածի հետ համագործակցության միջոցով իրականացվել են մայրաքաղաքի մի քանի ջրային կառույցների վերանորոգման և վերագործարկման աշխատանքներ: Մասնավոր հատվածի միջոցներով կատարվել են ինչպես Գլխավոր պողոտայի շատրվանների, այնպես էլ Շարլ Ազնավուրի հրապարակի («Մոսկվա կինոթատրոնի հարևանությամբ») և Օդակաձև այգում շատրվանների նորոգման աշխատանքներ:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Վ ի ճ ա կ ի ք ն ու թ ա գ ի ր

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում 7 միջազգային կազմակերպությունների՝ ունենալով լայն պայմանագրային դաշտ և համատեղ իրականացվող ծրագրեր: Վերջին շրջանում ծավալվող համագործակցությունը ամրապնդվում է 3-4 տարվա կտրվածքով: Երևան քաղաքը համագործակցության լայնածավալ ծրագրեր է իրականացնում օրինակ Մոսկվայի, Լիոնի, Դոնի Ռոստովի, Սանկտ-Պետերբուրգի և այլ քաղաքների հետ:

2012 թվականին իրականացված ծրագրեր

2012թ. ընթացքում ընդլայնվել կամ նոր գործընկերային հարաբերություններ են հաստատվել եվրոպական, ասիական և ԱՊՀ տասնյակ քաղաքների և տարբեր կազմակերպությունների հետ՝ ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների Միջազգային Ասամբլեայի, Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի /AIMF/, Միջազգային քաղաքային համայնքների Լուսավորում ասոցիացիայի /LUCI/, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի /EUROCITIES/, Եվրոպական Հանձնաժողովի կողմից իրականացվող CIUDAD ծրագրի GOSPEL ենթածրագրի, Եվրոպական խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների Կոնգրեսի, “Ստրասբուրգի բարեկամ քաղաքների ակումբի”, Համաշխարհային Ժառանգության քաղաքների կազմակերպության և այլն: Երևանը նույնպես միացել և միանում է տարբեր ուղղվածություն ունեցող միջազգային նախաձեռնություններին և հոշակագրերին:

2012թ. ընթացքում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել մի շարք քաղաքների /Վիեննա, Էլ-Քուվեյթ, Լիոն/ հետ համագործակցության պայմանագրեր կնքելու, կապեր հաստատելու ու խորացնելու, փոխայցելություններ իրականացնելու ուղղությամբ:

Համագործակցությունը ընթանում է հետևյալ ոլորտներում՝ առևտրա-տնտեսական, գիտա-տեխնիկական, հումանիտար. առանձին ուշադրություն է դարձվել փորձի փոխանակմանը, ներդրումների խրախուսմանը, համատեղ քաղաքաշինական, սոցիալական, մշակութային, սպորտային ծրագրերի և միջոցառումների իրականացմանը և այլն:

Կնքված համագործակցության ծրագրերի շրջանակներում առավել հատկանշական էին երկու մշակութային միջոցառման անցկացում՝ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգ քաղաքի օրերը Երևանում: Երևան-Մոսկվա ծրագրային համագործակցության ներքո Մոսկվայում Երևանի քաղաքապետարանի ներակայացուցչության հետ համատեղ կազմակերպվել էր «Ոսկե նուռ» փառատոնը: Ոչ պակաս կարևոր իրադարձություն էր Երևանը 2012թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու միջոցառումը, որին մասնակցեցին Երևանի մի շարք գործընկեր-քաղաքների պատվիրակություններ՝ Բուենոս-Այրեսից, Սպահանից, Մինսկից, Վենետիկից, Բեյրութից, Միլանից, Բանգկոկից:

Առավել ակտիվացել են փոխհամագործակցությունը հարևան Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքների հետ: Պայմանավորվածություն է ձեռքբերվել փորձի փոխանակման նպատակով փոխայցելություններ կազմակերպել Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների համար: 2012թ. նոյեմբերին կկայանա առաջին այցը Թեհրան: Շարունակվում են աշխատանքները Սպահան և Շիրազ քաղաքների հետ՝ առկա համագործակցությունը ակտիվացնելու և զարգացնելու նպատակով:

Տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքներ տնկիների, թփերի և բույսերի ներկրման ուղղությամբ:

Ակտիվացել են նաև փոխհամագործակցությունը Ֆրանսիայի մի շարք քաղաքների հետ՝ մասնավորապես Մարսելի, Փարիզի, Լիոնի, Նիցցայի, Պլեսի-Ռոբինսոնի և Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի հետ:

2012թ. հունիսին Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակությունը Մարսելի քաղաքապետի հրավերով մեկնեց Մարսել՝ երկու քաղաքների բարեկամության և համագործակցության 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը մասնակցելու նպատակով: Այցի ընթացքում հանդիպումներ են եղել Մարսելի քաղաքապետի, Մարսելի քաղաքային համայնքի նախագահի, ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչների հետ: Այցի շրջանակում ձեռքբերված պայմանավորվածության համաձայն Երևանի քաղաքապետարանը Մարսելի քաղաքային համայնքին և Մարսելի քաղաքապետարանին են ներկայացրել կրթության, մշակույթի և ներդրումային ոլորտների վերաբերյալ առաջարկություններ:

2012թ. հուլիսին Երևանի քաղաքապետը հանդիպեց մասնավոր այցով Երևանում գտնվող Մարսելի փոխքաղաքապետ Դ.Փարաքյանի հետ: Քննարկվել է բժշկական պարագաներով մեկ կոնստեյներ Երևան ներմուծման, Երևանի որևէ դահլիճի վերանորոգման, մանկապարտեզի, դպրոցի կամ հիվանդանոցի աջակցության հարցը:

2012թ. սեպտեմբերի 25-ին Երևանի քաղաքապետը հանդիպել է Մարսելից ժամանած ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Բ.Հոլայանի և իր գլխավորած գործարարների պատվիրակության հետ: Մարսելցի գործարարները Երևան էին ժամանել «Երկրները մեկ հարկի տակ» փառատոնին մասնակցելու նպատակով: Կարևորվել է Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությունը քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում երկուստեք ներդրումային ծրագրերի իրականացման հարցը:

2012թ. սեպտեմբերի 28-29-ը Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակության ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտ կատարած այցի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ ԼՂՀ նախագահ Բ.Սահակյանի և Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանի հետ: Այցի շրջանակներում ստորագրվեցին Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև բարեկամության մասին համաձայնագիրը և 2012-2014թթ. համագործակցության ծրագիրը, այնուհետև հիշյալ փաստաթղթերը հաստատվեցին 2012 թ. հոկտեմբերի 12-ին Երևան քաղաքի ավագանու 8-րդ նստաշրջանի արտահերթ նիստում:

Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2012-2014թթ. համագործակցության ծրագրով նախատեսված աշխատանքները պատշաճ կերպով իրականացնելու նպատակով՝ Երևանի քաղաքապետի 24.10.2012թ. հ.650-Ա կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: 2012 թ. նոյեմբերի 1-3-ը ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտ գործուղվեց Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը իրավաբանական վարչության պետի գլխավորությամբ: 2012թ. նոյեմբերի 7-ին տեղի ունեցավ աշխատանքային խմբի առաջին նիստը, որի ընթացքում քննարկվեց հետագա կատարվելիք աշխատանքների պլանավորումը:

Էրեբունի-Երևան 2794 միջոցառման շրջանակում Երևան էր ժամանել Մարսելի 13-րդ և 14-րդ թաղամասերի քաղաքապետ Գ.Հովսեփյանը: Այցի ընթացքում Ավան վարչական շրջանի և Մարսելի 13-րդ և 14-րդ թաղամասերի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Արտաքին կապերի ոլորտում վերջին տարիների ընթացքում ակտիվացել են նաև երկկողմ փոխայացելությունները տարբեր ձևաչափերով: Ակտիվ հարաբերությունների վկայությունն է «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը մասնակցելու նպատակով Երևան ժամանող պատվիրակությունների թվաքանակը: Միջազգային համագործակցությունը

ընդլայնվել է ինչպես բովանդակային մասով, այնպես էլ աշխարհագրությամբ: Էրեբունի-Երևան 2794 տոնակատարությանը մասնակցություն ցուցաբերելու նպատակով Երևան են ժամանել Թբիլիսի, Դոնի Ռոստով, Սանկտ-Պետերբուրգ, Մոսկվա, Կրասնոդար, Վոլգոգրադ, Ստավրոպոլ, Կալինինգրադ, Ռիգա, Մինսկ, Կիև, Խարկով, Օդեսա, Քիշնև, Սպահան, Շիրազ, Վիեննա, Պեզարո, Բելյուր, Պոդգորիցա, Համբուրգ, Պլեսի Ռոբինսոն, Մարսել, Նից, Քեմբրիջ քաղաքների պատվիրակությունները (ընդամենը 25 պատվիրակություն):

Էրեբունի-Երևան 2794 տոնակատարությանն իր մասնակցություն է ունեցել նաև Ֆրանսիայի Պլեսի-Ռոբինսոնի փոխադաքսպետի գլխավորած պատվիրակությունը: Այցի շրջանակում հանդիպում է կայացել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել կատարել նվիրատվություն 100 աթոռ «Լև Պլեսի-Ռոբինսոն» մանկապարտեզին և 50 աթոռ ու գրենական պիտույքներ հ. 24 մանկապարտեզին:

2011թ. ապրիլին ստորագրված համաձայնագրով համագործակցություն է սկսվել Իլ դը Ֆրանսի Շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև: Համագործակցության շրջանակում Երևանի քաղաքապետարանում է գտնվում Իլ դը Ֆրանսի Շրջանային խորհրդի ներկայացուցիչը:

Քաղաքաշինության ոլորտում համագործակցություն է սկսվել G2iA ֆրանս-հայկական ասոցիացիայի հետ, որի առաջին սեմինարը նախատեսվում է 2012թ. դեկտեմբերի սկզբին:

Տուրիզմի զարգացման և հուշարձանների պաշտպանության հարցերը քննարկելու նպատակով 2012թ. հոկտեմբերի 14-19-ը Երևան էին ժամանել Իլ դը Ֆրանսի Շրջանային խորհրդի Տուրիզմի շրջանային կոմիտեի միջազգային համագործակցության հարցերով պատասխանատուն և ճարտարապետ-փորձագետը: Համաձայնություն է ձեռք բերվել համագործակցել հետևյալ ոլորտներում.

- Կազմակերպել տուրիզմի բնագավառի աշխատակիցների վերապատրաստում:
- Տուրիզմը զարգացնելու նպատակով բացել տեղեկատվական կենտրոն, /ստեղծել տուրիզմի գրասենյակ/:
- Աշխատանքներ իրականացնել քաղաքի պատկերի /իմիջի/ զարգացման վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ուղարկել մաստեր-պլանը:
- «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի վերականգնման համար աջակցել գտնել միջազգային ֆինանսական միջոցներ:

Մշակույթի բնագավառում համագործակցություն է նախատեսվում Փարիզի պարարվեստի ազգային բարձրագույն կոնսերվատորիայի և Երևանի պարարվեստի պետական քոլեջի միջև: Համագործակցության ծրագիրը 2013թ. հունվար ամսին կդրվի շրջանային խորհրդի քվեարկությանը: Նախատեսվում է իրականացնել նաև գրողների փոխայցելությունների ծրագիր:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող CIUDAD /Քաղաքային զարգացման և երկխոսության համագործակցություն/ ծրագրի GOSPEL /Սպորտի կառավարումը որպես սոցիալական կապ/ ենթածրագիրը, որի շրջանակում կազմակերպվել են մի շարք տեխնիկական աշխատանքային հանդիպումներ, քննարկվել է Շենգակիթ վարչական շրջանի թիվ 52 դպրոցի մարզահրապարակի վերանորոգման հետ կապված պիլոտային ծրագիրը: Բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ֆինանսավորել մարզահրապարակի վերանորոգման ծրագիրը: 2012-2013թթ. ժամանակաշրջանի համար Երևան քաղաքին տրամադրվել է 74.540 Եվրո՝ ծրագրի շրջանակներում միջոցառումների և մարզահրապարակի վերանորոգման հետ կապված ծախսերը հոգալու նպատակով:

2012թ. Իսպանիայի Խիխոն քաղաքում տեղի ունեցած «Եվրոսիթիս» ասոցիացիայի «Համագործակցության հարթակ»-ի շրջանակում Երևան քաղաքը դարձել է «Եվրոպական հարևանության քաղաքականություն և ընդլայնում» աշխատանքային խմբի անդամ:

2012թ. Երևանի քաղաքապետարանն իրականացնում է Ֆրանկոֆոն քաղաքապետների միջազգային ասոցիացիայի կողմից Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ, «Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ, «Ա.Սպենդիարյանի անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» մշակութային հաստատություններին 33 000 եվրոյի ֆինանսավորվող ծրագիր: Ֆրանկոֆոն քաղաքապետների միջազգային ասոցիացիայի անդամ քաղաքների համագործակցության շրջանակում փորձի փոխանակման նպատակով ՀՀ վաստակավոր քանդակագործ Տ. Արզումանյանը մեկնեց Բենինի Հանրապետության Պորտո-Նովո քաղաք:

2012թ. փետրվարի 2-ին Երևանի քաղաքապետարանում հանդիպում է տեղի ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության /ՖՄԿ/ և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների միջև: ՖՄԿ-ի լեզվաբանական ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի կողմից կազմվել և ՖՄԿ-ին են ներկայացվել ծրագրային առաջարկություններ կրթության, մշակույթի և տուրիզմի ոլորտների վերաբերյալ:

2012թ. հունիս և սեպտեմբեր ամիսներին հանդիպումներ են ունեցել Զարգացման ֆրանսիական գործակալության մասնագետների և քաղաքապետարանի պատասխանատուների հետ, մասնավորապես՝ քաղաքապետի տեղակալներ Կ.Արեյանի և Վ. Նիկոլյանի: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջարկների փաթեթ՝ ներկայացնել, մասնավորապես՝ ոռոգման ցանցի և ֆունկցիոնալ կանաչ տարածքների ընդլայնման և բարելավման, հասարակական տրանսպորտի, ջրամատակարարման ու ջրահեռացման, ինչպես նաև վարչական շրջանների բարեկարգման ու աղբի և կոշտ թափոնների մշակման ուղղությամբ:

Ներկայում կա երկկողմ համագործակցության աճ ավելի քան 10 քաղաքների և կազմակերպությունների հետ, որոնց հետ տարվող աշխատանքները իրենց արտացոլումը կգտնեն 2013-2014թթ. ժամանակահատվածում՝ իր հիմքում ունենալով հարաբերությունների առկա մակարդակը և ծավալը: Դրանով է բացատրվում այն փաստը, որ տարեց տարի ավելանում է արտաքին կապերի ոլորտում ծավալված գործունեության համար նախատեսվող ֆինանսական միջոցների չափը:

Աճել է հետաքրքրությունը մայրաքաղաքի նկատմամբ նաև Սփյուռքի գաղթօջախներում, որը խթան է հանդիսանում նոր գործընկերներ գտնելու և արդյունավետ փոխհամագործակցություն հաստատելու համար՝ հատկապես Երևան քաղաքի ներդրումային դաշտը ընդլայնելու և նոր ֆինանսական միջոցներ ներգրավելու համատեքստում:

2013 թվականին նախատեսվող ծրագրեր

2013 թվականի ընթացքում տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ բանակցություններ կտարվեն ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ:

Կապահովվի ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցությունը և գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպումը:

Կշարունակվի և կընդլայնվի համագործակցությունը միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակում: Կոնկրետ ծրագրերի շուրջ աշխատանքներ կտարվեն սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ:

Երևան քաղաքի պատմությանը, մշակույթին և սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող տեղեկատվության ներկայացում և քաղաքի գովազդային բազայի ընդլայնում:

Գործընկեր քաղաքներից Երևան գործարար տուրերի կազմակերպման ակտիվացում:

Երևան քաղաքի՝ իբրև մշակութային խոշոր կենտրոնի ներկայացումը համաշխարհային հանրությանը:

Եղբայրության պուրակների և զբոսայգիների ծրագրերի իրականացում (Լիոնի այգի, Բուենոս-Այրեսի այգի, Հնդկաստանի այգի): 2012թ. ակտիվ քննարկումներ են եղել Հնդկաստանի դեսպանության հետ՝ Երևանի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի տարածքում Հնդկաստանի անվան այգի հիմնելու նպատակով նախատեսվում է Հնդկաստանից ճարտարապետ-դիզայներների այցելություն Երևան՝ համատեղ հնդկական այգու նախագծման աշխատանքների իրականացման նպատակով:

Վարչական շրջանների և գործընկեր քաղաքների կամ քաղաքների վարչական շրջանների միջև համագործակցության խրախուսում և ընդլայնում:

2013թ. Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև կնքած համագործակցության ծրագրի շրջանակում նախատեսվում է Երևանի օրերի անցկացումը Մոսկվայում:

Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքած համագործակցության ծրագրի շրջանակում նախատեսվում է Երևանի օրերի անցկացումը Սանկտ Պետերբուրգում:

Նախատեսվում է Երևանը Գրքի համաշխարհային մայրաքաղաք-2012 տիտղոսի փոխանցումը Թաիլանդի մայրաքաղաք Բանգկոկին:

Նախատեսվում է Շիրազի քաղաքապետարանի հետ համագործակցության համաձայնագրի ստորագրում:

Փորձի փոխանակման նպատակով փոխայցելությունների կազմակերպում Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների համար:

Նախատեսվում է Երևանի քաղաքապետի այցը Քուվեյթի Պետության Էլ-Քուվեյթ մայրաքաղաք:

Մոնրեալի և Երևանի միջև համագործակցության պայմանագրի վերաստորագում:

Մասնակցություն Քեմբրիջ-Երևան քույր քաղաքների համագործակցության 20-ամյակին նվիրված Քեմբրիջում կայանալիք միջոցառումներին:

Մշակութային ծրագրի իրականացում Սոֆիա և Երևան քաղաքների միջև:

Համագործակցության ակտիվացում «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող CIUDAD/GOSPEL ծրագրի շրջանակում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 52 դպրոցի մարզադաշտի վերանորոգման ծրագրի ավարտ, մարզադաշտի հանդիսավոր բացում, փորձի փոխանակման սեմինարների կազմակերպում, մասնակցություն ծրագրի շրջանակում գործընկեր քաղաքներում կազմակերպվող քննարկումներին և սեմինարներին:

Համագործակցության կապերի ակտիվացում արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում (Լոս Անջելես, Վենետիկ, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Պոդգորիցա, Լիոն և այլն):

Ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին:

Մասնակցություն CASCADE ծրագրի շրջանակներում իրականացվող փորձի փոխանակման հանդիպումներին:

Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2012-2014թթ. համագործակցության ծրագրի շրջանակում նախատեսվում է անցկացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Երևանի օրերը Ստեփանակերտում, մշակութային տարբեր միջոցառումներ, մասնագետների փոխայցելություններ: Միաժամանակ, նախատեսվում է աջակցություն ցուցաբերել Ստեփանակերտ քաղաքի գլխավոր

հատակագծի, Ստեփանակերտի կենտրոնում գտնվող «Ազատամարտիկների այգու» բարեկարգման նախագծի մշակման, ինչպես նաև տարբեր օրինագծերի մշակման հարցում:

Երևանի քաղաքապետարանի և Լիոնի քաղաքապետարանի և Մեծ Լիոնի միջև կնքված 2012-2014թթ. համագործակցության համաձայնագրով նախատեսվում է փորձի փոխանակում իրականացնել քաղաքային ծառայությունների, տրանսպորտի, տնտեսության և զբոսաշրջության ոլորտներում:

2013թ. 4-րդ եռամսյակին նախատեսվում է Մարսելի քաղաքապետի պաշտոնական այցը Երևան:

ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ցուցանիշներ	Չափի միավոր	2012
Բնակչության թիվը	հազ. մարդ	108791
Կրթություն		
Նախադպրոցական հաստատություններ	միավոր	16
Երեխաների թիվը	մարդ	3249/միջին/
Աշխատողների թիվը	մարդ	584
Հանրակրթական դպրոց (հիմնական՝ 15, ավագ՝ 4, միջին՝ 1)	միավոր	20
Երեխաների թիվը	մարդ	9591
Աշխատողների թիվը	մարդ	1038
Արտադրողական հիմնարկ՝ ՄՊՍԿ	միավոր	1
Երաժշտական դպրոցներ	միավոր	2
Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	միավոր	2
Մանկապատանեկան համալիր մարզադպրոց	միավոր	1
Արվեստի դպրոց	միավոր	1
Գրադարան /կենտրոնացված համակարգ 3 մասնաճյուղ/	միավոր	1
Առողջապահություն		
Առողջապահական հիմնարկներ	հատ	9
Պոլիկլինիկա	հատ	2
Վարչական շրջանի տարածքը	հա	2600
Փողոցներ	հատ	96
Փողոցների երկարությունը	կմ	78.83
Փողոցների մակերեսը	հազ. քմ	1971.0
Երթևեկելի մասի մակերեսը	հազ. քմ	851.2
Բարեկարգում		
Հանգստի կենտրոններ	միավոր / հա	4 / 19.1
Բակային խաղահրապարակներ	միավոր	35
Վերգետնյա / ստորգետնյա անցումներ	միավոր	3/1
Բնապահպանություն		
Կանաչ տարածություններ	հա	679.4
Ծաղկապատ տարածք	հա	1.5
Այգիներ, պուրակներ	հատ / հա	15 / 21
Միզամարզեր	հա	4.5
Ծառեր	հատ	33350
Ոռոգման ցանցի երկարություն	մ	19450
Առևտուր և սպասարկում		
Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	681
Բարեգործական ճաշարան	միավոր	1
Շուկաներ (Մինի-շուկաներ)	միավոր	3
Հյուրանոցներ	միավոր	5
Կոմունալ տնտեսություն		
Բազմաբնակարան շենքերի քանակը	հատ	427
Վերելակներ	հատ	311
Վթարային շենքեր	հատ	123

2012 թվականին իրականացված ծրագրեր

Կրթություն, մշակույթ, սպորտ	2012թ.
Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ (մշակութային՝ 19, կրոնական՝ 5)	14800.0 հազ. դրամ (Երևանի բյուջե)
Սպորտային՝ 4 մրցույթ	1900.0 հազ. դրամ (Երևանի բյուջե)

Առողջապահության և սոցիալական ապահովություն	2012թ.
Բուժապասարկման միջնորդագրերի տրամադրում	42 ընտանիք
«Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագրի իրականացում	3000.0 հազ. դրամ (Երևանի բյուջե)
Տոնական միջոցառումների իրականացում	3600.0 հազ. դրամ (Երևանի բյուջե)

2012 թվականին Ամանորի, Սուրբ Զատիկի, Խաղողօրհնների և Տարեցների օրվա կապակցությամբ տոնական ճաշկերույթներ են կազմակերպվել վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանի շուրջ 260 շահառուի և սոցիալապես անապահով ընտանիքի համար:

«Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագրի շրջանակում վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 1-4 դասարաններում սովորող 750 երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածուներ:

Բարեգործական ծրագրի շրջանակում վարչական շրջանի սոցիալապես անապահով 88 ընտանիքի կտրամադրվեն գազի վառարաններ:

